


Puapu

40
1978



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- * * * Կարօտալի կարօտ...
- Ս. ԽԱՆՁԱԴԵԱՆ 1971 թուական, ահառ
- Խ. ԱՍՈՅԵԱՆ Գիւնովի օրատետր
- Ս. ՓԱՆՈՍԵԱՆ Կորսուած փանփուշտ...
- Կ. ՇԱՀԻՆԵԱՆ Այսպէս խօսեցաւ վահագնը
- Ա. ԱԶՆՔԱՒՈՒՐԵԱՆ, Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Զբոյց՝ Գ. Նորիկեանի հետ
- Ա. ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Հին տուն մը
- » » » Վերջին արարողութիւն
- » » » Ներքին թշնամի
- » » » Հարուած մը կամ երկու
- » » » Տեսողութիւն
- » » » Գլխուս մէջ մրջիւններ կան
- Ռ. ԱՐԱՄԵԱՆ Գրողն արարիչ է
- » » Վերադառնանք իջափա
- » » Մտորումներ
- » » Մարդուն մարդ պահել
- Լ. ԻԿՐՏՉԵԱՆ Ալեքսանդր Զինովեի
«Սարաբայ բարձունքներ» գիրքը
- * * * Օտեան-Սիրտնի, Փանչունի-Կուրտիկեան
- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Յ. Գեղարդի
«Սիրոյ եւ մեղքի համանուագ»ը
- Յ. Պ. Ք. Պտուհեանի «Լսկոս»ը
- » » Մ. Գիւտեանի քարգմանութիւնը
- * * * Մշակութային լուրեր

Բազմ

ԱՅՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵԱՅԻ

ԾԷ. ՅԱՐԻ, ԹԻՒ 10 ՀՈՆՏԵՄԵՐ 1978 ՊԼՅՐՈՒԹ

ԿԱՐՕՏԱԼԻ ԿԱՐՕՏ...

Հիտարանչ յօդուած մը՝ Ակսել Բակունցի յիշատակին, եզրայրութեամբ լի ուրիշ մը՝ Վիլհէն Խեչուժեանի ստիժով, համարուածով գրուած երրորդ մը՝ Ռաֆայէլ Արամեանին նուիրուած:

Ասոնց կարգին՝ քանի մը ուրիշներու մասին ոչ համոռօս էջեր ստորադրած է Սերօ Խանդաղեան, արձակագիրներու եւ բանաստեղծներու, բացառաբար անոնց մասին, որոնք մեր աշխարհին բանաստեղծութեան եւ հայ մարդուն խառնուածքային էական դիժներուն տեսիլքը կրեցին եւ ձեւակերպման ասնջանքը արեւոյն շարունակ:

Ասոնց նախապէս իր առանձնացուած գործերը կարգացած ըլլալու, հաշուի տանելով միայն այլոց մասին գրուած այդ տղտիկ էջերը՝ կարելի է դիւրութեամբ պատկերացնել Խանդաղեանի գրական նախասիրութիւնները, ամբողջ աշխարհը անոր դրականութեան, զըլխաւոր հերոսը, հայ մարդը, որոնք, այդ աշխարհը եւ հայ մարդը՝ կ'ապրին իրարու ձուլուած, նոյն շնչատութեամբ, ինքնութիւններով, տառապանքներով, իրարու ձգտող տարանջատ մասերով:

Գրական հարցերու ու գէմբերու հարուադէպօրէն անդրադարձող Սերօ Խանդաղեան հայրենի գրականութեան ամէնէն բեղուն դրիշներէն է, ակէր՝ քանի աւելի հատորներու, որոնցմէ ոմանք տխուր կարգացումին միշտ եւ երբեք տխուր շիրտնցնէ իրենց շահեկանութիւնը, — «Միլիթար Սպարապետ», «Մատեան եղելութեան», «Մաքուր տեսիլ այս քաղը», «Մեծ դաշտի աստղը», «Մեւանի յուսարացը», «Նրեմ տարի 291 օր»:

Աւելի քան տասնամեակ մը առաջ, աշխարհընկայման նոյն կերպերով ողելունչ բանաստեղծ մը, Համօ Մահեան, Խանդաղեանի վերջիշխալ հատորներէն առաջին քանի մը հատը եւ անոնց հետ ուրիշներ թուելով՝ կը գրէր.

«Մարդկային ճակատագրի կենդանի պատմութիւններ են այս գրքերը: Հայրենի հողի բնաւորութեան նկարագրեր, հայրենի բնօրրանի անխուստ պատկերներ, հատուած-հատուած եւ ամբողջական Հայաստանի աշխարհ՝ իր պատմութեամբ, ներկայով, իր գոյատեւութեամբ իրաւունքով»:

Ընդգծելով ու բաժնելով Համօ Մահեանի ընդհանրացումը՝ անցնինք մասնաւորին, «1971 քուակամ, ամառ», որուն մասին քիչ անդին մէջբերուած իր խօսքը շարունակելով՝ Խանդաղեան կ'ըսէ.

«...Զարմանալի մի բան է նկատուում: Հները, որ կարծուում էին իրենց երկիրը՝ Մասանը, Մուշը, Երզնկան, Արշակերտը, Կարինը, Վանը, Եւստայը, Կիլիկիան, մի խօսքով՝ մի ամբողջ երկիր, դա հասկանալի էր: Բայց այդ կարծուը կայ եւ անլի խորն է ճշմանը քառնրի մէջ: Այդ քառնրը ծնուել են այստեղ, չեն տեսիլ իրենց պապերի ու հայ-

րեքի ծննդավայրը. նրանց կարօտը իրենց ծնողներին ու պապերի ֆիզիկական, շօշափելի կարօտը չէ, նրանց կարօտը ոգու կարօտ է, աւելի կարօտալի կարօտ»:

Ձեզիբրահուն ու շօշափելի կարօտը անարժէք ապրում մը չէ հարկաւ, բայց Փիզիբրահուն մղումներու քորտուղարները կամ շօշափելիին միայն երկրպագու միանները պէ՛տք է ընդունին, որ նոյնքան սրակ է նոսե միւսը, սլո՛ւ կարօտը, անիրաււում ժողովուրդներուն ամէնէ՛ն խոտորմնայից եւ ուժական ժաւանդութիւնը:

«Ֆազիկ»ի նախորդ թիւին մէջ, Ռոֆայէլ Արամեանին նուիրած մեր պղտիկ գրութեան առիթով յիշեցինք Խանգաղեանի մէկ բնորոշումը, իսկ Խանգաղեանի կարօտի փիլիսոփայութեան առիթով կարելի չէ չյիշել այս անգամ Ռոֆայէլ Արամեանը, որ նոյնպէս արձանագրած է սպահմանութիւն ներշնչող նոյնանման ապրում մը, «Մեռած Էպալէի պարիսպների տակ» անուն հատորին էջերուն, «Երկիր գնալ» կտարին մէջ:

«Իմ տղան, որ երկիր չի սեւել, ասում է, թէ փակ աշէնքով տեսնում է. եւ Լամի որ նա տեսնում է, աւրին, ոչինչ չեմք կարցրել»:

Անճո՛ւշտ:

Ծնորճի ոգեկան ժաւանդութիւններու տար միջնալրտին, սրուն բերումով այստեղ ծնածին եւ աշխարհ ծնածին սրտին նոյն ապրումը, աչքերուն՝ նոյն տեսիլը, ու մնացեալը՝ սո՛ւտ, հօղորդակցութեան երտիներէ զուրկ եւ ողբալիւթէն թանձրոտալա մարդոց խորեւայ մարդանք:

Ձեզիբրահուն Արեւմտեան Հայաստան այցելած կամ մտքով հոն թափառած եղան ուրիշ գրողներ եւս եւ իրենց ազաւորութիւնները արձանագրեցին զբաղան էջերու վրայ, անոնց կարգին նոսե Սերօ Խանգաղեան, ու զանի՛ մը անգամ, բայց ինչպէս ինք եւս կը շեշտէ, «1971 Բուսակամ, ամառը բոցառիկ ուժով մը եկաւ ուշաբէս, օժտուած՝ քիչ բուռերով շատ ըսելու դարձմանով ուժականութեամբ մը, տ՛իւնքան՝ որ այլ պղտիկ ասարձութեան վրայ շարժումի ելած են մեծ ժամանակի մը բոլոր զգայութիւնները, բոլոր գործօններուն կենդանի մասնակցութեամբ: Գահճիներուն ետանդը, Ֆետայիներուն հակահարուածը, Ջորջը, կորուստը, սոսիսին մէջ՝ հողուպիւտ մարդիւր, անմեղներուն մէջ՝ հպարտալիւտ վերապրողներ, բնապարտիչներու սրտին՝ մոտանջութիւն, հայրենակարօտ այցելուներու սրտին՝ շարունակող սարսափ, բեկորներու բազմախառ ոգրերգութիւն՝ «Վախ Խալիքում»:

Ու նոյն ապրումը ամէն էջի մէջ, ամէն հատուածի, միեւնոյն ելուէջներով, երբեմն քաղցր, երբեմն կսկծալի, մերթ ցնցիչ՝ արտին քով, եզան հետ, սպառող արիւնին առիթով արձակուած ազաղակին մէջ, ոչնչացուած անասուններուն, ոչնչացուած թռչողներուն ի յուշ, «տեղում» մնացած ձորերուն, «տեղում» մնացած ջուրերուն ու «տեղում» չմնացած մարդոց բուռ ոգեկոչումներուն ամբողջ երկայնքին:

Ինձ եկած են այս բոլորը եւ դեռ իրական ու հարեանական ուրիշ երանգներ, խղճահարուածիւն, վերապարճի կսչ, յանցողարտ հողիներու խուճուղ, զարմանք՝ Հայաստանի մը եւ հայերու զսուլութեան ի լուր: Կան այս բոլորը, բայց մի՛ւսն է անշուշտ կարեւորը, անոնց շահեկանութիւն ընծայող զբաղէտին ընկալումը, սեւեւման անոր կորուստի եղանակը, զգայութիւններու եւ մտածումներու անբանազբօս բախումը:

Օտար բուռերու անակնկալ պայթիւնով, խօսուն բուլիւններով եւ շարժումներով հարուստ Սերօ Խանգաղեանի այս պատմութեան ուժեղնակն ակնախարձանները սակայն ժխտական արաւայտութիւններուն զբաղան հնչեղութիւն մը հաղորդած ըլլալու իր գիւսն է, հրաժարումներով հաստատումներ կատարելու ստիճանոց սճը:

«Այո, ասացի, որ Խալիքի սլականը չունեմ, շօփեք Օսման: Ինչիւ ես այդպէս շարեւաբ կայում: Զուճե՛մ»:

Զուճե՛մ...

Բայց այդ սլոյմաններուն մէջ կամ սակղծուած զբաղան նոյն միջնալրտին մէջ կա՞յ ունեւ պտաւաւ աւելի ուժովին ձեւ մը:

Եւ կա՞յ զգրութեան մարդին մէջ աւելի մեծ ուրախութիւն, քան զբաղան ուժեղ կտորի մը հանդիպած ըլլալու հաճոյքը, — Սերօ Խանգաղեանի «1971 Բուսակամ, ամառը»:

Ս. Խ Ա Ն Ջ Ա Գ Ե Ա Ն



Այս տարիներին սակցածուկ «Չտարաւի Խմ, ջուր տուէ՛ք» պատմութեան քննարկը աշտարակ շարքը եւ, մտնուանդ՝ «1971 քուակամ, ամառ» հիւնայի պատմութեան քննարկը:

ՎԱՐԳԻԴԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ
(«Սովետական գրականութիւն»,
1977, քիւ. 7)

Արժէ, գոնէ, ի միջի ալլոց, նշել այն ուրախացի եւ գովեստի արժանի ձգտումը, որ աւագ արձակագիրը հանդէս է բերում զբազան որոնումներ ի վերջ, որոնցով յատկապէս աչքի ընկաւ «1971 քուակամ, ամառ» հիւնայի պատմութեան քննարկը:

ՊԵՏՐՈՍ ԶԵՅՅՈՒՆՅԵԱՆ
(«Սովետական գրականութիւն»,
1977, քիւ. 7)

ՀԱՐՅ.— Ձեր տպագրած գործերից ո՞րն է ամենից շատ ձեզ դուր՝ գալիս:

Ս. ԽԱՆՋԱԳԵԱՆ.— ...Բայց քանի որ հարցը եղաւ եւ բնութեան քննարկներին էլ զուգահեռ հետաքրքրի, կ'ստեղծ, որ ամենաշատը ինձ յուզում ու դուր է գալիս մի պատմութեան քննարկը, որը մամուլում լայն տեսակով 1972 թ. կոչուում է «1971 քուակամ, ամառ»: Կրթով դեռ չի սպառնալով: Ինքս էլ լայն չընթան ինչու է դուր գալիս: Բայց հարցը ինձ մտածել տուց: Դուր է գալիս թերեւս նրա համար, որ այդ պատմութեան քննարկում կայ նաեւ մեր ազգային սղակագիտական եւ վշտի, մեծ կորստի արտայայտութիւնը: Կարօտ կայ կորցրած հայրենիքի, կորցրած օջախի ու տան:

(«Գարուն» ամսագիր, 1978, քիւ. 6)

1 9 7 1
Թ Ո Ւ Ա Կ Ա Ն,
Ա Մ Ա Ռ

Աւտորուսը կանգ առաւ էջերի վերջում:

— Դէնն ալլեւս չեմ գնայ, — յայտարարեց ամերիկեան շքեղ ատորուսի աչքը կ'իջնուի:

— Ինչո՞ւ, — հարցրեց Օսմանը: — Դրամ կը վճարենք:

— Մնացել էր ոտ գլուխ երեք հոգի: Իսկ ձեր տուածը բէնզինի կէս գինն է: Շահ չունեմ:

Այդ երեք հոգուց մէկը ես եմ, միւսը՝ ինձ սրբեկցող Արփաջի Միսաքը, երրորդը՝ ինձ անձամբ, Չաթ զիւղ զնացող Օսմանը: Մա նիհարաւուն թուրք է՝ մի քիչ չէ, մի քիչ էլ օղուց դեղնած քրթով: Նա էլի ինչ-որ բան ուղեց ասել, բայց միայն «եա Օսման» դռնից ու ծռու քայլերն սուղեց զէպի Չաթ, որ տասը կիլոմետրի վրայ էր:

1971 թուականի Օգոստոսի մէկն է՝

չող օր: Քրանել է նոյնիսկ աւտորուսը
 եւ էշիքի դիւղն է քրտնել: Ես յիսունը-
 հինգ տարեկան եմ, Օսմանը՝ մի քիչ
 մեծ, իսկ Արփաջի Միսաքը՝ վաթսունը-
 ինը: Արփաջի Միսաքը՝ բարձրահասակ
 է, թիկնեղ, հայի քիթմուրթով, թուրքի
 տարազով եւ ուրախ մի չափցի: Սակայն
 ի՞նչ բան է Չաթը: Ասեմ.— Չաթը հայի
 հին դիւղ է: Հալիս դետի աւաղանում,
 Աղ դադի մի ստի վրայ: Չաթը իմ ծնըն-
 դավայնն է՝ Թուրքիայի Եօզլատ վիլայ-
 յէթի մէջ, սր ս'չ հեռու է Կեսարիայից,
 ոչ էլ մօտ՝ Սվազին:

Չաթի ճանապարհը ցեխոտ է դեր-
 մանական աւտոյի ազուրներով, ամե-
 րիկեան կոնեակի ջարդուած շէքով եւ
 թուրքական մի հին Ֆէս՝ ջրախոտի մէջ:
 Սրանք ես չեմ տեսել, երբ քառասուն-
 երկու տարի առաջ, այսինքն՝ 1929 թը-
 ւականին, մօրս ձեռքը բռնած հեռանում
 էի պապերիս տնից: Մայրս հիւանդ էր:
 Տնքում էր մայրս, արիւն թքում չոր ճա-
 նապարհին:

— Ի՞, որդի՛ս, Լեւոն, մէյ մըն ալ
 կը տեսնե՞նք Չաթը: Չենք տեսներ: Ամա
 ճամբաս չմոռնա՞ս...

Մայրս Չաթի հարուստ տան՝ Դէ-
 միրճենց Յովակիմի դուստրն էր: Դէ-
 միրճենց Յովակիմի տան բակում թուր-
 քի այծ է կապած, յոյնի շան ժառանգ եւ
 հայի ձիւս յետորդ:

— Ի՞հ, ես վրո՞ւմ...

Կեսարիան քաղաք է, մզկիթներով,
 մօտակայքում դանաւող Ս. Կարապետի
 վանքով: Կեսարիայում հայոց բարեգոր-
 ծական հիւանդանոց կայ: Մօրս դրին
 դետնին: Մի բուժակ պղտոր կաթ առեց
 նրան: Քահանան դուռին օրօրեց.

— Ձի՛ ապրի:

Ինձ տարան Ս. Կարապետի որբանո-
 ցը: Սա՛ 1929ի աշնանը: Կեսարիայի եր-
 կինքը մի՞նա՞ծ էր: Ինձ տանող թուրք
 սայրապանը դարմացաւ.

— Ես Ալլա՛հ, դեռ հայ կա՞յ:
 Ինձ մի խնձոր տուեց.

— Խեղճ երթիւմ, հա՞յ ես: Խե՞ղճ հայ:
 Ի՞, Ի՞...

Թափով մտրակեց ձիուն: Ձիու մէջ-
 քից փոշի ելու, մէջքին մնաց մտրակի
 հետքը՝ սպիտակ օձ:

**

Ամերիկեան շքեղ աւտորուսը ես գը-
 նաց: Նրա կողի կարմիր չափազն ընկաւ
 ցեխաջրին: Արե՞ն է: Հօրս չեմ յիշում:
 Հայրս Չաթ դիւղից է: Չեմ յիշում: Մօր
 փորում եղածը ինչպէ՞ս յիշի հօրը, որին
 սպաննել են որպէս աշխարհ գալուց չորս
 ամիս առաջ:

— Ե՞րբ, Լեւոն:

— Ջարգին:

Մայրս ասում էր.

— Ազօրանի ձորը աս է, մանչս:
 Հօրդ՝ Չատիկին այստեղ... Աչքովս տե-
 սայ: Չէթէից խլեց սուրը, երեք թուրքի
 սպաննեց: Ինքն էլ... Ա՛խ, ես վրո՞ւմ:

— Իսկ դո՞ւ, մա՛:

— Աղիլ Չավուշ էֆէնդին կար՝ հօրդ.
 Սա ծանօթ: Սա վրայ հասաւ, ինձ խլեց
 մտրկասպանից:

— Վալա՛, վալա՛, էս Ջարդար բա-
 ջին է: Վալա՛, վալա՛...

Աղիլ Չավուշ էֆէնդին հարիւր հայ
 ընտանիք է փրկել ջարդից: Աղիլ Չա-
 վուշ էֆէնդին դուստրեւ է գայմագաւի
 մատթին.

— Ալլահին մուսաառող բան էք աս-
 նում:

Ես ծնուել եմ Աղիլ Չավուշ էֆէնդու
 տանը: Ութ տարի յետոյ Աղիլ Չավուշ
 էֆէնդին մօրս տոաց.

— Էլ ջարդ չկայ, բաջի՛: Քեզ ու
 տղիդ տանեմ Չաթ, նստիւր քո տանը:

Տարաւ: Մեր Չաթը նրանց դիւղին
 մօտիկ էր: Տարաւ:

— Բարեւ, Չաթ:

— Սալա՛մ:

Չաթում յիսուն ծուխ չափցի էր հա-
 ւաքուել ջարդից յետոյ: Իսկ առաջ եօթ
 հարիւր յիսուն տուն էր՝ բոլորը հայ:
 Քսան ծուխ քուրդ էր եկել Չաթ եւ երե-
 սուն ծուխ յոյն:

- Բարե՛ւ, մեր տուն :
- Ո՛ւ... :

Տունը խորթացել էր : Տան առջև մեր շունն է՝ ձերացած : Մեր տունը գաւթած քարոյ էլ յոր բը տասց :

- Ո՛ւ... — Եւայլն :

Նատեցինք մի աւերակում : Մայրս շատ սիրուն կին էր եւ ջահել : Եկան նըրան ուղերու : Մի թուրք՝ կապոյտ աչքերով :

- Եօ՛կ, — ասաց մայրս :
- Մի քորոյ՝ կապոյտ ձիով :
- Եօ՛կ — ասաց մայրս :

Մի չէրքէլ՝ կապոյտ խանչալով :

- Եօ՛կ — ասաց մայրս :

Մեր գիւղը երկու կապոյտ դեռ ունի, մէկը՝ Չաթալ Ղայա, միւսը՝ Ալ Սու : Մեր տունը, ալբին, մեր արան ու զոմը երկու դեռի միացման բարձր լեզուակին են :

- Բարե՛ւ, մեր դեռ :
- Եօ՛կ :

Ալթունդիչի Սեղրակը օղնեց մեզ, մեր արտը վարեցինք : Մեր յոյն հարեւանն ասաց :

— Ձեր ջրագացը կիսաշահով տուէք մեզ :

Տուինք : Քսաներեք թուականն էր :

**

Առաւօտ կանուխ գնացի յոյնի տունը : Դատարի էր : Բոլոր յոյներն ալ դիչեր փախել էին : Մայրս Ալթունդիչի Սեղրակին ասաց :

- Արի հեռանանք Չաթից :
- Բա ա՞րտս, բա եղնե՞րս :

Ալթունդիչի Սեղրակը սիրուն-խորտ կին ունէր, մի սայլ եւ երկու սիրուն-խորտ եղ : Գայմաղամբ շատ թուրքեր բերեց դրեց Չաթում : Մեր աները բաժանեց նրանց : Սա էլ 1923 թուականին էր : Գայմաղամն ասաց :

— Փեպլուրներ, կորէ՛ք էստեղից : Կորէք կամ թուրք դարձէք :

Մայրս Ալթունդիչի Սեղրակին ասաց :

- Արի հեռանանք Չաթից :
- Բա ա՞րտս, բա եղնե՞րս :

Ալթունդիչի Սեղրակը սիրուն-խորտ կին ունէր, մի սայլ եւ երկու սիրուն-խորտ եղ : Ալթունդիչի Սեղրակին նոր եկած մի թուրք կապում, դնում է սայլի առջև, սայլը քշում վրայով :

— Է՛հէ՛յ, Ալթունդիչի Սեղրակն ընկու իր սայլի աակ, մեռաւ :

Այդ թուրքը առաւ Ալթունդիչի Սեղրակի սիրուն-խորտ կնոջը, նրա սայլը եւ սիրուն-խորտ եղները : Մայրս բանեց իմ ձեռքը :

- Փախչինք, եւ վրում :

Կեսարիայում մայրս մեռաւ : Ես ընկայ Բէյրութ, ապա Կիպրոս, ապա Ճրտնտիա, ապա հայրենիք՝ Երեւան : Հիմա 1971 թուականի Օդոսսոսի մէկն է, ձո կանգնած եմ Եօղատի վիլայէթի էչիքլի գիւղում : Ուրով պիտի գնամ Չաթ՝ մեր գիւղը, քառասուներկու տարի յետոյ :

**

Սուրբ Կարապետ վանքը մօտ է Կեսարիային, ինչպէս էջմիածինը՝ Երեւանին : Չաթցի Սաշատուր Բոյալին («եանը» խուզել են) մէկ-մէկ դալիս է Ս. Կարապետի որբանոց՝ ինձ տեսնելու :

- Է՛հ, եւ վրում :

Շուտով մեր որբանոցը տեղափոխուեց Կեսարիա : Մի դայմադամ ու մի փաշա եկան Ս. Կարապետ, մեզ՝ որբերիս, վճարեցին :

— Սա դօրանոց պիտի դառնայ դօրքի համար :

Դարձրին : Մեզ՝ որբերիս, տարան լցրին Կեսարիայի հայոց դպրոցի շէնքը :

— Ի՞նչ հայի դպրոց, է՛, — դռաց շէյն իւլ Իսրամը : — Ի՞նչ հայ, ի՞նչ դպրոց :

Դպրոցը փակուեց : Բոլորս թուրքախոս ենք : Միայն ես եմ, որ քէչ-միչ հայերէն գիտեմ :

**

1971 թուականն է՝ շոյ ամառ : Տալիստ եմ եկել Պուլիս՝ քեռուս աղջկայ՝ Լուսարեք Քանարի հրաւէրով :

- Բարե՛ւ :

— Սալամ, հայրս'ում :
Յեռոյ ասաց .

— Գնանք Կեոտրիա : Կնտեղ էլ բա-
բեկամ սենես :

Գնացինք : Չաթիցի Արտաշի Մխաթն
ինձ ասաց .

— Գնանք մեր Չաթ :

Ես վախեցայ : Նա ասաց .

— Հոն բարեկամ թուրքեր ունիմ,
մի' վախնար :

Ահա եկիւ ենք աւարուսով, երեք
ժամում : Անցել ենք Չիրուխ գիւղով,
Կամարակի կամար աղբիւրից ջուր ենք
խմել՝ զրան հայոց գրեր : Յեռոյ Բուր-
հան, Դէնդիլ, Սրյոյ : Բուրհանն ու Կա-
մարակը հայի մեծ գիւղեր էին Հալիս
գետի ծոց : Հիմա թուրքեր են :

— Ի՛, Մխաթ էֆէնդի, մեզի հա-
մեցէք :

Ասում են հայի տներում նստած
թուրքերը :

— Ձէ, գնում եմ Չաթ, — ասում է
Արտաշի Մխաթը : — Ձէ' . . .

— Քեզի կը ճանչնանք, իսկ հետե-
նքդ՝ ոչ : Ո՞վ է :

— Ծրանտիայում ապրող չաթիցի է :
Խարում է : Թէ ասէր սոյիտի երկրից
է, Ռուսաստանից կամ Հայաստանից,
գտանոց էր : Խարում են :

— Ո՞ւմ աղան է, — հարցնում են :

— Դէմիրճինց Յովակիմի թոռը :

— Օ՛, — գարմանում են ծերերը :

— Նրանցից ո՞վ կայ, ո՞վ չկայ : Մեզի
համեցէք :

**

Էջիքլիում շատ թուրքեր հաւաքուե-
ցին մեր դիւխն :

— Բարով, Մխաթ էֆէնդի : Հետե-
նքդ ո՞վ է :

— Ծրանտիայում ապրող չաթիցի է :

— Օ՛, բարով, հապար բարի :

Ասոր թան բերին : Ծոց է՝ իմեցի,
գաւացայ :

— Իս գիշեր մնացէք մեր գիւղում :

Չմնացինք : Ուրով գնացինք հասանք
ճանապարհ ընկած Օսմանին : Սա տըն-
քաց .

— Էդ աւարուսի սէրը սնաստուած
է : Ախր ինչո՞ւ մեզ չբերեց : Հրէս ոտքե-
րս ծալում են :

Օսմանն ինձ ասաց, թէ Դէնդիլ հա-
յի մեծ գիւղում հիմա մի հայ կայ՝ Ա-
բամ տնուկով : Ուղեցի տեսնել : Օսմանը
կանչեց, գտաւ : Աբամը եկաւ իր աղայի
հետ, փաթաթուեց ինձ .

— Օղլա՛ւմ . . .

Ո՛չ ինքը հայերէն գետի, ո՛չ աղան :
Նա լաց եղաւ :

— Ուրեմն, հայ եւ Հայաստան կա՞յ :

Նա լաց եղաւ, աղան էլ լաց եղաւ :

Գնում եմ՝ մօրս սանահարքերը սրս-
նելով ճանապարհի քարերի վրայ, փո-
շիների մէջ : Զորերը կան, ձորերը տե-
ղումն են : Մեր ջրերը կան, ջրերը տե-
ղումն են :

— Բարե՛ւ, իմ սրող ջրիկ, իմ անու-
շիկ :

— Սալամ :

Սա իմ սրողի արան է : Վարում,
հնձում էինք Ալթունդիլի Սեղբակի հետ :

— Բարե՛ւ իմ արա, ի՛մ հող :

— Սալամ :

Լաւ ցարեն է՝ ալիք-ալիք, մեր հին
սերմի ժառանգն է : Թուրքերը կտրացած,
քրանած, յոգնած՝ արաը հնձում են գե-
րանդիով :

Չաթի կէս ճամբին էինք, երբ մի
բեռնատար հասաւ մեզ : Ծօֆէրը ջահել
է, էյի Օսման :

— Մեր էշերը չափար ամօթ է, որ
դուք ստորով գնաք, Մխաթ էֆէնդի : Նըս-
տեցէք մոթուս : — Դարձաւ ինձ : — Դու
Դէմիրճի խորէն ուսաայի բարեկա՞մն ես :

— Այո՛ :

— Չաթը լա՞ւ ես յիշում :

— Այո՛ : Տասնըչորս տարեկան եմ ե-
ղել, որ հեռացել եմ մեր Չաթից : Լաւ
յիշում եմ :

— Իհէ՛, — սուլեց չօֆէր Օսմանը :

— Եկել ես քու գիւղին ու հողին տէ՞ր
դառնալու : Հայտյին պահանջո՞ւմ ես ե-
կել :

— Ձէ՛, ջանք, — շատեցի տակ
ես : — Ի՛նչ հող, ի՛նչ պահանջ : Ես
Ծրանտիայում եմ ապրում : Ձէ՛, ջանք :

— Նստիք աւտս, — հրաւիրեց չօ-

Ֆէր Օսմանը: — Դու էլ նստի՛ր, չափցի՛ Օսման: Այս հայր հողային պահանջ չունի: Է՛, գնացի՛նք:

Գնացի՛նք: Մա մեր ճամբան է, մեր անտառը, մեր ալպին: Մա մեր գետն է, այս էլ մեր հայր:

**

Մա մեր Չաթ գիւղն է, գիւղամէջը: Այտեղ Յովակիմ պապս նստում էր իր ձեռքով տաշած-նախշած քարին եւ մայրս նրան սառը թան էր տալիս: Ախր, ասացի, որ հողային պահանջ չունեմ, շօֆէր Օսման: Ինչի՞ ես ալպպէս շարութեամբ նայում ինձ: Չունե՛մ:

Մա մեր Չաթ գիւղն է, գիւղամէջը: Թուրքեր հաւաքուեցին մեր գլխին:

— Մխառք էֆէնդի, քեզ ճանաչում ենք, հեռիմիդ՝ ոչ: Ո՞վ է:

— Մա, — ասաց Մխառքը, — հրէն էն ձորի գլխին տան տէր Ղարաբաշ Չատիկի աղան է: Այն տունը, որ մի ժամանակ քուրդ էյուրն էր նստում: Դա սրտ տունն է, Ֆրանսիայից տուրիստ է եկել իրենց գիւղը տեսնելու:

— Օ՛, հա՛...:

Նստեցի պապիս ձեռքով տաշած-նախշած քարին: Չրուցում ենք: Քարից պապիս փէշերի հտան եմ զդում: Մի թուրք ինձ ասաց:

— Չեր տունը որ քանդել են, պո-գիկներով գրքեր ու թղթեր են դուրս եկել:

— Ի՞նչ արիք:

— Կրակի վառիչ արինք: Մեր փայտը թաց է:

Լոեցինք: Մեր գիւղը սաստիկ փոխւել է: Կաղամախիների մի թանձր պուրակ-անտառ ունէինք: Մայրս ասում էր, թէ դա եօթը հարիւր տարի առաջ են անկել իր սպուլապերը: Անտառը չկայ: Ի՞նչ եղաւ:

— Երբ եկանք այս գիւղում ապրելու, անտառը կտրտեցինք, վատեցինք, — ասաց Օսմանը: — Յուրտ էր:

Գիւղի մօտ հաւասար շարքով հիւս-

ում էին մեր կաշերը՝ հարթ ու կոկ յատակով, քարէ շրջափակով, սրահներով: Այնտեղ հիմա եղինձ ու գայլուկի խոտ է: Ինչո՞ւ:

— Է՛, — գիւղը քորում է Օսմանը: — Եղած-չեղած յիսուն տուն ենք, բա-կերում ենք կալ շինել: Էսքան հողն ինչ անենք:

**

Շրջում ենք գիւղի մէջ: Արփաջի Մխառք էֆէնդին լուս է, աչքերի մէջ մի վիշտ, որ թէ թափուի, ձորը կը լցուի եւ կը սղոտուեն մեր գիւղի գոյք գետերը: Իսկ նրանք գուրալ-գուրալ են: Մա մեր Գասպար գայոնց աղբիւրն է: Չուրը հին անուշն է: Միայն չկայ պղնձէ պըլ-պըլան ծորակը, որ ձկան մուսթի էր նըման: Տեղը երկաթէ ժանդը կերած խո-ղովակ է:

— Բարե՛ւ, աղբիւր:

— Սալմ՛մ:

Աղբիւրի գլխին Գասպար գայոնց տունն է: Կայ՝ մէջը խոտ գարսած: Մա էլ իմ պապոնց տունն է՝ փլուած, ողորմելի ու հառաչող:

— Բարե՛ւ, պապոնց տուն:

Պատասխան չկայ: Օսման ինձ ասաց, թէ այդ փլատակներն ու պարտէզը իր քեռի Արասին են տուել:

Մա մեր հին եկեղեցին է: Քսանինը թուականին, կրք հեռանում էինք գիւղից, մայրս մոմ փառեց սրա սրմնախորշում ու չսրեց:

— Աս՛րբ Տիրամայր, ինձ ու որ-դուս էլի ես կը բերես:

Եկեղեցին փլուած է:

— Բարե՛ւ, Տիրամայր:

Լուսթիւն:

Այս մէկն էլ յոյների եկեղեցին է: Տանքինը թուականին շինեցին Չաթում բնակեցուած յոյները, որ երեք-չորս տարի յետոյ հեռացան-գնացին: Այս եկեղեցին ջաճի է դարձուած:

— Յիսուս-Քրիստոս:

— Եա Օսման, — ասաց Յիսուս-Քրիստոսը: — Եա Աբուլբաքը:

**

Մութ է: Տխուր է: Զարհուրելի է: Մեր տունն ու այգին ուրուադժուել են երկու դեակերի ջրախառնուրդի բարձունքի վրայ: Այնտեղ ճրագ է վառուում կարմիր բոցով՝ «Չմօտենա՛ս ինձ»: Ես ահ եմ սրբում: Մի ջահել թուրք մօտեցաւ մեզ.

— Միսաք էֆէնդի, գնանք իմ տունը:

Գնացինք: Մեզ հիւրընկալող ջահելի անունը Նեղիր է: Բարակ մեղմ տղայ է, աչքերում՝ խելք, վարուեցողութիւնը՝ կիրթ: Նրա տունը... Ախր սա Բօշկաբենց տունն է: Ախր սա...

— Համեցէք, — հրաւիրեց Նեղիրը: — Նստեցէք, մարդիկ, յոգնած էք:

Նստեցինք ցածրիկ թախտին, որ ծածկուած է դօրգով: Տանաէրը նստեց մեր դիմաց, հարցրեց.

— Դիտե՞ք, թէ ես ով եմ:

— Ո՛չ, — ասաց Միսաք էֆէնդին:

— Դու ջահել ես, քեզ չեմ ճանաչում:

— Ես Օսման Չափուշի թոռն եմ:

Իմ մարմնով սարսուռ անցաւ: Օսման Չափուշին ես չեմ տեսել, բայց նրա սարսափելի անունը լսել եմ:

— Օսման Չափուշը մորթեց մեր Չափը, — պատմում էր մայրս: — Եկաւ չէթէ դօրքով, ժակդարմով: Եկաւ, եկա՛ւ... Ալօրանի ձորում կոտորեց մեզ՝ կին, ձեր, մանուկ:

Մայրս պատմում էր, որ Ալ դադին աղաւինած չափցի Փիդայիները յաջողում են բռնել Օսման Չափուշին եւ կրտոր-կտոր անելով՝ սպաննել:

Նեղիրը նորից է ասում.

— Ես Օսման Չափուշի թոռն եմ: Նրան ձեր չափցի Փիդայիներն են կտոր-կտոր արել:

Նաֆթի լամպ է վառուում տանը եւ կիսամութը լցւում է սարսափով: Բայց Նեղիրի աչքերը խաղաղ են, նրանց մէջ ատելութեան թոյն չկայ: Սրա հայրն է իր եղբայրների հետ հաւաքել Օսման Չափուշի մարմնի կտորտանքն ու թաղել: Նեղիրն ինձ ասաց.

— Ես եղել եմ քո հիմակուայ ապ-

րած սեզում՝ Ֆրանսիայում: Եղել եմ նաեւ Բելգիայում, Հոլանդիայում: Գնացել էի արտկտոր գնելու:

Նեղիրի կինը դեղեցիկ է, բարձրահասակ: Բաճկոնը Փրանսիական է, գօտին՝ հոլանդական: Ծալն է թուրքական, որ դրած է սևերին: Նեղիրը խօսում է, իսկ կինը նրա մօտ կանգնած, ձեռքերը կրծքին ծալած ուշադիր ինձ է նայում: Նեղիրը մեղմ շօյեց նրա ձեռքը.

— Կինս ձերոնցից է՞ հայ:

Լսեց, աւելացրեց, կարծես դժուարով.

— Այս ձեր Չափ գիւղի Ալէյի Ակոյի աղջիկն է:

Սառը քրտնեցի: Ալէյի Ակոն իմ ագրականն է՝ ջարդից փրկուածներից: Երբ քառասուներկու տարի տաաջ ես մօրս հետ հեռանում էի այս մեր դիւղից, Ալէյի Ակոն սպրաց.

— Մի՛ գնա, Չարդար: Լեւոնին մի՛ ասր, Չարդար: Բա հայը կարու՞ի՞ իր օջախից: Ա՛խ, վա՛խ...

Ես սարսափեցի աղբականուհու հարցնելու նրա հօր մասին: Ալէյի Ակոյի տունը մեր տան մօտ էր, որի մէջ քսանըինը թուականին մի չերքէզ էր սպրում: Ես դա ասացի եւ Նեղիրի կինը միայն դրանից յետոյ հաւատաց, որ մենք ագրականներ ենք: Նա շիտթուեց սաստիկ, սակայն լուռ էր:

Մեզ հաւով ու բրինձով ճաշ տուին, սպա՛ կրթ ու մածուխ: Աղբականուհու անունը Սաթուն է, հազիւ քսանըհինգ տարեկան: Ուրեմն, Ալէյի Ակոն քսանըհինգ տարի առաջ դեռ կար, այստեղ էր՝ իր հայրենի ընկ մէջ, դուցէ Չափի վերջին հայ տղամարդը:

**

Նեղիրը մեզ տարաւ կողքի տան երկրորդ յարկը՝ քնելու: Ընդարձակ սենեակն ամբողջովին պատուած էր դօրքերով՝ մէջը երեք մահճակալ անկողինով, սպա՛ պահարան եւ ափսոսներ: Սենեակը երկու դուռ ունի, մէկը դամբրով փակ, միւսը՝ բացուող:

— Բարբը գիշեր, — ասաց Նեղիբը: Բնեցէք խաղաղ ու հանդիսաւ:

Երբ նա գնաց, ես բացուող զուարթ փակեցի գամալ:

— Շող է, — անկողնու միջից ասաց Մխտաք Էֆէնդին: — Ինչո՞ւ փակեցիր զուարթ:

— Մի՛ մասնաւ, — ասացի, — որ ասն տէրը Օսման Չալուչի թոռն է:

Համայր հանուցրի: Պաակեցի: Անկողինը ասն է թուում, եւ մէջըս է ստոր, թէեւ Մխտաք Էֆէնդին փնջում է շողից: Աչքիս մայրս է, ապա՝ հայրս, որին չեմ տեսել: Յետոյ երեւում է անկողնու Չալուչը եւ մի ասող, որ պատուհանի վերեւի անկիւնից սպառնում է ինձ: Մխտաք Էֆէնդին խօսեց, թէ՞ խառնարը:

— Լեւո՛ն, էջիքլիցի թուրքերը Նեղիբին յայտնել են, որ իր պապին սպանել են քս քեռիները:

Ես սարսուում եմ:

— Նա էլ ասել է, թէ թող պապ չանէր, որ ինքն էլ չստանար:

Ես մտածեցի, որ ի զուր փակեցի զուարթ: Չեմ քնում, նայում եմ աստղին, ապա՝ խաւարին, աշխատում գտնել մեր արտի ու այլու կորած բոյրերը: Իսկուր կամոց դարկեցին: Ես դա լսեցի Մխտաք Էֆէնդու խոսիտցի միջից: Մօտեցայ դրանք՝ մտքիս մէջ Օսման Չալուչի ասէր: Չայն չհանեցի: Իրտից Նեղիբն ասաց:

— Այստեղ ես ջուր գրի: Եթէ կ'ուզէր, կը վերցնէք:

Ու գնաց: Իմ քունը բոյրտոյին փախաւ:

*
**

Արթնացայ ազանի ծորուն ձայնից: Լայսը բացուել է: Ձամիի մինարէթից մոլլան սոգթի է կանչում հաւատացեալներին: Մխտաք Էֆէնդին ստքի է: Ասաց գնանք պարտենք դիւղում:

Գնացինք: Նախ մօտեցայ իմ հօրեանկան տանը: Ծառերի մէջ է՝ բարձր տեղ, ինքն էլ՝ բարձր: Մի շուն դրոհեց

մեզ վրայ, մի թուրք տղայ մեր պատըզգամրից քար նետեց դէպի մեզ:

— Է՛յ, գողե՛ր:

Չեւքս քսեցի մեր ցանկապատի քարերին, համբուրեցի մեր զարպատի շեմը: Եսնն ու սղան սպանանցին աւելի սաստիկ:

— Է՛յ, գողե՛ր:

— Է՛յ, գողե՛ր:

Սա թափա գերեզմանատունն է: Այստեղ են հանդոււմ իմ ապուպապերը՝ մինչեւ հետու անցած ժամանակները: Ծիրամաքսերը ջարդոտոււմ են, ծածկուած դազի գլուխ վշեղալ: Ո՞ւր է իմ ապուպապ տէրաչրի մարմարէ գերեզմանը: Աքանչեյի՞ք էր: Չկայ:

Սա Իսլլաթիկնայ տունն է: Իսլլաթիկնայ սղքատ ու դարիք սիրող էին: Հիմա աւերակ է՝ մեռած սղքատ: Սա Ճընդլի Ռուբէնի տունն է: Ինձ ասում էր. — Լեւո՛ն, շուտ մեծացի, որ աղջիկս քեզ ասմ: — Այս դրան վրայ աթար է ծեփած, պտուտահանի ճաղերից բիրար կախած: Սա կիկերի Մանուկ դայու տունն է: Երբ դեռ դիւղումն էի, ինձ ասում էր. — Է՛, Լեւո՛ն, մեր Չաթը էլի կը շէնանայ: — Մխտաք Էֆէնդին դառա իրենց տունը, թաքնուեց պատի տակ ու լաց կգաւ: Հետուից թնդում էր նոյն սպառնալիքը:

— Է՛յ, գողե՛ր:

Թուրքերը հնձում են մեր արար: Չմօտեցայ: Նաեւ վախեցայ մտնել մեր սյուին: Այնտեղ թուրքեր կային:

— Է՛յ, գողե՛ր:

Կ'ասէին՝ եկել ես քու հո՞ղն ասնեւ: Բահալ կամ գերանդիտլ կը կտրէին դըլուխս: Այստեղ «գեալաք» սպանները յանցանք չէ եւ դասաստան չունի:

Մխտաք Էֆէնդին ինձ տարաւ մի տուն:

— Որ դուրսը շատ մանք, վտանգ կը լինի:

— Բարբի աջողում:

— Հաղար բարբ:

Այս ասն նոր տէր Մէմէյը Մխտաք Էֆէնդու լաւ բարեկամն է: Նրանք սղջապարտեցին: Մէմէյը տղան նոր է ե-

կէլ Արեւմտեան Գերմանիայից : Սա սասաց .

— Գերմանացի ազջիւկներ պիտի բերել Չաթի, որ մեր ցեղը բարեխաւենք :

Մտապաշտիկ նստել էր յատակի կարպետին ու մեզ հետ մասներով ճաշ էր ուտում միեւնոյն ամանից : Մէմէզը չհետաքրքրուեց , թէ ես ով եմ : Երբ դուրս եկանք նրա մօտից , արդէն կէսօր էր : Միտաք էֆէնդին սասաց .

— Մտնենք սա Չոփուր օղլուի Հայկանոյշի տունը :

Ես հետեւեցի նրան :

**

Բակում , տասնըչորս — տասնըհինգ տարեկան մի աղջիկ հաւերին կուտ էր տալիս : Չարմացած նայեց մեզ : Միտաք էֆէնդին հարցրեց .

— Տառդ տո՞նն է , աղջիկս :

— Տանն է :

Նրանք էլի խօսեցին , թուրքերէն , ի հարկէ : Եեմին երեւաց եօթանասունին մօտ մի կին : Բարձրահասակ է , շիտակ մէջք ուսերով , տակաւին գեղեցիկ ու դարձանալի թարմ : Սա փափուկ թեւերը տարածեց ու Միտաք էֆէնդուն գիրկն ստաւ : Խօսեց մեր Չաթի լեզուով՝ մեր Չաթի հայերէնով .

— Վա՛յ , Միտա՛ք , եղբայրս , դժ՞ւն իս :

— Առտուն ո՞ւր էիր , Հայկանոյշ , — հարցրեց Միտաք էֆէնդին : — Աչք ածեցի , տունը չէիր :

Հայկանոյշը ծիծաղեց .

— Թուրքերը իրար հետ կուում էին , գացի թամաշա : Հետինդ ո՞վ է , Միտաք էֆէնդի :

— Կը յիշե՞ս կոր , Հայկանոյշ , այս վարը Վարդապետենք կային : Չատիկի տղան է : Դէմիրճենց Չարդարին չե՞ս յիշեր : Աս տղու մայրն է :

Չոփուր օղլուի Հայկանոյշը խփեց ծնկներին , գլխին , շամեց—զարմացաւ .

— Քա՛ , Միտաք , — հեկեկաց նա : — Ուրեմն սա Դաթան աչի տղա՞ն է : Վա՛խ , եալրո՞ւմ . . .

Այդ պահին միայն յիշեցի , որ մօրս փաղաքշանքով Դաթան աչի էին ստում : Խեղճ Հայկանոյշը հազար կտոր դարձաւ , սկսեց լալ : Ահեղ լաց սկսեց նաեւ նրա թոռը՝ Այդինը : Դա հայ կնոջ ու հայ աղջնակի լաց էր՝ բարի լաց , սարի լաց , երկնքի լաց :

Լաց էր լինում մեր Չաթը :

**

Քառասուներկու տարի ետ դնացի : Հրաշք է Հայկանոյշը՝ աչքն անուշ , բերանն անուշ , խօսքն ու ծիծաղը Աստծու պարպել : Աղօրանի ձորում կանանց ու երեխաների կոտորոզ Օսման Չափուշի աչքն ընկնում է այս մտառազ աղջկայ լանջին :

— Դա իմն է , — դուռում է նա : — Բերէք ինձ մօտ :

Անրիծ եղնիկ է՝ դալարում է դայլի ճանկերում :

Օսման Չափուշին սատկեցնում են չաթի ֆիդայիները : Սատկեցնում են , բայց չեն կարողանում փրկել Հայկանոյշին : Սրան յափշտակում է Չաթի մի այլ դահիճ՝ Քէօսա Ալին :

— Իմ կինը դառ , Հայկանո՛յշ , ես ես բախտաւոր կը լինեմ :

Հայկանոյշ Չաթի Բէնօղլինց տոհմից էր : Քէօսա Ալին քանդեց Բէնօղլինց տունը՝ սակի որոնելով : Տասնրօկեց օր քանդեց , տասնեօթերսրդ օրն ընկաւ կիսախորձան պատից ու մեռաւ :

Չաթի եղնիկը փորձում էր փախչել Չաթից : Բռնում են : Այս անգամ նրան կին է ստնում Չափուշն Մուխթիանը :

— Իմ կինը դառ , Հայկանո՛յշ , ես ես բախտաւոր կը լինեմ :

Ոչ ոք չի հարցնում՝ իսկ դու ե՞րբ պիտի բախտաւոր դառնաս :

Ո՛չ Փիդայի կար լեռներում , ո՛չ հայ՝ հայի Չաթում : Այս անգամ էլ խնորհուեց հպարտ եղնիկը :

— Վա՛խ , եալրո՞ւմ . . .

Այս ես տեսայ , լսեցի Չաթում , 1971 թուականի Օգոստոսի երկուսին : Տատի հետ հեծկրում էր նաեւ Այդինը :

— Վա՛խ , եալրո՞ւմ . . .

**

Խաթունարիսի աղբիւրի քարէ դուռի մէջ լուսայք է անուամառաղաչ մի հարա: Կոսայայ ջուր խմելու: Հարող սասայ.

— Հա՞յ ես:

Յետոյ լաց եղաւ:

— Ինչո՞ւ կորաք: Ինչո՞ւ սպառուեց մեր արիւնը: Ես էլ հայ եմ:

Խաթունարիսի ջուրը պղտորուեց նրա արցունքների աղից:

— Ես հայ եմ:

Սուրբ Ատուածածին եկեղեցում անաստային վարչութեան դրասենեակն է: Մի ժանդարմ ցցուեց շեմին.

— Չաթիլ՞ ես:

— Այո՞:

— Եկել ես քու հողերը ե՞տ առնելու:

— Չէ՛, ջանքմ:

Լաւ է, մօտ էր իմ պապի՝ Վարդապետանց աղբիւրը: Գլուխս դրի ջրի տակ ու լաց եղայ ջրի տակ, ջրի հետ:

— Չէ՛, ջանքմ:

— Գնանք Նեղիբի տունը: Այստեղ վտանգաւոր է:

Յիշեցէք, մարդի՛կ, սա 1971 թուականն է, Օդրտոտսի սկիզբը:

**

Իմ պապոնց՝ Նշան դէդէի տան դարպասի քարին նստած է ձերացած-մաշւած Ահմէդ աղան: Ահմէդ աղան մեր հիւրընկալ Նեղիբի հօրեղբայրն է՝ դլուխը բարձր, ճերմակ մօրուքը կրծքին, աչքը իր արտերին, որ իմ հօր աղած-մաղած հողերն էին:

— Բարեւ, բարա՛:

— Բարով տեսայ: — Ծերունին սլորատուեց ողջ մարմնով: — Հետինդ ո՞վ է, Միտաք է՞Քէնդի:

— Չաթիլը Չատիկի ու Չարդարի տղան է:

— Հա՞... — Թնդաց Ահմէդ աղան:

— Հա՛, Յովակիմի թո՞ռը:

Ահմէդ աղայի ծիւրուած մարմինը թուրացաւ, Ահմէդ աղան լաց եղաւ.

— Վա՛խ, ետիրո՞ւմ...

Մօտիկ էշիքի գիւղի թուրքերից է Ահմէդ աղան, որ հիմա մեր Նշան դէ-դէնց տանն է ապրում: Աղօրանի սպան-դում սա եւս թուր ունէր ձեռքին եւ իւրայիններին ստել է.

— Գնդակն արսոս է: Դանակով, կացնով, քարով-բանով սպաննեցէք դե-վարներին:

Ահմէդ աղան լաց է լինում, դլուխը շարժում թափով, յամաւօրէն ինձ նա-յում: Չղջո՞ւմ է իր արարքի համար, ա՞հ է դոււմ իր ձեռքով մորթուած կանանց աղաղակից, մանուկների աղաչանքից, սպանդի ահեղ տեսիլներից: Հաղի՛ւ թէ: Մութ են սրտ աչքերը եւ ներս թափան-ցելն անհնարին՝ ինչպէս ճահճաջրի դո-լորչութիւնը: Ես հարցնում եմ.

— Ի՞նչ եղաւ Ալթունդիշլի Սեդրա-կի կինը, Ահմէդ աղա: Դու առար:

— Հո՞ւ, — մօնչում է Ահմէդ ա-ղան: — Դու ո՞վ ես:

Սա է Ալթունդիշլի Սեդրակին դրեւ սայլի տակ, սայլը քշել վրայով.

— Էհէ՛յ, Ալթունդիշլի Սեդրակն ըն-կաւ իր սայլի տակ, մեռաւ:

Ալթունդիշլի Սեդրակը սիրուն-խո-րոտ կին ունէր, մի սայլ եւ երկու սի-րուն-խորոտ եղ:

Յետո՞յ: Ահմէդ աղան տէր դարձաւ Ալթունդիշլի Սեդրակի կնոջը, սայլին ու եղիներին: Իսկ նրա Գիւլէ աղջկանը տը-ւեց իր տղային:

— Ո՞ւր են, — հարցնում եմ նրան:

— Ո՞ւր են մայր ու աղջիկ:

— Հո՞ւ, — մօնչում է Ահմէդ ա-ղան: — Դու ո՞վ ես:

Քիչ առաջ Մէմէդի տղան ասում էր.

— Գերմանացի աղջիկներ պիտի բե-րել Չաթիլ, որ մեր ցեղը բարելաւենք:

Մէմէդի տղան մի քանի օր առաջ է եկել Արեւմտեան Գերմանիայից: Այն-տեղ պարանոցները ճերմակ աղջիկներ է տեսել եւ ժպիտները ճերմակ: Այլեւս հայ աղջիկ չկայ այս կողմերում: Հերթը քեզ է հասել, Եւրոպա՛:

Ահմէդ աղան մօնչում է անգորու-թիւնից:

**

Նեղիք մեր հիւրընկալի տունը: Նեղիքի հայրահի կինը երկու հաւ էր տապակել սխալ, պղպեղով ու Չաթի վայրի բոյսերով: Տունը անուշ բուրում է: Բայց ես բնաւ ուտելու ցանկութիւն չունեմ, ոչ էլ սիրա: Գիւղս մեռած տեսայ: Սասկալի է մեռած հարադատիդ անթող տեսնելը: Նեղիքի կինը շատ խնդրեց, աղաչեց, որ ես որեւէ բան ուտեմ, բայց կոկորդա խցուած է: Նա դնաց՝ երեւի լաց լինելու մի թաքուն տեղ: Այլեւս նա չերեւաց: Նեղիքը խիտա մտաւանջ է:

— Ինչո՞ւ էր դնացել Խաթունադրերը: Դրա տէրը կամեցել է ձեզ սպաննել:

Ոչինչ չփոխուեց իմ մէջ: Իսկ ի՞նչ է, սպաննուած չե՞մ:

— Սակայն ինչո՞ւ չի սպաննել, — հարցրի Նեղիքին:

— Իմացել է, որ իմ հիւրն էք:

Նեղիքը լռեց երկար: Գունատ էր: Յօնքը դողում էր: Լուց երկար:

— Անիծուած է այս դիւղը, — գրեթէ դռնեց նա: — Մեր Չաթը մարդակերի, վայրենու անուն է հանել: Սա ա՛մօթ է, վատ է: Դրաի աշխարհից ոչ ոք չի դալիս մեր դիւղը: Վա՛տ է:

Վատ է, վատ է: Չաթը հաց ստեղծող էր, սայլ կսպող: Չաթը խաղաղ էր ու բարի: Սակայն ե՛րբ: — Յիսուսիկեց տարի առաջ: — Նեղիքը շեշտակի նայեց աչքերին:

— Եկէք ձեր դիւղին տէր եղէք, — դռնեց նա: — Եկէ՛ք: Ես կը դնամ իմ պապերի էշերըին: Այս աւերակները ջնններ են, մեզ ուտում են: Եկէ՛ք:

— Չէ՛, ջանք, — ասացի ես: — Ինչո՞ւ դնաք:

Չէ՛, ջանք:

**

Նեղիքը մեզ ճանապարհեց մինչեւ գիւղի ծայրը: Մեր պարտեզից երկու խնձոր էր պոկել: Տուեց ինձ.

— Երթաք բարով:

— Մնաք բարով:

— Ինձ չիլէք, — ասաց Նեղիքը: — Չիլէք՛ք: Բայց ձեր Չաթը մի՛ մոտանաք:

Նա ետ դնաց:

**

Այլ էֆէնդին գեղեցիկ տղամարդ էր՝ սարսի աչքերով: Հիմա էլ գեղեցիկ է, սակայն աչքերի լոյսը նուազած:

— Տուն դնաք:

Այլ էֆէնդին շատ հիւրեր կանչեց: Իմ մասին ասաց.

— Հօրս ծանօթի տղան է, կ'ապրի Թրանսիա:

Ամաչեցի, որ Այլ էֆէնդուն ես խորել եմ՝ «Պրանսիայում եմ ապրում»: Ամաչում եմ: Իսկ ես Հայաստանից եմ՝ Երեւանից: Իսկ ես սովետի երկրից եմ: Իսկ ես...

— Դժոխս Չաթի Չաթիկի տղան է, — հիւրերին ասում է Այլ էֆէնդին: — Ծնուել է հօրն սպաննուելուց յետոյ:

Հալիս գետը ծանծաղել է, բայց լիքն է Այլ էֆէնդու տունն ու սեղանը: Նրա հիւրերը լուռ են:

— Սրա հօրը դուք էք սպաննել, — նրանց ասաց Այլ էֆէնդին: — Դո՛ւք: Հիւրերը լուռ են:

— Բայց որս հայրը ձեզանից երեք հարու սասկեցրեց սպաննուելուց առաջ: Յիչո՞ւմ էք:

Հիւրերը ծերեր են: Յիչում են: Մէկն ասաց.

— Յիչում եմ:

Այլ էֆէնդին էլ Չաթի Փիղայիններին է յիշում՝ անուն առ անուն:

— Այլահր փրկի նրանց հողիները, — ասում է նա: — Անեղ էին:

Երբ մօրս հետ բնաւորուել էի Չաթում, յաճախ էր Ազիլ էֆէնդին գալիս Ալթունդիլի Սեղբակի տունը:

— Ձեր Չաթում բնակուած թուրքերը քեզ սպաննելու են, Սեղբակ, — ասում էր Ալթունդիլի Սեղբակին: — Հեռացիր այստեղից:

Ալթունդիլի Սեղբակը ծեծում էր

սեփականն դյուրը, որ փոքր էր՝ ահի ու
ասաստպանքի բռնն.

— Բա ս՞րտս, բա եղնե՞րս :

Այթանդիչլի Սեղբակը սիրուն-խո-
րտս կին ունէր, մի սալլ եւ երկու սի-
րուն-խորտս էր :

Այի էֆէնդու հիւրերը լուռ են, ու-
տում են չզարտցնելով : Այի էֆէնդին ինձ
ասաց .

— Խօսի՛ր, կախրո՞ւմ : Սրանք որ լը-
ռել են՝ իրենց մեղքից է, յանցանք ու-
նեն : Դու ինչո՞ւ պիտի լռես : Խօսի՛ր :

Հալիս գետի կողմերից երկու արա-
ղիլ եկան, թառեցին դիմացի կտուրին :
Նրանց սարքերը չոր են, նրանց կտուց-
ները չոր են : Հալիս գետի ջրերը նուա-
զել են : Հալիս գետը հիմա կղզի Իրմաղ է :

Երբ հիւրերը գնացին ու երբ էս ու
Այի էֆէնդին մնացինք մենակ, էս նրան
ասացի .

— Մեղք ունեմ, Այի՛ էֆէնդի :

Նա դարձացած նայեց ինձ :

— Դո՞ւ... .

— Ե՛ս : Ես մալուց եմ հեռացել Թը-
րանխալից : Ես սպրում եմ սոփեաի երկ-
րում, իմ հայրենի տանը՝ Հայաստա-
նում :

— Քս հայրենի տունը Չաթն է, —
մտալլուեց նա : — Մի՞թէ մոռացել ես :

Ես նրան ասացի, որ եթէ սոփեաի
երկրից նրան նամակ չըլեմ, գրա համար
իրեն հօ չե՞ն նեղացնի :

— Կը նեղացնեն թէ չէ, ինձ համար
մէկ է, — ասաց Այի էֆէնդին : — Ո՞ւմ
համար է այս աշխարհը լայն, որ ինձ
համար լայն լինի : Ձեր երկրի անունը
տայն անդամ այստեղ արգելուած է, վը-
տանդուսը : Սակայն գրի՛ր : Գրի՛ր, մարդ
ենք տի՛ր :

*
*

Քնեցի Այի էֆէնդու տանը : Դուռը
չփակեցի : Առաստեան Մխար էֆէնդին
Թէքմէնից եկաւ թուրքի կին քրոջ աղ-
ջըկոյ հետ : Սա ինձ հանաչեց .

— Վա՛յ, կախրո՞ւմ, Լեւո՛ն :

Լաց եղաւ : Ասաց .

— Կը դնաս Լենինական, կը դանձա
Բէյրութից Հայաստան անդախոխուած
եղբորս՝ Արմէն Դշխունեանին : Իմ տեղ
կը համբուրես նրա ձեռքը եւ կ'տես տե-
ղեցդ չչարժուես, ամա՛ն... .

Այի էֆէնդին մեղ ուղեկցեց մինչեւ
ուտորուսի կանդատը ու ես դարձաւ :

Երբ անցնում էինք դաշտով, մօտիկ
երեւաց մեր Չաթը :

— Մնաս բարով, Չա՛թ :

Լուսթիւն :

— Մնաս բարով, Չա՛թ :

Լուսթիւն :

— Մնաս բարով, Չա՛թ :

Լուսթիւն :

Լուսթիւն :

Գ Ի Ն Ո Վ Ի Օ Ր Ա Տ Ե Տ Ր

**

Աչքերուս մէջ՝
տրտմութիւնը աղօթող
մտնակուած աչքերուդ :

Աչքերուս մէջ՝
գինովութիւնդ անսփռի
ու մեկութիւնդ յիմար :

Ափերուս մէջ՝
մայրենիներ ծերացած
համբերութիւնդ մաշած :

Ափերուս մէջ՝
բարտիները խունացած
յաղթանակդ անտոյգ :

Ուղեղիս մէջ՝
մեքենաներ փակուած
գնդացիներ ժանգոտած :

Ուղեղիս մէջ՝
օրհնութիւնը անձրեւի
գանկիդ դիմաց անծանօթ :

Քառերուս մէջ՝
հարցարանը օրերուդ,
սպասումներ լնացած :

Քառերուս մէջ՝
խորհրդաւոր գալիքի
նոր արեւներ խտացած :

**

Զէրօ ժամուն պիտի սաքին,
թոճախտաւոր հիւանդի պէս,
մօր ափերուն՝ աչքերուն մէջ
արիւն փսխէ հագալով :

Վաղը մումեր պիտի վառին,
ու մաղթանքներ՝
շրքներու տաք
սպասումը կրծելով՝
պիտի ըլլան անճառապան :

Զէրօ ժամուն երկիր մ'ամբողջ
զէրօ ժամու քրքիջին մէջ
արցունքներն իր պիտի գոհէ,
չպարգեւուած յաղթանակին
աղօթելով :

Ու դեռ վաղը գերոյին մէջ
զէրօ ժամուն
ժպիտները պիտի գինով
վառօղ բուրեն :

Զէրօ ժամուն
վաղն երէկ պիտի չըլլայ,
ու մահուկներ պիտի իրենց
սպասումին դէմ կապոյտ
մահավնիւ արձակեն :

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

ԿՈՐՍՈՒԱԾ ՓԱՄՓՈՒԹՏ...

ՉՈՐՐՈՐԴ ԳՎՈՒԽ

Ռուսները կը պայթէին:

Եւ Սոնա Առաքելեան, որ երեսուն տարիներէ ի վեր առած էր վրան Աղայեան պերզաստանի անունը՝ կ'ապրէր, երազին մէջ, վերջին դէպքին պահը: Որքա՛ն հարուստ էր ակնթարթը երազով տեսնուած կեանքին: Սոնա թմբիրի մէջ էր, երբ կը դռնէր՝ «Մինչեւ կեանքիս վերջը պիտի տանձ քեզ»: Արձակուած այդ վճիռը մատուցուած բլլալէ աւելի՝ փորձուած ճշմարտութիւն էր: Արմենակ Աղայեանի ծնողքն ու քոյրերը անխիղճ, թոյնով շողողուած մարդածին դուրաններ էին. ինչ որ կնոջական առաքինութիւն կը կոչուէր — եւ իրենց հարող մարմնացումն էր ամէնուն — սեւ կուպրով ներկեցին ու հրապարակ հանեցին, քուլթեամբ, պրպարտութեամբ, չար նախանձէ մղուած ծուռ բերանով եւ դիմացինէն միշտ խղճահարութիւն կորզելով, թէ Արմենակին հարս բերած աղջիկին չբեր էր, պող օձ էր, որ կը խայթէ ու կը մտնէ յարդի տակ. թէ՛ սիրահար ունի եղբր, չեն դիտցած. թէ՛ բռնուած է յանցանքի վրայ, բայց իրենց Արմենակը չէ ուզած խայտառակել իրենց անունը, լռեր է. «ջա՛, տանկ բաներ կ'ընէ՞ պատուաւոր կին մը, որ փաշայի պէս ամուսին ունի»...: «Հա՛, քոյրս, ինչպէս որ կ'ըսես, չ'ըներ, մտքուր կաթ ծծած աղջկայ չէք ինկած»...

— Զգե՛լ պիտի տանք:

— Ի՞նչ կրնամ ըսել, քոյրս. ձեր դիտնալիք բանն է:

Եւ, ի վերջոյ, ձգել տուին: Կեսուր մայրը Սոնան տարաւ մօրանց.

— Ա՛ռ, ինամի չրլլալիք. աղջիկդ ձեզի կը դարձնենք. մեզի բախտ չէ եղած, — հրելով Սոնան ներս, տիկին Աղայեան հսրածեւ շրջուելով, քուլեր էր բազի նման ծանր-ծանր:

Այդ կը պատահէր երկու տարի ետք պսակէն եւ Սոնա մնացեր էր աղջկայ պէս...

Երեք ամիսը չանցած, ի՞նչ խաղեր բանեցնելով, Արմենակը նետել ուղւին այրի կնոջ մը դիբիլը, ամուսնացուցին Մարգոյին հետ...: Արմենակ Աղայեան թէեւ մտուրը փոխեց, ինչպէս երբեմն, պիտի ըսէր Սոնա, վերադարձած ամուսինին երեսին — ստիպն, առաջին սէրը՝ Սոնան փնտռեց, ամէն օր քիչ մը նուազեցնելով կապուածութիւնը ընտանիքին հետ, քիչ մը աւելի ըմբոստանալով իր թուլկամութեան դէմ: Մարգօ խառնածին էր. հայ եւ արաբ-կաթոլիկ բարքերը առաջին ամիսէն վէճի ու անհամաձայնութեան

ուզաք ներս տան... Իրենց մեզքը ծածկելու համար, Ազալեան մայրն ու աղջիկները, մից ամիս ետք, ոտիպուեցան դուրս ծուկ նորահարս Մարգոյին առջև, առածին մէջ յիշուած պատուէրին հետևելով՝ «Այն ձեռքը, որ չես կրնար կտրել, համբուրէ, դի՛ր դուրսիդ»... Մարգոյին ձեռքերը զօրաւոր չէին, սակայն ունէր լեզու մը, ճկուն եւ երկար խարաղանի պէս, զոր վարպետ կտաւորանները կը շաշեցնեն կտաւորարչ ձիերու կոնակին:

Արմենակ Ազալեանին գլխուն մէջ եզո՞ծ խելքն ալ պիտի ցնուէր, բայց չցնուեցաւ, այլ՝ կծկում ունեցաւ ու կարծրացաւ, ինչպէս երկաթը դարբինին կտանին տակ: Տան մէջ մէ՛ծերը անպակաս էին եւ ձայն ունենալու փորձութիւնը Արմենակը հանեց կրտսերական միճակէն. գաղանիք չէր, որ ան երբեմն, խռովելով Մարգոյէն, կ'երթար անպաշտօն լքած առաջին կնաջ մօտ: Տիկին Մարիցա չէր մերժեր փեսային այցը: Սոնան անոր կենն էր եւ Մարգո ահամաջ սիրուէի մը, սրմէ կրնար օր մը զգուիլ ու վերադառնալ իր օրինական կնոջ՝ Սոնային: Եւ Մարգո յի՛ր չմնաց, հակառակ որ կը բոլորէր ամուսնութեան երկրորդ տարին: Անոր փոխարէն Սոնա պիտի կրէր առաջին դաւաճելն յիշուած անոր սիրախառնուքներուն պէս թեթեւ ցնցումները...

Այդ օրերուն էր, երբ պատահեցաւ արկածը:

Արմենակ միճած էր Մարգոյի հետ. խռոված էր սիրան ու հոգին: Ղեկին տղեւ երբ կը խորհէր կին-պատահառի մասին, նեկ անցքէ մը, եօթ տարեկան աղջնակ մը դուրս նետուելով՝ մայթէն թռաւ փողպ ու վազեց գէպի դիմացի մայթը: Ահնթա՛րթ մը: Արմենակ չկրցաւ, չէ՛ր կրնար արգելակել կտորը, որ աղջիկը առաւ անիւններուն տակ: Բոնեց դուրսը ու կըթնեցաւ գոնակին: Մարգի կտեսն արկածը. խաշաանդող չեղաւ գինք. ոտիպուեցին, որ ան փոխադրէր զսէը հիւանդանոց: Աղջիկը թէեւ փրկուեցաւ մահէն, բայց ըսուեցաւ, թէ ան ընդմիշտ խեղանդամ պիտի մնար: Աղջկան պարտաները Արմենակը գատի քաշեցին. գատը տեւէր դուշէ տարիներ եւ նրստեցնէր գինք մոխիրներու վրայ...

Արմենակի ծնողքը նայեցաւ դատական հարցին Պիղատոսի պէս. թէեւ ձեռքերը չլուաց, չքաշուեցաւ մէկ կողմ ու պէտք եղածէն աւելի անէծք ու հայհոյանք թափեց պատճառ եղողներու անյայտ հասցէին, սակայն նիւթական ոչ մէկ օժանդակութիւն բերաւ հայր Ազալեան տղուն դատական ծախքերուն: Չուզեց անգամ ճանչնալ իր երաշխաւորի պարտաւորութիւնը պարտն Գարեգինին արուած փոխառութեան մէջ: Գարեգին Արմենակին կը պարտէր հինգ հարիւր թղթոսկի, զոր առած էր քրոջ՝ Աստղիկին հետ սիրաբանելու սկիզբը, անոր զազանի նուէրները եւ այլ ծախքերը հոգալու համար: Արմենակ ուզողի անոր գիմեղէն կը քաշուէր. միջնորդները եւս օգուտ չբերին իրեն: Այն ատեն Սոնա համակերպեցաւ, մօրը սոխպումով եւ Արմենակին լուս համաձայնութեամբ՝ մէկը գրկել իր անունով պահանջելու գումարը: Սոնա կը խորհէր, թէ Գարեգին պիտի չմերժէր գինք. թէ ինչո՞ւ այդպէս խորհեցաւ, դուշէ կնոջական գաղանիք էր. թերեւս խորամանկել ուզեց, անոր յիշեցնել աստղ հին պարտութիւնը եւ, գալիքին՝ կեղծ յոյսեր ներշնչելով... Ո՛վ գիտէ. աշխարհ անակնկալներու միջավայր էր, ուր անկարեւոր ջնջուած էր կայսերական բառագիրքի մը մէջ: Ու Սոնա ըսաւ իր պատուիրակին.

— Կ'ըսես, տիկին Սոնա Ազալեան շատ բարեւ կ'ընէ եւ կը խնդրէ, որ իրեն վերադարձնէք ամուսինէն փոխ առած գումարը. անոր խիստ կարեքը ունի կ'ըսէ, կ'ըսես:

Տիկին Սոնային բարեւը հասած էր Գարեգինին, որ ետ ճամբած էր պատուերակը, անոր բերնով փոխանցելէ ետք իր պատասխանը.

— Կ'ըսես տիկին Սոնային, թէ շատ եմ զղածուած իր սիրալիք բարեւէն. մէկ շարթթէն, ես ինքս կը բերեմ ու կը յանձնեմ դուժարը իրեն:

Կիրակի օր, երեկոյեան մօտ, Գոհարիկ պատուհանէն ձայն տուաւ, թէ հետաձայն կայ Սոնային, թող գայ խօսի: Երբ Սոնա բարձրացաւ Գոհարիկին մօտ, Գոհարիկ յայտնեց, թէ էրիկ մարդ մըն էր ուզողը: Եւ իրապէս պարտն Գարեգինն էր խօսողը.

— Կը ներէք. անձամբ չկրցայ դալ. ես օթէլ Պ. կը դանտիմ զործով: Եկէք անձամբ ստացէք դուժարը:

— Մեոսի'. կէս ժամէն հան կ'ըլլամ:

Քրոջ հետաքրքրութեան Սոնա պատասխանեց, թէ դրամական խնդիր է եւ դնաց պատրաստուելու: Հարաւ կապոյտ պարեգօտը, մաղերը յարդարեց, շրթնաներկով շողք գրաւ ու կարմիր՝ շրթունքներուն, ծոգոյէ լայն դլխարկը անցուց զլիսուն, կերակնօրեայ լիայլուն, բարձրակրունկ կօշիկները հազաւ եւ ամբողջով ինքզինք կեցուց հայելիին առջեւ.

— Եւրօպացի կնոջ մը նմանեցար, ազջի'կս. բայց ինչո՞ւ այսքան դուզելի-զարգարուել, — ըսաւ մայրը՝ ներքին մտահալութիւնը չկարենալով ծածկել:

— Մամա', դացած տեղս նշանաւոր ստնդոկ է'...

Գնաց մինակ. կին էր եւ կարծեց, թէ հերոսութիւն էր բրածը. կրնար քոյրը հետը ասնել. չմտածեց զուցէ այդ մասին: Աւ դնաց-մտաւ շքադուսէն: Ներսը, սրահին մէջ սղատեակի մը հարցուց Գարեգինի հան ըլլալու մասին: Սղատեակը յայտնեց, թէ պարտն Գարեգինն հաս էր քիչ առաջ: Ստեղծ իր յանցանքը պարտկելուն համար՝ ժողեցաւ ու աթոռ մը հրամցուց սեղանի մը առջեւ: Բուր ներկաները իրեն նայեցան: Նստելով աթոռին, սիրտը տրտիկեց արագ-արագ, ամհնալէն այտերը վառ դոյն սափն ու այրեցան: Եւ հակառակ ներքին կտակածանքի մը, Սոնա սղատեց, սղատե'ց...

Կէս ժամ ետք, սրահ մասն երկու դաղտնի ստտիկոններ եւ հարցուցին Սոնա Աղայեան անունով կնոջ մը մասին: Սղատեակը մօտեցաւ անձանօթ տիկինին.

— Արդեօք դո՞ւք էք տիկին Սոնա Աղայեանը:

Սոնա անակնկալի չեկաւ. ժամադրուած էր եւ կարծեց, թէ Գարեգինն էր իրմով հետաքրքրուողը.

— Այո', եկա՞ւ պարտն Գարեգինը:

— Ո՛չ, տիկին. ձեզ կը հարցնեն ահա այս երկու պարտնները:

Սոնա սալշած նայեցաւ օտարականներուն:

— Բայց ես ձեզ չեմ ճանչնար, — ըսաւ ու ելաւ ստօթի:

— Ժամադրուած էք, տիկին:

— Այո:

— Քալեցէք ուրեմն. ձեզ կը տանինք ժամադրուողին մօտ:

Սոնա քալեց, երկու դաղտնի ստտիկոններուն միջեւ ինկած: Դուրսը, կառք մը կը սպասէր: Նստեցուցին Սոնան եւ իրենք եւս նստեցան երկու կողմը: Քիչ ետք, Սոնա կը մտնէր ստտիկանատուն: Հարց ու փորձէն Սոնա սղողեցաւ, դալիպցաւ եւ սլախ մարէր, եթէ ծանօթ մարդերէն մէկը չբռնէր թեւէն:

— Տիկին Աղայեան, մեղի հասած տեղեկութեան համաձայն, դուք կը գրողիք անբարոյականութեամբ, ճի՞շդ է:

- Ե՞ս. ո՞վ է այդ ստորը, — ճշայ Սոնա :
- Ըսէք, տիկին Աղայեան. այս՞ թէ ոչ :
- Ո՛չ. զըստարուսթի՛ւն է այդ ստորին մարդուն կողմէ :
- Ի՞նչ տախթով պանդակ կը գանուէիք :
- Մէկը պարտական էր ամուսինիս. լուր տուաւ, թէ հոն կը գտնուէր. հետաձայնով կանչեց, որ երթամ դուժարը ստանամ :
- Ինչո՞ւ ամուսինդ չգնաց ստանալու :
- Ամուսինս տունը չէր եւ գործի է...
- Ինչո՞վ կը գրաղի :
- Անձնական օթօ ունի. ներքին յիժներու վրայ փոխադրութիւնով կը գրաղի :

Քննիչը նայեցաւ սուր Սոնայի դէմքին, ապա նայեցաւ երկու պաշտօնեաներուն .

- Լա՛ւ. տիկին Աղայեան, կրնաք երթայ. ապաա էք. բայց ոչ, սպասեցէք. կրնա՞ք ըսել անունը մարդուն, ու պարտական է ձեր ամուսինին :
- Կը կրչուի Գարեգին, բայց ինչեան՝ չեմ գիտեր :
- Այդ դիմաւորու համար, կը զրկէք ամուսիննից հոս, յայդ ստաւտեան ժամը տասին, — եւ տուաւ իր անունը, իբրեւ ուղեցոյց : Ապա բառ ներկայ գաղտնի ստախաններէն մէկուն, — ապահովէ տիկինին դարձը գէպի տուն, եթէ կարելի է :

Ոստիկանութիւնը յաջորդ օր, լսելէ ետք Արմենակը, ետ զրկեց իր դործին : Ստացած տեղեկութիւններու վրայ՝ զայանի ոստիկանները գտան Գարեգին կոչեցեայր եւ ոստիկանատան մէջ ապուր ծեծ մը քաշելէ ետք, քանըչորս ժամուան արգելափակման դատապարտեցին զինք : Աստղիկ, հօրը թոյլտարութեամբ՝ հոս ու հոն գնաց, իրեն նուիրուած ոսկեղէնները ծախեց դադանօրէն եւ, սմբողջացներով ոստիկանատունէն պահանջուած հինգ հարիւր ոսկի գումարը՝ տարաւ յանձնեց մեծին եւ աղառեց իր սիրահարը :

Ոստիկան մը երկու օր ետք, զխախ ներկայանար տիկին Մարիցայենց տունը .

- Գրար մը՝ Սոնա Աղայեանի անունին :
- Սոնա ճնշուած, մուսլլ նստած էր նեղճնտեղեակին մէջ. քօլին էր Գոհարիկը : Ընդունարանին մէջ կիներ կային : Սոնան ստախանատուն տարուելուն զիշերն իսկ, Աստղիկ Մեղայեան եւ Գարեգին տարածած էին քաղաքին մէջ լուրը, դաւնաւորելով անբարոյստեղծութեան մեղքը, որ կը ծանրանար Սոնայի տնտան վրայ : Ու հետաքրքրութենէ, սրտցաւութենէ մղուած կիներ, երկու օրէ ի վեր ելումուս կ'ընէին հոն : Ոստիկանին երեսնայր թեր ու դէմ կասկածներ արթնցնէր զխախ ներկայ կիներու միտքին մէջ : Սոնա խոժոս ու վշտակից նայում ճներու տակ, գնաց գէպի գուռը .

— Մատամ, ստորադրեցէ՛ք, եթէ կարելի է, — ոստիկանը դէմ ըրաւ տեսք մը, ուր Սոնա ստորադրեց :

Սոնա պառակց ծրարը ցուցալրարար . ներկայ կիները մէկէն նկատեցին Սոնային դէմքին ճառագայթումը : Սոնա պահարանէն հանեց հինգ կոտր հարիւրնոց զրամները .

- Ահա՛ ստորնութեան տուգանումին դրաւականը. տեսէ՛ք եւ դասեցէ՛ք :
- Տիկին Մարիցա նոր միայն լեզու ելաւ .
- Տեսա՞ք. որ կ'ըսէի, չէիք հաւատար : Այդ սրիկան դառաւ իր ար-

զար պատիժը, ստախանուլիեան առջև թէ՛ ծեծ ուտելով եւ թէ պարտքը տալով, — ցուցադրարար երու ոտքի ու գրկելով աղջկան դլուխը, տաք համբոյր մը դրաւ անոր մարմար եւ սպիտակ ճակատին, — միշտ սպիտակ մնայ այս գեղեցիկ ճակատը, աղջիկս...

Մեկնիլ ուզող կիներն ալ կրցան բնել նոյնը.

— Ազրբ'ս, աղջիկս: Մենք ալ կ'րտէինք, թէ...

Զրպարտութիւնը արպարութիւն չի ճանչնար. ու դէպքը մնաց խարանի պէս. պոյն սրբելը անկարելի էր: Արմենակ վերջին անգամ կտուելով Մարդոյն հետ, ուղղակի դնաց ծնուցին քով. պոռայ, սպաննայ, քսլար «ինկած քած» անուանեց, «եթէ այդ մարդը անգամ մըն ալ հոս ոտք դնէ՝ ես զխեղձ բնելիքս», ըստ ու թքնելով այդ օր փոռած դորդին վրայ, ձգեց դուրս ելաւ: Գնաց Սոնային.

— Պատրաստուէ, Սոնա. ասան օրէն կը մեկնինք. օթոն ծախեմ եւ մեկնինք այս հասած քաղաքէն, — եւ, աստջին անգամ ըլլալով՝ համբուրեց անեղծօր ձեռքը, պազաւ քենիներան թուշը, — աւել-պակաս հալալ բրէ, մայրիկ, — աւելցուց:

Արմենակին կը թուէր, թէ աստջին հանդիտա օրը կ'ապրէր կեանքին մէջ, հետու, անմասն բոլոր բոխ-բաւաներէն:

Սոնային համար այդպէս չէր. ան միայն համակերպեցաւ ամուսինի առնելիք քայլին: Իրեն աստէին թող դժոխք, միայն թէ՛ հետու ըլլար տալերու ներկայութենէն:

Այս ուրախութիւնը, որ կը տատանէր երազի եւ վերջիշումի կտորոյտ մշուշի մը պատաստին, մէկէն ցնդեցաւ ու Սոնա ահաւոր ճայթիւնէն արթնացաւ. մտիթին մէջ, շուրջ բոլորը հողով ծածկուած էր. ականջներուն մէջ դեռ կը պրնդար ճայթիւնին արձագանդը: Խարխալելով դնաց դէպի բաղմոցները: Ականջ գրաւ. աղսց շնչատութիւնը բնական էր. յետոյ սողոսկեցաւ դէպի մահճակալը: Արմենակ չէր խեղար. բարձրացաւ մինչեւ կուրծքը. կուրծքը կը արտիէր. հանգստացած՝ ետ ինկաւ իր միտակերին վրայ եւ այլեւս քունը չմտաւ աչքը: Չէր կրնար ստուգել պոտահածը: Պիտի հակէր մինչեւ լուսարաց:

Հոտ-հոտ սոււրբեր կը պայթէին հետուն որոտալով:

Առաւօտուն, անեցիները զարմացկոտ հոյակայքով պիտի փնտռէին աւազի ու խիճի տղբերը: Խոհանոցին պատը թղաչափ, տոստաղին կպած ծակի մը աւերը կը ցուցադրէր. միջնորմը նոյնպէս միբուտը էր. խոկ ո՞ւր էր կորած մնացորդացը, հարց տուաւ Կարօ եւ ինքն ալ եղաւ պոյն պանոզը: «Ահա», դոչեց: Նայեցան: Խոշոր առնէտի նման սեւ, անտիրելի իր մը մտած էր պատանկիւնին մէջ փորած բոյնը ու մեռած հոն: Խոհանոցին մէջ, աղա-կեղարանին ներսը խառնակութիւն կը տիրէր. կտորած ամանեղէնը քիչ էր, սակայն ջարդ մը կը նկատուէր ջուրի եւ սուրճի գաւաթներուն միջեւ: Վնասը մեծ չէր, թէեւ հազար արստանք պիտի խլէին մթարուած մեծ ու պզտիկ իրեղէնները: Կր տեսնուէր, թէ կսլը հրթիռ մը խաւարը պատուելով խուժած էր պատին դէմ՝ ուժը սպրտելով բացուածքին մէջ. յետնեալ թափով անցած էր միջնորմը, բայց պաղած, հատած՝ ի վերջոյ դացեր-խորուեր էր պատանկիւնի փորուածքին մէջ, անշարժացեր: Աստուած նայեր էր բնակիչներու երեսին:

— Այսօր խոկ դանելու է նոր բնակարան մը հետաւոր թաղի մը մէջ ու փոխադրուելու է հոն, — տիկին Սոնա մճառական էր. ոչ ոք առարկեց:

— Գտնելու ենք, — արձայանցեց պտրոն Արմենակ:

Յաջորդ մէկ-երկու օրերուն, Ագոյեան Արմենակ, ծանօթներու թերաբնութեամբ տեսաւ կահաւորուած առն մը, Յրդ յարկ. տանակէրը ձգած էր բնակարանը դրացիներու խնամքին, ինք՝ ընտանիքով հեռացած էր շրջանի անապահալութենէն. այլազգի էին... Բնակարանը լաւ դիրքի վրայ էր. Արմենակ հաւնեցաւ տեղն ու միջախորդ: Սոնա եւս զնայ տեսաւ:

Կիրակի էր, երբ փոխադրուեցան: Նախօրեակին, պտրոն Արմենակ խցիկը էր տրտաքին պատին վրայ հրթիռէն բացուածքը, ապահովուելու համար, թէ հոնկէ դուրս պիտի չկարենար մուտք գործել ներս: Ներսը ամէն բան կը մնար իր տեղւոյն վրայ: Իրենց հետ սպին գոյգ մը խոշոր վալիզներ: Տրակին Սոնա անոնց մէջ սեղմրանց քանի մը կտոր հազուապէս, ներքին, դիւզերային շորեր ու լաթեր, մէկ քանի պնակեղէն, վեցեակ ջուրի եւ սուրճի զաւաթներ, կարեւոր մանր իրեր... Թէեւ արդէլ չկար զննեալներու կողմէն — անոնք գէժ էին բնակչութեան հեռացումին եւ շրջանի ամայացումին — Ագոյեանենք ելան-գոյցին դրոսաշրջիկի նման թեթեւ, պանդակ իջնոցի պէս պաշտօնական ու տեղաւորուեցան նոր բնակարանի մէջ, Յրդ յարկ, լայն պողոտայի մը վրայ նայող: Սակայն իրենց տան գոյքերուն ալյուպէս յրուած ու անպաշտպան մնալը, խեղդուած փողոցի մը մէջ, ստաջացայց նոր պատճառ մը մտահոգութեան, որ նոյնքան պորաւոր կիրք պարձաւ, որքան կեանքի վրայ գործուրալու բնագրային զգացումը:

Յետոյ՝ ուսմբերուն ձայնը, պայթիւններու սրտան ու անկումը ո՛չ խլացան եւ ո՛չ ալ անսխալութեան ապահովութիւն բերին Ագոյեաններուն... Առաջին գիշերն իսկ սուր մը այցելեց շէնքին տանիքը:

Երկու ամիս ետք սկսաւ Բլրամրոցին գէժ հակառակորդին յարձակողականը: Անտիկ ամրոց է, կ'ըսէին. կը պատմէին հազար ու մէկ պարմանայի նորութիւններ անոր կազմութեան, ամրութիւններու մասին: Անոր գրաւումը, որ կը նկատուէր օրերու հարց, պիտի տեսէր երկու ամիսէ աւելի: Տրակին Սոնա, երբ գրաւում չունէր խոհանոցին մէջ, կը նստէր պատուհանին քով եւ անոր մէկ անկիւնէն կը դիտէր մուխի, բոցերու մէջէն համբառցող մարտկոցներու ոմրային ժայթքումին տեսարանը: Գիշեր-ցերեկ կը ոմրակոծուէր Բլրամրոցը, մինչ Ջրբուխին շրջանէն կը փախչէին ընտանիքներ, տ'յն վախով, թէ կարող պիտի գտնուէր վերջինին, երբ հակառակորդը տիրէր Բլրամրոցին ամբողջութեամբ: Եւ տրակին Սոնա, դիտելով պայքարի ելքը, կը մտահոգուէր իրենց առնով: Գիտէր, որ գրաւուած վայրերուն մէջ, կռիւներէ ետք կը սկսէին կոպտուան ու թալանը բնակարաններէն ներս: Ի՞նչ պիտի ըլլար իրենց գոյքերուն վիճակը. պիտի նստէի՞ն կրկին մոխրի վրայ, Յոր Երանելիին պէս...

Ինչ որ պատահած էր կեանքի տանը շորտամեայ սեմը կոխելէ առկին, եւ ինչ որ նկարներ — լուսցքի դացող մօր, շարողի տալերու, սեւադէմ Գարեգինի, Կարապետի — մուրթ դոյներով քապլոններ, կախուած Սոնայի յիշողութեան Լացի Պատիւն, կ'երեւէին այժմ տփուռնած, գունաթափ, որոնց վրայ ներկան կախել կը փորձէր մտացութեան կապոյտ, անթափանց վարդոյրը: Նոր առն փոխադրուելէ ետք, Սոնայի քունը չէին խանդարեր, ալյուս անցեալին մէջ նկարահանուած, տրամային շարժապատկերներու նիւթն ու դերակատարները: Ասոնց յոխարէն՝ Սոնա կը տեսնէր երազին մէջ արծաթէ դաւաւ-պատառաբայ, դանակներ տրցակով, խառնիխուռն, նորոյթ բազմոց, բազմածով հայելիներ, որոնք ամէն ինչ կը խորացնէին ու կը բազմապատկէին թիւը, սեղան-աթոռներ՝ շարուած քով-քովի: Կը տեսնէր պա-

տերէն կախ տղոց հարստնեկան հարս ու փետոյ նկարներ . իսկ թոռնիկներ՝
բնաւ չէին դար երազին, որովհետեւ, կը խորհէր, քունին մէջ դատելով, թէ
անոնք նիւթական դիմադիժ չունէին ստիպելին, ինչպէ՛ս տեսնէր զանոնք... :
Ու չէր կրնար դատարոջէլ հարս-փետոյ թակէ երիզով շրջանակուած նկարնե-
րուն մէջ հարս բլրայիք աղջիկներուն յստակ պատկերացումը :

Նոր բնակարանին մէջ ամէն բան իր տեղն էր : Հարուստ վաճառական
մըն էր, բռին, մարութ ու կրկիկ բնտանիք, բարքով ու վարքով մերուած
չըջանի բնակչութեան սովորութիւններուն : Սոնա բնաւ աչք չունեցաւ դոյ-
քերուն : Չորսով սեղմուեցան հիւրանոցի սրահին մէջ, կը պտակէին շոր դեա-
նին վրայ կամ բաղձոցներու մէջ, կիտով երկարած վիճակի մէջ .

— Շուտ վե՛րջ գտնէր պատերազմը, երթայինք հանդիստ քուն մը քա-
չէինք մեր տան մէջ, — կ'ըսէր Սոնա առասնեկը, կտարտուք զգալով ոս-
կորներուն մէջ :

— Հը՞, նորէ՞ն սկսանք, — կը նեղորակը Արմենակ :

— Էհ . կ'ըսեմ, որովհետեւ ամէն կին իր տունին կապուած է ամէն
մէկ մասնիկով իր էութեան . տեսող մը տունին վարժուած կատու է, որ աէր
կը փսխէ, բայց բնակարանէն չի բաժնուիր :

— Իսկ շունը՝ իր աէրը . ո՛ւր ան, ինքը հոն :

— Կրնայ բլրալ . շուն չեմ պահած . կատու ունէ՛իք : Եօթ տարեկանիս
կը նստէի հորս ծունկերուն վրայ, կատուն կ'ելլէր-կը նստէր գոգս . երա-
նելի օրեր էին . մանկութիւնը թողարարութիւն է . ո՞վ կրնար ունենայ այդ
պատկերացումը՝ այն տարիքին :

— Մամա՛, գոն պղտիկ եղև՞ր ես, — Կարօ կը հեգնէ՞ր, թէ հետա-
քրքրութենէ մղուեցաւ :

— Ձէ՛, ապա . մեծ ծնած ըլլալու համար է, որ շատ շուն ու թուլոյ
փէշերու շարջ հաջեցնել տուի . հայրդ ալ իր թէ հովիւ էր, միշտ շունե-
րը վրաս քշեց, զիս փախցնելու, թէ գտնոնք չկարենալ զսպելուն համար :

— Պապա՛, ինչո՞ւ շուներդ չես դապած... :

— Լո՛ւէ՛ գոն, Կարօ, — բարկացաւ Անդրանիկ . մինչ հայրը կ'ըսէր .

— Երբ մեծնաս, ցոյց կու տաս հաւնարդ... : Իսկ այսօր երկնցիր մին-
չեւ հոնտեղերը, աչք նետէ մօրդ տունին եւ լուրեր բեր : Կ'ըսեն, Ջրբուխն
օրերը մօտեցեր են . շատ-շատ շարաթ մը կը քշէ :

— Մերինները մէկ օրէն կը գրաւեն, — Անդրանիկ կը խօսէր ինքզինք
համոզելու պէս :

— Հա ես՛, կը գրաւեն . անցեալները շատ պէշութիւններ ըրեր են,
առներուն վրայ կրակեր են . տեսայ . շատ մը շէնքերու պատերը ծակծակեր
են, ապակի չեն թողած՝ ջարդեր փշեր են : Մերիններուն համբերութիւնը
բերաննին հատեր է :

— Ամէնքը չեն . խմբակ մը կայ . այդ խմբակին գտար պիտի տան... :
Միւսներուն հետ գործ չունինք : Անոնք իրենք պիւրենք կը յանձնեն . հակա-
ռակորդին ձեռքը չեն ուզեր իյնալ :

— Դէ՛ . խօսքը խօսք ծնաւ . ես ինչ կ'ըսէի, խօսքը ո՛ւր տարիք : Մենք
ո՛չ քաղաքականութենէ կը հասկնանք, ոչ ալ կսխէ, գաղբեցէք քաղաքադէս
ըլլալէ . արդէն այդ ապրանքէն շատ ունենալէն այս երկիրը մինչեւ հոս հա-
սաւ :

— Ճի՛շդ է, մատամ . բսածդ շիտակ խօսք է :

— Եթէ այսքան շուտ կը հասկնաս խօսքս, քիչ մըն ալ շուտ դատել

զիտցիր եւ տղազ փորձանքի մի՛ գրկեր. հիմա, այդ կողմերը շո՛ւնը չի հա-
մարձակիր պարտիլ:

— Երէկ հոն էի, — ջաջացու Կարօ:

— Ազէկ գործ բրեր ես, զգո՛ւմ: Մարդ ըլլայիր, խելքդ կը դարձա-
ծէիր. խոկ կը տեսնեմ, որ կուտ մը խելք չկայ այդ խոշոր դրուխիդ մէջ,
որովհետեւ փախի զգացում չկայ սիրտիդ մէջ...

— Ինչո՞ւ. անոնք խելք չունի՞ն, որ չեն փախնար, ազբարս:

— Երբ անոնց պէս ըլլաս, ըսելիք չունիմ, որովհետեւ կը դառնաս մե-
քենայ, օթօ, որ զեկը ձդես, քեզ անպսնդ կը գլտարէ, հասկցա՞ր, խելք
ազբարիկս:

— Վերջացուցէ՛ք, — սաստեց մայրը:

— Վերջացուցի՛նք. ահա ես գացի. ուշանամ, մի մտահոգուիք. զէջ
ըլլայ՝ կը մնամ հոն՝ ուր եմ. չփնտռէք զիս:

— Հասկնայի՛ է, ազաս. Աստուած հեադ:

— Ե՞ս:

— Եթէ եզբորդ հեա ես, գնա՛. ոչ՝ կը մնաս տունը, հասկնալի՞ է:
Պարսն Արմենակ եւս պատրաստուեցաւ: Սոնա անոր նայեցաւ. քիչ մը
մտահոգ.

— Դուն ո՞ւր. կ'ըսէի միտսին քիչ մը Փօլենց հանդիպէիր:

— Աւրիչ առթիւ. տեղ ունիմ երթալիք. նայիմ գործատէրը թո՛նչ ե-
ղաւ. ամէն օր գրամ կ'ուզես. երթամ ես ալ իրմէ ուզեմ:

Մահաաբարուսը պէտք չունէր Դիտլինէսի լամբին, փողոցը քաղոց ու
չարժող մարդոց մէջ գիտկներ փնտաելու: Անկոչ մահը ամէն տեղ էր ու
կեանքերը կախուած էին մաղաթեղէն: Ակնթարթի մը մէջ սղջը կը մեանէր,
խնդացողը՝ կ'ողբար իր մէկ մեռելը: Կոյր գնդակը խարխալելը մտացած՝
աչքաբացութիւն կ'ընէր...

Ու տաք ամառ էր:

Բլրամբոցին զրայ հակառակորդին ճնշումը թեթեւցնելու համար, հա-
բուէն սկսան ամբակոծումի կոյր արշաւ մը: Հետարձակ թողանթիներ,
հրթիռանեա մարակոցներ պայթիւններով լիցուցին Կիտրոնենիքի շրջաննե-
րը: Մարդիկ գողրեցան իրենց գլխուն տէր ըլլալէ. կը փախչէին շուքերու
պէս, մութ գեանայարկերուն խոնան ու բորբոսը իրենց հտոր խառնեցին
քրտնածոր մարմիններու տաք շունչին, չէզոքացուեցան, երբ մարդ, կին,
աղայ ու աղջիկ օրստան քսանըչորս ժամը հոն անցընելը սովորութիւն ըրին:
Գիշերային մութին մէջ լոյս արձակող մամը կամ քարիւղալամբը եւ դուրսի
փախը հազար օւ մէկ կնճիւ ու խաղ ծաղկեցուցին մանուկներու անկնճիւ դէմ-
քին...: Ո՞ւր էր տեսնուած այսպիսի կսիւ կամ պատերազմ, որ կը տեւէր
սասնեւութ ամիսներէ ի վեր...:

Եւ տաք ամրան մէջ, օր մըն ալ ըսին, թէ Բլրամբոցը ինկա՛ւ:

Բլրամբոցին հեռեւեցաւ Ջրբուխը: Կը թուէր, թէ մղձաւանջը փարա-
տած էր եւ տիկին Սոնա խորհեցաւ, որ այդ գիշեր հանգիստ քուն մը պիտի
քաշէր: Երեքը պտակեցնելէ ետք, ինքն ալ ինկաւ մինտէրին եւ դոցեց աչ-
քերը...

«Արմենակ չինացիի աչքեր ունէր եւ ձեռնասայլով զինք կը տանէր պա-
լատ. համբան լայն ու բուացուածի պէս մաքուր էր. զինուորներ բարեւի կը
կենային համբարին: Պալատը կը նմանէր հիւանդանոցի, սակայն նըրոսերը
հրեշտակի քեւեր ունէին: Ինք կը կրէր սպիտակ, սպիտակ, ոսկեքելուած
շարեր. մետաքս շալ մը կը ծածկէր մէկ ուսը եւ կ'իջնէր յետասկողմէն մին-

չեւ գետին: Գլուխին ունէր սպաւանգակուռ քաղ մը...: Գահաքոոր երկինք կը կամբաստնար եւ ինք վրան էր եւ սրտամաք կը ոչար՝ «Թոնեցէ՛ք գահը, իջեցուցէ՛ք գլուխը: իջեցուցէ՛ք, գլուխս դարձաւ, իջեցուցէ՛ք, ինկա՛յ...»: Եւ ինկաւ քարէ աստիճաններուն զարմեւով գլուխը: ցաւ չէր գգար, արիւն կը ժայր՝ էր սալաւարին ներքեւէն: Ինք արիւնի մէջ կը լողար...: Ձեռք մը կը քաշէր քեռերէն, սակայն մարմինը անշարժ կ'լլած էր սալաւարին...»:

Սոնա մէկէն արթնցաւ: Արմենակ ծոած էր իր վրան՝ ուսը կը ցնցէր: Կենսաբանի սրտաբեր կ'ամպոտէր դէմքը: Մոնա նստեցաւ: շարժը կը փնտաէր երազին հեռերը: ուրեմն, իրականութիւն չէր, սը ինք մեռաւ: այս դիտակցութիւնը միտքարական էր: բայց ահա մարդը կը փոփոար ականջին տակ:

— Ելի՛ր պատրաստուէ՛, սուն պիտի երթանք...:

Սոնա ճմտեց աչքերը: գեւ լրիւ ինքզինքը չէր գտած եւ մութ էր տակաւին:

— Ի՞նչ կ'ուզես դուն: ինչո՞ւ չես պատկամ:

— Պատկեցայ-երայ: քեզ արթնցոյցի, սը շատ, առտու կանուխ հոն բլլանք...: Կոպրուար թաղերուն մէջ սկսած է:

— Ինձի ի՞նչ, բան մը չունիմ ես: Թող սը քնանամ: Երազս խանդարեցիր, — Սոնա ինկաւ կրկին միտաէրին վրայ, աչքերը փակեց, — եւ կ'ուզեմ պատկիլ: հետացի՛ր մօտէս...: Հոգէս՝ն Գարբիէլի պէս ցցաւեր ես դրէլաւս...:

Արմենակ եւս երազ էր տեսած: տուներնին կը թայլէին: միտակ էր, կողոված էին զինք պատուհանի երկաթամուկին եւ սուրս կը կրէին տան գոյքերը: գուար հանած էին տեղէն: բայց պատուհանը ո՛չ փեղկ ունէր, ոչ երկաթամուկ: իսկ ինք ձողի մը կողոված էր եւ չէր կրնար շարժիլ...: Կրնար սրտալ: Երբ սրտաց, արթնցաւ: Տան կողովուարը դէշ ազգած էր վրան: Արթնցոյց Սոնան, սրտկոպի վախը բաժնուի կնոջ հետ: Սոնա աւելի ձեռնբէց էր, քան ինք:

— Ելի՛ր, կ'րտեմ: տունը կը կոպրուաէին:

— Ո՛չ: պիտի քնանամ: գո՛ն զնա միտակոյ, Երթալ սը կ'ուզես...:

Արմենակ չպնդեց: գուցէ թէ վաղ էր գուրա ելլել, բայց մութնաւրոյին մէջ, փողոցէն ազմուկ մը վեր կու գար: ինքնաշարժի երթեւեկի ճոխնէր կը պրպէր սնհամբեր ջիլը: ս'ու ճնարու, գրկուելու հոյ մը բանած էր օճիքը՝ կը ցնցէր զինք: Հակառակ այս բուրբին, տեղի տուաւ կնոջ մերձուսին տոջիւ, երկնցաւ բողմոցին, քիչ ետք քունը զինք օրօրեց: աչքերը փակեց ու ննջեց խելօք մանուկի պէս: Թէ սրքս՝ն ժամանակ էր սնցած, չգիտցաւ, ժամացոյցին չէր նայած: Ընդստա վեր ցատկելն ու կնոջ սուր ցնցելը մէկ բուրաւ: յտակ կը տեսնէր իրերը: կնոջ դէմքը քունէն հանդչած՝ ծիրանեղօյնը հաւտքած էր այտին: պիտի ուզէր պազնել թուշը, սակայն չհամարձակեցաւ: կը պտկսէր սժը արարքին:

— Սոնա՛, մատած Սոնա: Սոնա՛, արթնցիր: ս'ու մնանք պիտի...:

— Նորէ՞ն տնկուեր ես զլիտու...: Ի՞նչ կայ: սրգե՞րդ մէջդ կը խաղտն:

— Հոպուէ՛, երթանք, բոլորը թափած են Ջրուի:

— Թող թափին:

— Գոյքերը կը տանին, մէջտեղ կը մնանք:

Սոնա նստեցաւ: Չգայնացած էր, գրեթէ ճշայ մարդուն երեսին:

— Տօ յիմա՛ր. ջոււ ու ջուալի՞դ մնացին մարդիկ, որ կրակի վրայ նստեր՝ ծախ կայ, կը պոստս...: Ա՛խ, չմեռայ, որ ալտաթիմ երեսիդ իմաստակ արտայայտութիւնը կրելէն. մտացա՞ր տղացի հետ կսկը, թէ մաման պիտի չհրթայ, գուն ասանձինդ կրնաս երթալ, չըսի՞նք քեզի:

— Տունին մէջ, ինչպէս կ'ըսեն «Ջուրը պղտիկին, խօսքը՝ մեծին», ուրեմն, երբ ըսի՝ ելի՛ր, պիտի ելլես, հրաման է:

— Կեցցէ՛ մեր Տոն Քիչտիթը. հրամանը՝ փաշայէն է, քաջութիւնն ալ թող գործած ըլլայ տան Քաջ Եազարը...: Այս եսապետութեան մեղքը չէ՞, որ կը կրեմ...

Տիկին Սոնա երբ կը սկսէր ծաղրել ամուսինը, կ'իջնէր կամաց-կամաց կամակարգութիւնը: Կարհամարհէր, բայց կը խղճար վրան: Վերջին ժամանակները, Արմենակին կը նայէր խորթ մօր մը պէս, որ կը զգայ որդեգրուած որբի մը հանգչի դուրդուրանքին պահար, բայց չի կրնար, կոպտելով հանգերձ՝ չխղճալ անոր անճարակ վիճակին: Նման պահերուն, ծաղրանքին ընդմէջէն մանր խնորանքներ, պատուէրի ձեւի տակ, Սոնա կը նետէր դէպի ամուսինը: Արմենակ կը գործադրէր պատուէրները ուրախութեամբ: Այժմ ինքն էր, որ եղաւ նախաձեռնարկը, երբ զգաց, թէ Սոնա կը սկսէր փափկանալ:

— Մինչեւ պատրաստուելո՞ւ, սուրճ մը պատրաստե՛մ. կ'ըլլա՞յ:

Սոնա թեւերը կանխած վիզին ետեւ, կ'աշխատէր ջարդել Ֆրիդրիխան թուլիամութիւնը չբաւարարուած բունին: Ոտքի էր, յօրանջեց.

— Երբ կարտոնն է թելադրուող, տիկինը ըսելիք չունի:

Հազուա՞ծ էր, երբ Արմենակ բերաւ երկու բաժակ սուրճը: Խմեցին լռելեայն: Պարզուած դաւաթները մնացին սեղանին վրայ: Պիտի քալէին դէպի ելքի դուռը: Բան մը մտացածի պէս, մէկէն Սոնա ետ շրջուեցաւ. նայեցաւ. իր երկու տղաքը կը քնանային: Անոնց գէմքերը մանկական անմեղ խաղաթիւն ունէին: Անդրանիկին սէքերը կը ստուերէր յօնքաշուքը. Կարօ մանրիկ-մանրիկ կ'ծկուած էր ծածկոցին տակ. ան չէր ցոյց տար հասակը, զոր քաշեր էր կոխներու ժամանակ: Մայրը զըջաց, որ շատ էր կոպտած զինք...: Սիրելը կարօտ դարձաւ, ու կարօտը՝ խոյանք: Տիկին Սոնա վազեց եւ ինկաւ պղտիկ տղուն վրայ եւ սպառ լեցունիկեկ թուշը. չզոհացաւ թուշով, սպառ ճակատը. յետոյ, կարծես, լրջացած, եկեղեցի մանող կնոջ մը երկիւղածութեամբ, կեցաւ մեծ տղուն բազմոցին առջեւ, ծունկի իջաւ ու տաք համրոյր մը զրաւ Անդրանիկի գոց կոպերուն վրայ: Անքօ խտիղ ունեցաւ քունին մէջ ու մայրը ցնցուեցաւ, անդրճիրիմեան սարսուռ մը ռաքի նետեց զինք: Կարծեց, թէ սրբապատկեր մը համբուրեց եւ սրբապատկերը նրկարին մէջէն խօսեցաւ իրեն: Եւ յանկարծ զգաց տիկին Սոնա, թէ իր ըրածը անբնական բան էր. դեռ բնաւ նման պահ մը չէր տպրած եւ ոչ ալ զգուած էր դաւակները քունին մէջ...: Վասն ինչո՞ւ ըրաւ այդպէս...: Պատասխանը պիտի տար ամուսինը.

— Ինչո՞ւ մնաք բարով, կ'երթանք ու կը դառնանք կէսօր չեղած:

— Ինչո՞ւ մնաք բարովի իմաստ կը տաս. դասակները սիրելը յանցա՞նք է, — բարկացաւ ու կոպտեց ամուսինը, — դուն բնաւ բան պիտի չհասկնաս հողիէն. քալէ՛, կ'աճաստարէի՛ր. զղեակը արդէն կողոպտեր են, կ'ըսէիք:

Տէր եւ տիկին Ազալեաններ իջան փողոց: Լուսաբացին շողերը գետ քոյր չէին նետած լեւնոպտղաթնկրուն, կիտամութ էին նեղ անցքերը, որոնք նոյնիսկ բռնուած էին փոխադրական կիրքով: Քաղեցին մայթը բռնած: Ամէն

տեսակի հասքեր, բեռնաւոր անային գոյքերով պերճանքի իրերով՝ կը խիզարէին զէպի թիկունք. պարապ օթոններ, ձեռնասայլեր, սրունք նպարեղէնի փերեզակները կը գործածէին, այժմ կը հրաւիրէին Ջրբուխին կողմը, ուրկէ կը ժայթքէր կորցուելիք հարստութիւնը, ամբարումը կողոպտուաներէ՝ նախկին դինեարներու կողմէ... : Ու մարդիկ, կիներ, երեխաներ կը կրէին իրենց ուսին, կոնակին վրայ, կամ գրկած վիճակին մէջ, ինչ որ կարելի էր փոխադրել ինքնազուտի, ատանձին, սփին ներածին չափ մեծկակ : Տիկին Սոնա այլեւս չէր նայեր կորստախններուն : Կը վազէր քայլելով . ամուսինը ստիպուեցաւ դիտել սայ :

— Ի՞նչ կը վազեա . արգէն կը հառնինք :

— Վազե՞լ . ինչո՞ւ վազեմ . կ'ամապարեմ, որ հասնիմ զդեակիդ կողոպուտին : Երբ մարդիկ զուտի, պատուհանի փեղկեր իսկ կրնան տեղահան ընել ու շարկելով՝ շխպնել տեսողներէ, քաւ ջուլ ու ջուլը երէկուրնէ հանած-ստրած կ'ըլլան... : Ախտ՞ս, ուչ մնացեր ես, պարտն ա՛՛Աղայեան, կոմս աը Մոնթէ Քրիսթօ, — իր սովորական քայլուածքն էր եւ Արմենակին դիտողութիւնը անսակի բլլալուն, Սոնա ուղեց կրկին ծաղրի բաժին մը հանել անոր : Ու սի՛րա ունէր տակաւին հեղնել, երբ ամէն քայլափոխին երազին սալը կը տեսնէր առջեւը, սաքին ասկ : Իր միակ մխիթարութիւնը այն էր, որ ժայթքող արիւն չէր տեսներ ճամբուն վրայ : Այդ էր զուցէ, որ զինք կ'առաջնորդէր նեղլիկ փողոցներէ . կը խուսափէր լայն եւ կոկիկ տուներով եղբուած ճամբաներէն, երկարել տալով հանդերուանին ուղին, որ իրենց տունին ասջև կը հանէր : Մինչ Արմենակ ակնապիշ՝ կը նայէր մարդոց, զորս կը ճանչնար իբրեւ սրատուտոր քաղաքացի, բայց ահա կողոպտելու կիրքէն բոնուած՝ դարձեր էին իրենց շահին բեռնակիրը : Սոնա կճել ուղեց .

— Ետ կը մնաս . չհասնի՞ս ինծի : Ինծի կը թուի, թէ կ'ամչնաս դուն քեզմէ, որ խառնուեր ես թալանի մարդոց ամբուխին : Երբ ինքն իր մէջ մարդ անհեղձ ու մարտի է, ամչնալու պէտք չունի . կ'երթաս տունդ պաշտպանել զող-աւաղակներէ...

Արմենակ հասաւ կնոջ .

— Քեզի բան մը ըսե՞մ . Ջրբուխը մէկ ու կէս օրէն զբուռեցաւ, որքան ճիշդ է չեմ դիտեր, բայց վստահ եմ, որ անիկա մէկ ու կէս օրէն կը մերկանայ իր զոյքերէն, փայտեղէնէն, երկաթեղէնէն . երկրորդ օրուան դիչերը բուեր թերեւս հաստատուն մտերակներու մէջ :

— Կը կարծե՞ս :

— Վստահ եմ :

— Ես վստահ չեմ, որովհետեւ, կը տեսնեմ, որ պատերուն վրայ դամեր ալ պիտի չթողուն... : Իսկ մեխուած տղատեր ու նկարներ սրքա՛ն :

Մտան իրենց տան փողոցը կտրող նեղ անցքը : Սոնա ճիշ մը արձակելով՝ բնկրկեցաւ : Երեք պիակներ արիւնբուայ՝ նետուած էին պատին տակ . դեռ հոտը չէր դրոհած անոնց վրայ : Տիկին Սոնա տեսաւ մէկը միայն, որուն աչքերը բաց էին : Իոզն ու վախը բոնած՝ սիրտին տրտիտով, ան ցատկեց-անցաւ : Արմենակ հետեւեցաւ անոր :

— Մէկը ճանչցայ . փոստպանին տղան էր...

— Մի՛ խօսիր այդ մասին, — բարկացաւ Սոնա . — սիրտս կը փրթի տեղէն . երանի՛ խօսքը լսած չըլլայի :

Այդ արամադրութեամբ ալ երան իրենց տան տատիճաններէն վեր : Սոնա կ'ելլէր հատիկ-հատիկ տատիճանները եւ կը դգար, որ իր տեսած երազին

ինչ-ինչ երեսները կ'ամբողջացուէին ու իրական դէպքի երեւոյթ կը ստանային: Ու մէկէն կրկին զգաց անդրշիրիմեան սարսուռէն գրաւուիլը: Ղրախը դարձաւ, երբ հին ցաւը բռնեց զայն ու կարծէք սեղմեց աքցանի մէջ: Անսեղեակ կնոջ նեղաշխարհը ցնցող փոթորիկէն, Արմենակ կը գննէր աստիճանաքարերը: Երբեք հեաքեր կայի՞ն կողոպուտի: Երբ դուռը փակ դասն, հարբ թմաւ ուտերէն:

— Տուներնի՛ր սեղն է:

— Ես բնաւ ինքզինքս լաւ չեմ զգար: Բա՛ց դուռը, չա՛ւտ: Վրակին աչքերը կը հարածեն զիս: Կարծես ես եմ սպաններ զիրենք:

— Մէկ ու կէս ասրի լսեցիր ու սկանառես եզար շատ մը մահերու: ասոնք ալ անոնց կարգը դասէ, բան չեա զգար, — խրատել ուզեց Արմենակ, որ դուռը բացած էր:

— Ներսը՝ ինչպէս որ ձուկը ենք, — ըսաւ Սոնա սրտը ու նստեցաւ աթոռի մը վրայ: Ամուտինը մնաց ասրի: Հիմա ան կը խորհէր գոյքերը փոխադրելու մասին: Ինք եւ Սոնա ի՞նչ կրնային կրել: Աթո՞ւ մը: շատ-շատ դուստ մէկ-երկու վալիլ: Յետո՞յ: Կնա՞, եկուր, Կնա՞, եկուր: Երանի ազոց հեա դային:

— Հիմա ի՞նչ պիտի բնենք, — հարցոյց Սոնային:

— Գաւէց առաջ մտածէիր ինչ բնելո՞ղ, — պայթեցաւ կինը, — կեանքդ ամբողջ եղաւ անխորհուրդ արարքներու շղթայ մը, որուն խոշոր օղակը եղա՞յ ես եւ այն կինը, սը իմ մայրս է, ամենամեծ սճրագործը զիտցած մայրերուս մէջ: Հայրս պետական հաստատութեան մը մէջ կը վարէր պատուարներ պաշտօն: չորս փոքրիկ աղջիկներ եւ դեռաստի կինը արդէր չեղան իր վաղահաս մահուան: Ան դո՛ւ գնաց դադարի թշնամիին մէկ փամփուշտին...: Հազիւ ասս տարեկան կայի, երբ գնաց: Անոր մայրս մերժեց վերամուսնանալ: ասորոջ աղան ուզեց փրկել մեզ, բայց տիկին Մարիցան՝ մայրս, նախընտրեց լուսցարարուհի դասնայ, որպէսդի սրահէր մեզ, մեծցընէր իր ճակատին քրտնքով: Ի՛րք թէ աղջիկներուն մասին կը մտածէր...: Լա՛ւ մտածեց: Կըսէ մեծ աղջիկը ամասնացոյց ասանքէնց ասրեկանին: Գոհարիկը սիրեց, ասաւ, զժրախտ չեղաւ: Ետքէն, անուշիկ մայրս եղաւ զիս քեզի տուաւ ասանքչորս տարեկանին...: Ի՛րք թէ աղուսը աղջկան ետեւէն հազար շուներ կը հաջնէ կեր...: Էջի պոչի վրայ չկեցող պատճառարանութիւն: սրտհեռու ես հազար ու մէկ շուներու մէջէն կրնայի անցնիլ եւ չվրտանդուիլ...:

Ամուտինը կը ձանձրանար լսելէ կնոջ պատմութիւնը, զոր դուստը յաճախ կրկնած էր նայնիակ ազոց տաջնէ: Իր միտի սեւեռութիւն էր ասն կահ-կարասին փոխադրութիւնը: Կը խորհէր, թէ նայ ասունը իրենց պիտի մնար, սրտհեռու տէրը պիտի չհամարձակէր ես գալ նստիլ հան: յետոյ՝ ըսի-ըսուներ կային, թէ դազթական բնասնիքները տէր-սիրական պիտի բլրային նրատած տուներուն:

— Տղաները բերելու էինք հետերնիս: սայլ մը կը ճարէինք, կը բեռընէինք գոյքերը, կը տանէինք մէկ անգամէն:

— Կը սպասե՛նք:

— Չե՛ն գար: մեծ ազոց գլուխ բռնեց:

— Գիտեմ՝ յետո՞յ:

— Մէկերնիս ոչեք է երթայ՝ զիրենք կանչելու:

— Գնա՛ բեր:

— Դս՞ւն :

— Կը մնամ, մինչեւ որ դաք :

— Չբըլար տաճաններդ հոս մնալ. դան՝ քեզ ալ դոյքերուն հետ կը տանին :

— Ի՛նչ . . .

— Դուն կ'երթաս, ես կը մնամ պահակութիւն կ'ընեմ :

— Ինչի՞ն :

— Օհօ՛. իբր թէ բան չես հասկնար :

— Ինչպէ՞ս չեմ հասկնար. շատ բա. կը հասկնամ միտքդ. մնալ կը պնդես, որովհետեւ անձնասէր ես. աչքդ չի կարեր. ինչո՞ւ յոգնեցնես ինքզինքդ. պարարտ վիզդ կը հալի : Մե՛ղք ես. իսկ կինդ մեղք չէ՞, հը՞. ինչօք նստար, — չեչար բարձր էր, հողին խոսված էր արդէն. ներքին, բոլորովին նոր վախ մը կը պար ախար. ինչո՞ւ այլ վախը չէր պայցած քառասուն տարիներ շարունակ, երբ գլխակցութեան եկաւ հինգ տարեկանին : Ինչո՞ւ նման վախ մը չէր ճնշած սիրար, չէր խոսված հողին, մա՛նուանդ՝ երբ հրթիռներ կը պայթէին շարժբարձր՝ շուկայէն դնումներ բրած ժամանակ : Իսկ ախար այլ վախը կը գարձնէր զինք տատամտտ, ընկճուած, ոչ նախաձեռնող : Միշտ եղած էր ամուսինին անջեւէն քայտը, անոր փափաքներուն, կարիքներուն, աշխատանքային նախախորձերուն կարաւանը առաջնորդողը, ուրեմն, պնդեց, որ մարդը երթար—բերէր աղաքը եւ ճարէր ձեռնասայլ մը :

— Քանի որ ալըպէս է, կ'երթանք միասին, — խորամանկե՞լ ուզեց Արմենակ, ո՛չ. Սոնա կը ճանչնար մարդը, իր անճարա՛կ ելքիճքը, ինչպէս սովոր էր անուանարկել զինք :

— Հտակցուեցա՞ւ. քաջ նազարն ես, երբ կանգնած ես, Տոն Քիշոթը՝ երբ նստեր ես գլխուս, բայց աւելի՛ դուն իմ կեանքս կողոպտող միակ փաշան ես ու ամօթ, որ էրիկ մարդ չես : Ուզար սակդ՝ դուն աեղէք շարժողը չես, — եւ իբր թէ խօսէր ինքն իրեն, — Ելլ'ը Սոնա եւ դնա՛, Աստուած հետդ, թէ որ չվերադառնաս . . .

Յիմար բան բաւ. ինչո՞ւ պիտի չվերադառնար : Իջաւ փողոց :

Էսյսը բացարձակ աէր եղած էր ճամբաներուն. եռուզեւը, կարծէք, աւելի շեշտուած էր. կը յիշեցնէր պատերազմի ժամանակները, երբ մարդիկ բռնակառքերով, օթաներով, ձեռնասայլերով տուն կը փոխադրէին աւելի ազատ տեղ. խուճապահար, ինքնակորոյս՝ կը կրէին ամէն ինչ, որ ձեռքի հասողութեան մէջ կը գտնուէր — կահ-կորուսիներ, լուսաքի, պատկերասփիւռի, կարի, փոսկապի մեքենաներ, սաննարան, անկողիններ, աթոս, վալիլ՝ տուն մը կահաւորող այն ամէն ինչը, որ կը գոհացնէր մարդուս ճաշակն ու ծակաշքութիւնը : Բացարձակ թարան-կողոպուտ, գողութի՛ւն, որ այլեւս կրանցուցած էր ամօթապարտ յանցադործութեան վախը . . .

Տիկին Սոնա Ագայեան կը քայլէր արագ. միակ անձն էր, որ կ'ելլէր Զբբուրի շքանէն մերկ ձեռքերով ու միակ կիներ էր, որ կը փայլէր դադթականութիւն յիշեցող այս խառնիճազանձ թահուրտէին խոտուած : Կը նշմարէր ամէն արարք, որ զրուելի կը թուէր իրեն, սակայն չէր նկատեր, որովհետեւ իր ակնարկը ետ-խրուած էր ներաշխարհի կոյս անդունդները, ուր անխմանալի շփոթութիւն կը տիրէր : Ու չփոթ կար հողիին մէջ եւ շքութունքներուն վրայ, որովհետեւ կը խօսէր բարձրաճայն, անիճերով իր բախտը, ամուսինը, պատերազմն ու պահը . . .

— Տրամ'ը, ապա՛ւջ մարդ. ցնդա՛ծ. դզա՛ւմ, ձեռքէն բան չեկող՝ անճարակ : Է՛չ ալ չէ. էչը գոնէ կը զրայ վասնդը ու կը մնայ աեղը, սաքերը

պրկած՝ տեղէն չի շարժիր, եթէ կերն ալ հեղեղին բերանը երթայ... : Մե-
րինը էշէն աւելի անբան է, որովհետեւ կրնար սպասել, որ ազաքք արթնան,
ու միասին դանք. չարտեց, ստիպեց, եկանք եւ ահա ամենակարեւորը՝ փո-
խադրե՛լ տունը... : Մնչո՞վ... : Եւ այդպէս ինքզինք ուտելով՝ չի՞մացու, որ
հասած էր տուն եւ տան բանալին մօտը չէր : Զարկաւ փակ դրան. ձայն չը-
կար : Կրկնեց զօրկը արտաճարուածի պէս : Սպասեց. ձայն-ձայտուն չկա՞ր
ներսը... : Շէնքի ներքեւի տանախուզին վեր նայեցաւ :

— Տիկին Սոնա, դո՞ւն ես :

— Կը ծեծեմ դուք, պատասխանող չկայ. ո՞ւր դացին արդեօք :

— Իջա՛ն-դացին. հրամէ՛, միասին սուրճ մը աւնենք :

— Մեռսի՛. կ'աճաղարեմ, — ըսաւ եւ իջաւ աստիճաններէն : Դրա-
ցուէին սպասեց դրան մէջ :

— Դէ՛, եկուր. շուտ է դեռ. սուրճ մը լաւ կ'ըլլայ, — ըսաւ :

— Շիտակը, կ'աճաղարեմ, տուներնիս հոս պիտի փոխադրենք :

— Էհ, որ այդպէս է, յաջողութիւն :

— Զրո՞ն, թէ ուր կ'երթան :

— Մեծը ջգայնացած կ'երեւէր :

— Ուրեմն տուն դացեր են, — տիկին Սոնա շարունակեց իջնելը :

Փողոցն էր. այլեւս ուժաստպաս, դերադրդուած, անուշադիր՝ կը բա-
լէր, սրկեկորոյս մօր մը պէս, որ դէմ կ'երթայ դաղթակուններու հասանքին,
խոր թիկունք, կրակներու տակ փնտաւելու կորսուած դաւակը : Քաղեց մեծ-
կակ շէնքերու քովէն եւ չղաց, թէ փոխած էր երթուղին : Տունի մը մուտ-
քին, կին մը տեսաւ զինք. ծանօթ էին, կանչեց .

— Սոնա՛, Սոնա՛... :

Սոնա դուցէ չլոկեց կանչը. ետեւ նայեցաւ, բայց արդէն անցած էր տի-
կին Անոյ Սերոբեանը եւ չճանչնալու պէս՝ անմխո ժպիտ մը աւնեցաւ :

— Ժամանակ չունի՛մ. կ'երթամ կոր, — ու թեւր բարձրացուց իբրեւ
պայ-պայի նշան :

Տիկին Սերոբեան զիտեց Սոնայի քայտածքը, որ կը հեռանար, կը
հեռանա՛ր, եւ մէկէն անկուռ ունեցաւ : Իրեն թուեցաւ, թէ Սոնա ինկաւ,
սօքը սահած ըլլալով մայթեղրի քարին վրայէն : Սպասեց սօքի ելլելուն.
բայց ինչո՞ւ սօքի չ'ելլեր իտեղճ կինը : Մէկն ալ չկայ շուրջը, որ օղնէ իրեն :
Սպասումը հեռաքրքութենէն շրջուեցաւ վախի. սպա սիրար մէկէն արո-
փել սկսաւ արագ-արագ, դողոցէ բռնուած, տիկին Սերոբեան պոռաց .

— Հասէ՛ք... օգնութի՛ւն... :

Օգնութեան ճիշդ այն աղղակն էր, ինչ որ հոտը կամ բնադդային այն
չօշափուկը, որ մըջնները կը մզէ գէղի իրեն : Այդպէս էր, որ քովի տա-
նիքէն դուռ ու պատուհան բացուեցան ու վաղեցին երիտասարդ տղաք, այդ
մարդիկ ու կիներ. պատշգամներէ կախուեցան հեռաքրքի հարս ու աղջիկ,
ոմանք սրացաւ դէմքով եւ անցարդներ, ոմանք ծանրաբեռնուած կողոպուտի
սարքերով : Անցնող կառք մը կիցաւ մէկէն. հոնկէ իջաւ մէկը, յըջօրէն
հեռաքրքրուած՝ ճեղքեց խուժան-պատը ու ծոնցաւ վիրաւոր կնոջ վրայ :
Իժիշկի երեւոյթ սենէր, որովհետեւ բանեց բազիկերակը, մինչ խցկել կ'ուղէր
խոտոջը, սրմէ կը հասէր կեանքին դաւաճանող կարմիր արիներ :

— Օգնեցէ՛ք ինձի :

Կը հասնէր տիկին Սերոբեան, որ միակ կինն էր Սոնան ճանչցողը այդ
թաղին մէջ, կ'ողբար գեղանի իր բարեկամուհիին վրայ. կուլար ձայնը, որ
կը թոթովէր :

— Մանա՛, Մանա՛... : Քա՛, ի՞նչ պատահեցաւ քեզի, — եւ արիւնք տեսնելով՝ դոցեց աչքերը, — վա՛խ, քսանսա՛մ ես, այս ի՞նչ սեւ էք եկաւ զլիսուն խեղճ կնիկին :

Բժիշկը թեւր անցուցած էր Մանայի ուսատակը, երբ լսեց Մանա տնունը : Ժամանակը չնրեց իրեն եւ երթալու : Երեսուն տարիէ ի վեր պահ դրած էր իր սիրտին զազտնի մէկ խորշը Մանա անունով աղջկայ մը պատկերը : Ան զպրոցական ընկերուէին էր եւ բանաստեղծութիւններ կը գրէր անոր նուիրուած : Եւ հիմա, երբ լսեց անոր անունին պէս անուն մը, մէկէն ցնցրուեցաւ . մի՞թէ ճշմարիտ խօսք էր, թէ լեռը լերան չի հանդիպիր, սակայն մարդը մարդուն՝ անպայման կը հանդիպի :

Եւ ահա զիպուած... եւ ի՞նչ տոբթով...

Տիկին Մանայի համար նախաինամութիւնն էր դուցէ պծած այս ուղին . ան շատ քիչ, թերեւս մէկ կամ երկու անգամ անցած էր այս փողոցէն : Դատնացած էր ամուսինին դէմ ու կորսնցուցած պայծառամտութիւնը : Կաճապարէր շուտ հասնիլ աղոց : Հետուէն արձակուած փամփուշտ մը, ճնճուկի նոր թեւ երած ձագի նման, բոյնէն թռիչք փորձելով, յանկարծ ուժասպաս, մոլորած, վերջին սրացքի մէջ օդէն կախուած կը փրթի, կխտակեցան, դեռ տաք մարմինը, կը նետուի գէպի Մանան, սրուն գլուխը կը գտնայ թիրախ՝ անկման հարուածին : Գնդակը կը խանձէ սկեմալը, կը ծակէ դանկուակըրին ձախտողմը, կը տողէ հրահանգիչ ջիզը բոնախնամութեան ու դեռ չհասած ուղեգամաչիկն, կը ստաի գիտկնացած, բանտուելով բացած խոռոչէ շրթնոտկրէն...

Ու յանկարծ Մանայի սջ սաքը կը մերժէ հնազանդիլ . սաք չէ, այլ՝ յենակ մը, գոր կը խախտեն կարծէք տեղէն : Մանա չիմացաւ, թէ աջ թիւը ինչո՞ւ գամուած էր ուսին . ինչպէ՞ս քայած էր ցարդ, երբ ո՛չ ոտքն իրն էր եւ ոչ թիւը : Ակնթարթի մը մէջ անկումը եղաւ ճակատագրական . կարծէք անյայտ ողիներ հրեցին զինք, որ թաւալեցաւ դետին, գլուխը մայթիկըրի քարին գարնելով : Սարսափը քարացաւ բաց աչքերուն մէջ . ու պրլշատեսիլ, ճոռոմ, անսիրելի այլեւս աջ աչքին նայուածքը դամուեցաւ մարդուն դէմքին, որ հակած էր վրան : Բժիշկը տեսա՞ւ անդրչիրիմեան երանելի ժպտի մը շողքը սառած նայուածքին ետևի Փոնին : Մինչ տիկին Սերոբեան կը կրկնէր փորածայն .

— Մման տոբթոր, բան մը ըրէք, ազատեցէք խեղճ կինը . մէկը չունի հոս, հարապատներէն...

— Դուք ուլ կը սեպուիք, բոլորս այ՛ իր հարապատները : Խնդրեմ, ինչպէ՞ս կը կոչուէք, արձանադրութեան համար է հարցոյ :

— Մանա Ազալեան :

— Ամուսնացա՞մ է :

— Այո . երկու տղայ ունի...

— Հայրանունը կը յիշէ՞ք :

— Անձնաթուղթին մէջ, սրքան կը յիշեմ յաժս, կը կոչուի Ասաքիւեան...

Բժիշկին դէմքը տփուրնեցաւ եւ յաջորդ շարժումները եզան մերկեականօրէն շատ արագ : Երկու երիտասարդներով՝ ան կրեց Մանայի մարմինը դէպի անձնական կտուքը, գնել տուաւ ներսը, նստեցուց տղաքը երկու կողմերը եւ անցնելով դեկին տոջեւ, շարժման մէջ գրաւ մերկեան : Բայց բան մը մոռցալի պէս, վնասուեց նայուածքով տիկին Սերոբեանը, մատի շարժումով կանչեց զինք .

— Ձեր բարեկամուհին է, տիկին. զույգ կարիք զգացուի այլ տեղև-
կութիւններու, հիւանդանոցին մէջ, կրնա՞ք բնկերանալ մեզի...

— Ինչպէս որ կը փափաքիք, միայն թէ՛ լուր մը ձեզի տունը, որ քիչ
վերն է:

— Դիւրին է:

Կառքը սուրաց. խոնուած մարդիկ փողոցներուն մէջ, ճամբայ բա-
նալով, աղատ ասպարէզ կու աային ասքթուր Վահանի կառքի թոխչքին...:
Ինքն իր մէջ աստուարանքով կը մրմնջէ՝ «Եւ ինչ պայմաններու տակ... հան-
գելսում՝ երեսուն տարիներ ետք. Հնձանիմ մէջ գիւնարբուէիդ, դուք իմ
տէրս, ես մեզ՝ ստուեր...: Շփոթ չկայ, ինքն է, ինքը. նայն սոկեծամ մա-
ղբաւ, նայն դէմքին զիծերն ու զոյնը: Ափսո՛ս...»:

Կրտուի, թէ փոս լուրը շուտ կը հասնի տեղ եւ, բերնէ բերան անցնե-
լով՝ կը գառնայ հաստ գերան: Սակայն Սոնա Աղայեանի պարագային, վի-
րաւորուելու եւ հիւանդանոց փոխադրուելու զէպքին լուրը... մնաց շիւղի
պէս բարայիկ, պահ մը անսուեցաւ մարդոց բերնին մէջ, սակայն այլ լու-
բերէ չէզբարացած՝ մնաց զէպքին վայրին վրայ մազէ կախուած:

Ուշ երեկոյեան, տիկին Սերոբեան հիւանդանոցէն երբ վերադարձաւ,
դնոց փնտտել ամուսինին հետ Աղայեանենց տունը նոր շրջանին մէջ:

Հայր ու տղաք Աղայեանները, առաւօտուան առաջին ժամերուն ու-
ղեցին փոխադրել իրերը, սակայն սպասեցին, որ դար Սոնան ու ընտրէր կա-
րեւորն ու անկարեւորը: Սկիզբի պահերուն, պարտն Արմենակ կը լեցուէր
բարկութեամբ կնոջ դէմ, որ սն կ'ուշանար: Ո՛վ գիտէ, ո՛ւր մտաւ եւ լեզու
կը թափէ, չի մտածեր, թէ իրեն կը սպասենք, կ'ըսէր տղոց: Տղաք լեցուեր
էին իրեն դէմ, որովհետեւ առտու կանուխ տներ-բերեր էր մայրը, որ ի՞նչ
ընէր, կ'ըսէին: Յետոյ ելեր ետ ճամբեր ես, մեր ետեւէն. ինչո՞ւ. չէ՞ր
կրնար քիչ մը սպասել, կը բարկանային իրենց հօր վրայ: Ու ժամանակը
կ'անցնէր ի դուր: Մինչև կէսօր յիճեցան հայր ու տղաք, թէեւ կը սկսէին
մտահոգուիլ: Մէկ քանի անգամ Անդօ եւ Կարօ, փոխն ի փոխ զացեր էին նոր
տունը ու ետ դարձեր: Մայրը չկա՛ր. ծանօթ ու բարեկամ տուներ լուր չու-
նէին տիկին Սոնայէն: Կէսօրէ ետք անհանգստութիւնը բռնեւ էր զիրենք ու
կը սկսէր ցնցել, հետզհետէ կասկած մը սպրդեցնելով անոնց սիրտերուն մէջ.

— Չըլլա՞յ թէ բան մը պատահած է իրեն...

Իջան փողոց հին տունէն եւ ամէն մէկը առաւ տարբեր ուղղութիւն:
Անոնք դացին դաս-գաս՝ հոտ առնելու, լուր մը սրտալու հոզը առած իրենց
կուրծքին տակ: Ու ամէն մէկը ինքնիրեն կը կրկնէր.

— Աստուա՛ծ չընէ, թէ որ բան պատահած է իրեն...

Երեկոյեան մօտ, Անդօ անցաւ ծանօթ փողոցէն. հարց ու փորձէն
ի յայտ ելաւ, որ գեղանի կին մը դարնուած էր կորսուած փամփուշտէ:
Ըսին խարտեաչ էր, բայց ոչ ոք չըսն: Այլ կասկած չկար: Անդօ վագեց: Գտաւ
տան մէջ հայրը, որ պատառ մը կը ծամէր, սրտնայնոյ խտտակերի պէս. եղ-
բայրը երկնցած բազմոց-տիւանին վրայ՝ կը ննջէր:

— Մամա՛ն արկածի հանդիպեր է, կարծեմ, — ըսաւ Անդօ:

— Ինչէ՞ն գիտես, — դարմանք արտայայտեց հայրը:

— Չե՛մ գիտեր. մինչև. հիմա որ չերեւցաւ, ա՛յլ կը նշանակէ:

— Ասեւանդամ չըլլա՞ն զինք...

— Բարբր քու երեսէդ եղաւ, — ամբաստանելու պէս ըսաւ Անդօ հօրը:
Դուն առաւ կանուխ եթէ ասնելէ ետք ետ չդրկէիր, այլ բանը չէր պա-

տասեր...: Հիմա դեռ՝ եւ փնտէ գինք հիւանդանոցները:

— Ո՞վ բտաւ քեզի, ո՞ր հիւանդանոցը, — հայրը չկրցաւ շարունակել հարցումին մնացեալը: Դուրս դարկին: Վաղեց բացաւ ու տալշանք կարեցաւ դրան տոջեւ, — հրամեցէ՛ք, հրամեցէ՛ք...

Տէր եւ տիկին Սերոբեաններն էին: Դէմքերնին շատ էր տխուր: Չնըստեցան: Ոտքի վրայ, պարտն Սերոբեան ձեռքը պրաւ Արմենակի սւտին եւ շատ կամայ բտաւ:

— Դժբախտութիւնը ամէն ասունէ անպակաս է, մա՛նասնոց այս ժամանակներուն, երբ մարդուն գլուխը իրը չէ: Պատրաստուէ՛, մխտալին հիւանդանոց երթանք. օթոս վարն է:

— Ի՞նչ, հիւանդանոց. ինչպէ՞ս, ո՞վ բտաւ, — պարտն Արմենակին ունեցած քիչ խելքն ալ թուաւ գլխէն: Անդոն կեցաւ հօրը յենակ: Ինք կը դգտըր եւ դգացումը շիտթ էր, կապուած յոյսի մը: Հիմա արդէն կը դանուէին մերկ իրակոնտութեան մը տոջեւ. յոյսը չբացաւ:

— Ո՞ր հիւանդանոցը:

— Կ'երթանք, կը հասկնաք, շտաւ բրէք. մեր Անոյշը հոնկէ կու գայ. առտուտն ժամը իննէն ի վեր հոն էր. հիմա եկաւ...

Երբ պարտն Սերոբեան, Արմենակ եւ Անդրանիկ կառք մտան ու մեկնեցան, տիկին Անոյշ Կարտն իրենց կը տանէր, դիչերը իրենց քով անցընել տալու անոց:

Տիկին Անոյշ Սերոբեան սպուտի գէմք ունէր, սակայն Կարտ չէր նըշմարեր սուղը իր քնտա աչքերով...

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

(ՎԵՐՁ)

Պարտն Համբաւ
29 Յուլիս 1978

Կ. Շ Ս. Հ Ի Ն Ե Ա Ն

ԱՅՍՊԷՍ ԽՕՍԵՑԱԻ ՎԱՅԱԳՆԸ

Հ Ս Կ Ո Ւ Մ

Գիշերներ կան, երբ տազնապներս բոլոր,
Տազնապներն իմ մեծ ու փոքր,
Հոգիիս մէջ կը հաւաքուին,
Կը խտանան հետո շարքով:

Գիշերներ կան, երբ կը լայնամ անիունօրէն՝
Ձեր տազնապները բոլոր,
Տազնապներն իմ մեծ ու փոքր
Գրկելու խառն հերթով:

Ես գիս կը գգամ ամէն տեղ՝
Քաղաքին վրայ, փողոցներուն մէջ լայն, նեղ,
Տարածուած լուռ, շշուկներով հարստացող
Անդորրին պէս:

Գիշերներ կան, երբ կ'ըլլամ գիշերապահ աչքերու
Հսկայ բանակ մը անտես:
Այդ պահերուն՝
Ոչ մէկ սուրց տազնապի
Ձեր խաղաղ նինչը խոցող,
Եւ ոչ մէկ դող խաբուածի
Ձեզ կ'այցելէ դող ի դող:

Այդ պահերուն՝
Ջգուշօրէն մէկիկ-մէկիկ կը քաղեմ
Դիմագծերն ձեր յստակ,
Գիշերային մութ փրփուրով լուացուած:
Ես գաղտնօրէն, դող ի դող,
Կը գգուեմ ու կը պահեմ
Գիշերային մութ փրփուրով լուացուած
Դէմքը խաղաղ քաղաքին, եւ դէմքն հնչեղ անդորրին
Ու դէմքը ձեր քանդակուած
Մութի խօսուն զանգուածին,
Կանգնած, հոսուն զանգուածին:
Ես դէմքերն այդ կը պահեմ ու կը տանիմ
Ձեր տազնապոտ պահերուն,
Որպէսզի երբ ինձի նայիք խեղճացած
Ու հաշմանդամ դէմքերով,

Ես կախարդուած հայելիի վերածուած,
 Ձեզի դարձնեմ ձեր դէմքերը կորսուած,
 Ձեր դէմքերը պայծառ մութով յայտնուած:

ՋԲԱՆՈՅՇ ԻՄ՝ ԱՍՏՂԻԿ

Իր հմայքէն որբացող աշխարհին մէջ, աշխարհին դէմ որբ մըն եմ ես,
 որ ամեհի իր աշքերով քաղաքներու ծխոտ հեւքին թոյնը պագց,
 ու դարերու աղբակոյտը պատուանդանած եւ ճաթոտած մայքերու լուռ վեր-
 քերուն ավիշներէն վերընձիւղած բոյսեր քաղեց
 եւ անոնցմով խելայեղօրէն ծխեց ծխամորճը տառապանքի:
 Ռը ըղձաց ծուխն՝ հողագունտը պատանքող՝ իր թոքերուն մէջ ամփոփել:

Ես այն որբն եմ, որ այլեւս կը շնչէ քու թոքերուդ բաբախիւնովն աշխարհակալ,
 ես այն որբն եմ, որ այլեւս կը շնչէ քու թոքերուդ պտարանէն արտաշնչուող
 թթուածինով:

որուն թոքերը կ'ընդլայնին քու բոյրերով, տիկերքներ ընդգրկելու, գգուելու:

Աչքերուդ մէջ — անպարտադիր պարտադրուած ճիշդ քերական — այնքան,
 այնքան քնքշութիւններ սերտեցի,
 ու բացխփուող թարթիչներուդ կապարճէն այնքա՞ն անգամ խոցուեցայ,
 դարձայ այնքա՞ն թափանցիկ ու խոցելի,
 որ մարդիկ վիս շարաւ կապած մորթերն իրենց գրահելու գործածեցին:

Ու քեզ գտած ըլլալու մարուր խնծիղը աճող, քեզի դպչած չըլլալու տառա-
 պանքը ցող խնդրող իրենց միջեւ վիս կիսեցին, կիսեցին,
 բզկտեցին ծուէն-ծուէն
 էութիւնն իմ, ինչպէս երկու իրարու դէմ ոխերմապահ գոյներ կրող դրօշ
 անգէն:

Ու մարմինս դարձաւ — գիտե՞ս — մթնշաղին մէջ, գաղտնօրէն, մթնշաղով
 ծաղկող ծառին, աղ ու շաքար իրար խառնած անհամ կեանքին հումա-
 նիշը անբարենիշ:

Իմ արիւնը, որ քու սրտիդ բաբախիւնէն պտոյտ կ'առնէ, ու կը տաքնայ, ու
 գոյն կ'առնէ,

երբ քեզ գրկեմ — բսե՛մ նորէն — պիտի այնպէս յորգի, պտոթկայ,
 եւ անոր բիւրեղացած ողկոյսները փափուկ, ծնծղածիծաղ
 պարելով, այնպէ՛ս պիտի հատիկները հողը գրկէ՛, ոռոգէն,
 որ հողը այս, որ քեզի հետ ծնաւ անպիղծ ու թունաւոր արիւն ծծեց ու հիւ-
 ծեցաւ դարերով,

եւ քեզի չափ մահը հերքեց ու կը հերքէ, որ քեզի չափ բերրի ալ էր,
 իր կողերուն անդրագոյն հորերուն խորն կուտակուած սիրոյ անխառն նաւ-
 թով պիտի բռնկի, եւ անասիմանօրէն արգասատրուի երջանկութեան
 կաղնիներով պերճաշուք ու անհունարմատ, սպա հողին կոշտերն ու
 քարերը բոլոր պիտի հալին սիրելէն,

քու արիւնը, իմ արիւնը ըմպելէն:

*
**

Պլտիկ սէրեր իմ տկար,
որ կը մսիք արդ հեռուն,
ձեր լանջքին տակ պուտ մը հուր
զգուշօրէն գգուելէն.

պգտիկ սէրեր իմ տկար,
որ աղի պէս կը լուծուիք
ձգողութեան ալիքներուն մէջ ովկիանին մեծ սիրոյս.

պգտիկ սէրեր իմ տկար,
ես, մեծ սէրէս զօրացած՝
պիտի ձեզի հուր տամ բոքք,
որ սիրոյս տօնը ըլլայ
անանձնական ու ամբողջ:

*
**

Ալիքդ ահել չկրցայ, գայն զգացի մատներով եւ մատներու արմատները
խլրտեցան, բոյրն հեշտանքի քերեց զանոնք, պարելու տենչ մը հոն
բացաւ իր աչքերը քնաթաթախ:

Շուրջս աճող մուփն հոծուեցա՛ւ, թէ նօսրացաւ՝ չզիտցայ,
ձիչ մը ցաթեց պարել ուլող մատներէս,
յառաջացայ ներքին շարժով մոլորաբայլ,
որոնելով ստեղնաշարը կոպերուդ:

Ու ես մտայ քո՛ւ մարմնիդ, թէ իմ մարմնիս հորերուն մէջ կաթնայորդ...:

Մատներս լոյսի՞ն մէջ կ'ընկղմին,
թէ արեանս՝ քեզմով բնակուած...:

Իջիր անձրեւ այդպէս մեղմ,
տաք հոզին բովին մէջէն
դէպի երկինք զիս տանելէն՝
իջիր անձրեւ երկնքէն...:

Անձրեւն եկաւ շաղալէն,
անթիւ վերքերս լուալէն:

Նուագէն ետք մատներս սրինգ են եղէգէ,
որուն մէջ շունչդ անսպառ կը թրթռայ բոցարծարծ:

Ընդունեցէք իմ մարմնիս եւ իմ հոգիս անձրեւներու տակ աղօթող,
առէք հոգիս ցօղ կրող:

ԱՆՏԵՍ ԿԱՄՈՒՐՁԻՆ ՁՈՅԳ ԱՓԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Թոյլ կողերուս մամուռ շունչը ձեր բսելով՝

կը պարէք դուք ուրուականներ
հմայական,

եղկելի,

բարի

ու դող պատճառող...

Բայց ես ինչու չեմ կրնար

միանալ ձեր հանդէսին,

կամ իմ սրտին հաշիշամոյ մեղկ աչքերէն

ապել, քաղե՛լ ոսկեփոշին... չե՛մ կրնար,

ձեր ոսկերիկ պատմութեանին ոսկի փոշին,

պոր անշօշափ ու մակնիշուած

խաղովակներէ կը շնչեմ

և երբեմն դգալներով դուրս ապ

կ'ուզեմ... կրնամ արդիօք:

Հող կը բուրէք, կը ստեղծէք

հոսած, չորցած, գորշ արեան տեսիլքն՝ հոսող

թարթիչներուս ասեղներուն քսուելով:

Իրարու մէջ ոստայն կապած, լաբիւրինթոս լեզուներով,

արնոտ սերմեր ցոյց կու տաք մթահմայ ու խխունջուող մասերուս,

կը խենթենամ ցաւագար:

Ջիս կ'արձակէք իմ առօրեայ հեւքերէս,

թանձրախաւ ու մածուցիկ բոյրերու

էդ լիճին մէջ կը հրէք դիս:

Սիրահարա՞ծ ենք երբեւէ — բաժնուած

կորստական ու մահահոտ անդունդներով,

որոնց խուլ ու աննուաճ միջոցին վրայ, միջոցին մէջ դողացող

համբոյրներով օղային

երբեմն մենք կը հաղորդուինք...

Մենք սէ՛ր կ'ապրինք, թէ կարօտ

ոչ օղային համբոյրներու՝

մետաղ, ոսկոր շօշափող,

չձաղկող՝ անդունդներու տեսիլքին հետ,

տեսիլքին մէջ փրփուրի պէս չղիբցող,

սէ՛ր կ'ապրինք մենք, թէ սիրոյ շուք կը լիւննք:

Ձեր անկենդան տեսքերուն

պարերովը խօլական

հեռուէ հեռու շունչ կը փչէք դուք ինձի,

եւ պարերուն ձեր խօլական ես շունչ կու տամ:

Ջիրար պուտ-պուտ կը համտեսենք, իրարու շունչ կը կտցենք,

այսպէս վիրար բջիջ-բջիջ կը սպաննենք...

Այդ ե՛ս եմ ձեզ կը հալածեմ, թէ դուք պիս...

ՊԱՆԴՈՒՆՑ ԳՈՒՍԱՆԸ

Եւ Վահագնը, իր յուսահատութեան թնճկացած թելերը ձիգ տալով՝ անգոյն դրօշներ կը հիսէ ու խաւարին ծոցը մտած վայն կ'ականէ: Ան չ'ուզեր «խաւարը ասեղնագործել», եւ յուսահատութիւնը բոցի կը վերածէ, ու բոցն ափած՝ խաւարը կ'այրէ:

Խաւարը՝ ցելս լպրծուն, Վահագնի թոքերէն ներս կը խուժէ, եւ հոն ըզձանք-ներու կանաչ խոտերը ցեխաջուրի մէջ կը փորձէ ընկղմել: Բայց Վահագնը ֆոսֆորափայլ բապուկները կ'երկարէ եւ հազար թեւ արշալոյսը կ'ողջագուրէ: Ցեխաջուրը կը դողայ, ու նահանջելով՝ Վահագնի ոտքերը լուսլ կը տենչայ: Եւ ամէն ինչ կ'այլափոխուի: Բոցասիւն մը կը մնայ, որուն ներքեւ ու շուրջը ընկաջուրը եռալով իր վերքերը կը բուժէ:

ԲՈՑԻՆ ՀԱՄԱՐ ԳԱԼԻՔ

Յարդարեցէք դուք ձեզ՝
բոցին համար գալիք:

Յարդարեցէք մարմինը ձեր՝
արնակարմիր առագաստին համար վերջին:

Եւ երբ բոցը այրէ
մեր մորթերը բծախտաւոր,
պիտի տեսնենք յստակ
բոցավառ ու անկէզ սիրտը հողին,
որ այս քանի՛ դարեր
արինն բաշխեց մեզի
ու մենք վայն կիսեցինք, կտրատեցինք:

Եղէք պատրաստ բաշխուելու
մոխրին գալիք,
բոցին անցեալ,
հողին անժամանակ:

Յարդարեցէք դուք ձեզ՝
միայն բոցով
այրող:

Յարդարանքներն բոլոր քօթափեցէք,
մտէք արգանդն հողին՝,
ողջունեցէք խաւարը կոյս,
բերրի մուրով հաղորդուեցէք
եւ երբ ուզէք դուրս գալ,

Եկէք իբրեւ արեգակը զարպասող
աղբիւր գուլալ:

Պանդուխտ գուամնը:

Եւ Վահագնը կը շրջի
Երկրին մէջ խոնաւ ու խիտ առասպելի,
ստուերներու մէջ համրացած,
ու քարերու եւ ժայռերու մէջ ցաւագար,
խտաբարբառ:

Եւ Վահագնը, անձնատուր
ջուր ու կրակի
տագնապահար գուգապարին՝
ամէն ինչ նոր կը մկրտէ,
ամէն ինչ նոր կ'անուանէ,
նոր բարբառներ միշտ կը ծնի,
ոչ մէկ բարբառ հիմա գիտէ:

Յ Ա Յ Գ Ա Լ Ռ Յ Ս

Բաց փափկութեամբ սիրտը քարին բաց խոփս թարմ հալածական մշտադող
միս ծիածաններ հերկող խոփ իմ ժանգը քերծող կը յիշե՛ս հոտը ժան-
գին բայց ռունգերդ բաց նոր գոյնի հանդէսին գրկախառն ու հեշտա-
խռով գոյներուն մտիր արգանդն անջրպետին պրիմալին համապար-
փակ ովկիան կարմիր մանիշակագոյն ո՛ւր էք ծովանոյշներ իմ անծա-
նօթ պղնձեայ քաղաքներէն հեռու ծնած յար ծնող ծովեր կրող այրող
բայց այս կանչն ալ կը խեղդեմ ու կը հերքեմ երազներս կը հերկեմ կ'ու-
զեմ հերկել հերկել հերկել մտերմութիւնս չ'երկարիր ինչո՛ւ կ'ըսեմ եւ
հարցականս կ'երկարի բայց չ'երկարիր հեռացումս տրոփներէ մտերմիկ
ձուկ եմ ես ջուրի մէջ ջուր կարօտցող կը մտնեմ մարմարին մէջ փո-
թորկաբոց կաթնաբոց մարմարին մէջ կապտերակ բաբախուն հովին
ամբողջ քարացած կտղանքին մէջ կը լուծեմ բոլոր շրջանակները իմաստ
բանտող կը պայթեցնեմ սիրտը չերգող քարին եւ քարացած մեղեդիներ
կը թրթռացնեմ մահաթմբիրը կապարեայ կը հալեցնեմ կը մնամ ձայն
աննուաճելի կեդրոն կրակ կեդրոնաձիգ ձայն անկորուստ ձայն միջոց
ելք անջրպետ ջուր միակ:

Ջուրէն դուրս ապրող ձուկ եմ ես:

ԿՈՐԻԻՆ ՀԱՎԻՆԵԱՆ



Գ Ր Ի Գ Ո Ր ՆՈՐԻԿԵԱՆԻ ՀԵՏ

Շահեկան է նորիկեանի աշխատանքը, այն փոքր ու խճուղուած սենեակը, ուր կան երեք-չորս պատասաներ, որոնք մեծ շափով աւարտած են: Պատուհանէն կ'երևի ուժրակոծումներու պատճառով փոստած շէնք մը. ուսմբի կտորներ հոս-հոն ծակեր բացած են աշխատանքին մէկ պատին վրայ: Դեռ նախորդ շրջաններէն երկու կամ երեք գործեր կը տեսնուին, որոնք կարծէք կ'ընդգծեն արուեստագէտին նուաճած հանդրուսնները:

Նորիկեանի հետ մէկէ աւելի անդամներ պէտք է գրուցել, որոչ մտերմութիւն մը ստեղծելու եւ զինք «բանալու» համար, աւելի անգին երթալու իր անպաճայճ, համեստ ու կարճ նախադասութիւններէն:

— Սկզբնական շրջանին սկսան աչքի գործնեղ ձեր կրավիւրները, հիմա աւելի իւղաներկով կ'աշխատիք, ապիկա ձեր մէջ մասնաւոր փափոխութիւն մը յառաջացուց: Ինչպէ՞ս ես ստաք. ետո ձեռ

գրակարումի միջոցը կը փախէք:

ՆՈՐԻԿԵԱՆ. — Իտալիոյ մէջ է, որ կրավիւր ստրկեցայ, հաս արհեստանոց չկար՝ այդ ճիւղը աւելի դարգացնելու համար եւ տկամայ ձգեցի գայն, սակայն որոշ շրջան մը կողմեցին կրավիւրները ինծի համար: Հիմա այդ շրջանին մասին զիբք մը կը պտարտասեմ:

Ապա լիթակրափի սկսայ, իսկ այժմ, ատուերորտը, իւզաներկով կ'աշխատիմ: Հազորգակցութեան կամ գրեսուրումի միջոցը մասնաւոր տարրերութիւն չ'ըներ ինծի համար. վերսլիշեալ երեք մտրզերան մէջ ալ նոյն հողիով կ'աշխատիմ, քանի որ կը կարծեմ, թէ բովանդակութիւնը միշտ նայն է, պարզասէս արտայայտութեան ձեւերը կը փոխուին: Իւզաներկի մէջ, դոյներու շողկապումը եւ անոնց յարարերութիւններով ստեղծուած կարեկիւթիւնները զիս կը հետաքրքրեն, մինչ կրափիքի պարագային՝ զիծերն էին գլխաւոր միջոցը:

— Ձեր եիմնական քեման ի՞նչ է կը կարծէք:

ՆՈՐԻԿԵԱՆ. — Կիներ, ընդհանրապէս կ'իներ կը նկարեմ:

— Ձե՞ք կարծեր, թէ դէմքերու վերայ կը կեդրոնանաք եւ անմէք յաճախ կը կրկնուին ձեր գործերուն մէջ:

ՆՈՐԻԿԵԱՆ. — Երբ կը սկսիմ նոր պատասառի մը, դէմք գծելու ձգտումով չեմ սկսիր, սակայն կը տեսնեմ, որ ատիճանարար դէմքեր կը կազմուին: Երբեմն կը մտածեմ անոնց տարիք մը տալ, որովհետեւ գծուար է որոշել անոնց տարիքը, սակայն, վստահարար, հողելիւճակ մը կը գրեսուորեն: Երբեմն միւնչեւ իսկ անոնց մէկ պահուած ձեռքը կամ ոտքի ըլլալը տարրեր զգայնութիւն մը կը յուշէ: Ճիշդ է, որ որոշ զիծեր կը տեսնուին բոլոր գործերուս մէջ, սակայն անոնք կրկնութիւն չեմ նկատեր: Սէզան միշտ ալ նաքիւր մտրքեր գծեց, ինչպէս ես դէմքեր կը գծեմ եւ, ճիշդ այս պատճառով՝ անոնք նոյն դէմքերը չեմ նկատեր:

— Կը կարծե՞ք, թէ Եարթի պատտոներուն ու ձեր գործերուն միջեւ ունային կապ մը կայ, մասնաւորարար դէմքեր կամ ձեւեր ներկայացնելու եղանակին մէջ:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Կը կասկածիմ, թէ կապ մը կընայ ըլլալ. մեր հոգեվիճակները ստարեր են: Իր գործերուն մէջ յըստակ վիճակ մը կը ներկայացուի, որ տեղ մը հասած է. իմ գէմքերուս մէջ տապնապ մը կայ: Ինչպէս հոս կընաք նշմարել, կարծէք անոնք կը նային, բայց չեն տեսներ, կոյր նայուածք մը տնին կարծէք:

— Ուրեմն, կը կարծէք, թէ անգիտակից դրսեւորում մըն է: ձեր աշխատանքը:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Նման բան մը չեմ կրնար ըսել, բայց անգիտակցաբար չէ, որ կ'աշխատիմ: Նրբ հոգեվիճակ մը հասուննայ մէջս, դայն պարզապէս պատուովն կու տամ:

— Սակայն վերլուծած էք, թէ վերջի վերջոյ այդ կիները կամ դէմքերը ի՞նչ կ'ըսեն ձեզի համար:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Վերջնական դատում մը չեմ կրնար կատարել: Սակայն այս օրուս միջնորար, բնականաբար, որոշ ազդիր մը տնի, գուցէ մեր ենթահոգէն եկող տեղահանութիւններու պատճառովեան հետ կապուած է, սակայն ազգային այս գիծը միակ ազդակը չեմ նկատեր:

— Հիմա կարծէք աւելի խաղաղամ, որոշ պարզութեան մը հասած են ձեր վերջին գործերը:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Հիմա շատ աւելի կ'աշխատիմ: Ինչպէս գիտէք, տանն մը աւելի վերացական սկսած էլն դառնալ գործերս: Հիմա կարծէք թօթափած եմ այդ միտումը եւ որոշ գիծ մը սկսած է վերալայնուիլ, առաջին գործերէս եկող: Սակայն վրձինի կարգ մը յանդիպել կամ «բիր» հարուածներ կան, որոնք հիմա չեմ համարձակիր գործածել, բայց այս բոլորը բնական կը նկատեմ:

— Ձեր այս վերջին գործերուն մէջ կարծէք որոշ հակադրութիւն մը շեշտուած է, մէկ կողմէ լուսաւոր կամ պայծառ բաժին մը կայ, միւս կողմէ՝ մութ մաս մը, որոնք դէմքերուն վրայ կ'արտացոլան:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Նման հակում մը ըսկիցրէն կար, հոս մինչեւ իսկ հաստատ-



բակշտութիւն մը կայ այդ երկուքին միջև:

— Նրբեք փորձած էք դաշտունկար գծել:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Առանձին դաշտանրկար՝ մ'չ. սակայն գէմքերու համը գոյներու այս խաղը կամ մինչեւ իսկ գէմքերու յարաբերութիւնները կամ ամբողջութիւնը համարը կը նկատեմ անոր:

— Ո՞ր վարպետները հետաքրքրական կը գտնէք կամ կը կարծէք, թէ ազգամ են ձեր կազմութեան վրայ:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Սպանական գայրոցը, գլխաւորաբար՝ Կոստան: Իսկ հոլանտականն է՝ Ռամպրանթը, որ մ'չ միայն իմ սերունդէս, այլեւ՝ նախորդ սերունդէն շատերու վրայ կարեւոր ազդեցութիւն ձգած է:

— Գու՛մ աշակերտած էք կիւվտերի, որուն դպրոցէն բաւական հայ ու անդաքի նկարիչներ դուրս եկան: Կը կարծէք, թէ այդ դպրոցը շարժում մը մը կըրնար վերածուիլ:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Ինք գլխաւորաբար քաջայերեց տեղացի ու հայ կարգ մը երիտասարդներ, սակայն աշակիցիներ չունեցու: Իր գերը պէտք է տեսնել իրբեւ յատուցիչ. այդքան:

Իսկ հիմա, թոյլ տուէք, որ ես ձեզի հարցում մը ուղղեմ. կը կարծէք, թէ



Քիւպիզը եթէ հոս սկսէր, կրնար իր նը-
 ւաճած տեղը դանել: Հարցը երկու ձե-
 տով պէտք է գրտել եւ գոյն միտյն մեծ
 կամ փոքր ստանձներու կամ քաղաքակր-
 թութիւններու ծիրին մէջ պէտք չէ տես-
 նել: Մեծ քաղաքները հեռզհեռէ կը մը-
 շակեն յասկանչական մտածելակերպ մը,
 որուն հոս կամ ընդհանրապէս չենք հան-
 գրայիր: Օրինակ, Փրանսական մտածեա-
 կերպ մը կայ, որուն կը հետեւին Գառ-
 դու, Ժաննէմ եւ Փրանսահայ միւս նկա-
 րիչները: Լիբանանեան նման սաանձին
 մտածելակերպ մը չկայ:

— Ի՞նչ կը մտածէք լիբանանահայ գե-
 ղանկարիչներուն կամ հայ արուեստա-
 գէտներուն մասին, որոնք միջազգային
 արժէք կը նկատէք:

ՆՈՐԻԿԵԱՆ. — Վերսիչեալ պատճա-
 ւարանութեամբ, եւ զործերէն դատած՝
 մասնաւոր ձեւով ստանձնացող մէկը չեմ
 տեսներ: Ասկէ ուրիշ հարցում մը կը ծա-
 գի. մեր էին լիբանանցի արուեստագէտ-
 ները գէպքերուն ընթացքին: Օրինակը
 խօսուն է ինքնին: Այժմ, յաջորդարար
 հոս ու Փարիզ կը բնակիմ: Դէպքերէն
 ներչնչուած որոշ զործեր կը մտածեմ գը-

ձեւ, սակայն հոս միայն, այս միջնորդութիւն մէջ միայն կրնան դժուիլ անտնօր, ստորեր հարց, որ անուց ցուցադրութիւնը աշտակ կրնայ քաղաքական կամայական մեկնարանութիւններու առիթ տալ...

Իսկ միջազգային պետեր վրայ, կը կարծեմ, թէ Կորթիլէն ետք, նոյն չափանիշով դէմքեր չտուինք: Արուեստագէտները, ընդհանրապէս, գործերու առետուրի խաղին մէջ կ'իշխան, շատ քիչերն են, որոնք կը մնան իրենց սկզբունքներուն վրայ եւ կը շարունակեն գծուար աշխատանքի ուղին: Կորթին մնաց, ուրիշներ չկրցան խօսուիլ տակէ:

— Որեւէ դպրոցի մօտ կը գգա՞ք:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Գծադրութեան մէջ շրջան մը կար, ուր ամէն ինչ վերացական էր. առենէ մը ի վեր այս միտումը սկսած է փոխուիլ: Ինքզինքս աւելի մօտ կը դրամ նոր պատկերացում (Nouvelle figuration) կոչուող շարժումին: Ֆրանսիս Պէյլլընէն ու Վերիքովիքէն ետք կայ փնտասուք մը նոր արտայայտչամիջոցներու, որոնք կը խօսին ինծի: Իսկ ասկէ անդին, արուեստի մէջ ընդհանուր նահանջ մը նշմարելի է, մեծ անուններ չկան եւ ամէն ինչ վաճառականացած է:

— Ի՞նչ կը մտածէք Հայաստանի գեղանկարիչներուն մասին:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Մօտէն ծանօթ չեմ իրենց գործերուն, սակայն անսոսնակ և գտակալ կ'ուզեմ կրկնել լիբանանցիներու հանդէպ կատարած դիտողութիւնս: Հան եւս կը պակաս ընդհանրական ինքնուրոյն մտածելակերպը: Մեքսիքայի յեղափոխութեան շրջանի գեղանկարիչները ամբողջովին այդ միջնորդը կը պատկերացնէին. իրենք եւս յստակ միջնորդակ



մը կու դան, որոշ վարչաձեւէ մը, սակայն անոր առանձնաշատկութիւնները եւ սուեայ միջնորդը չեն տեսնուիր իրենց գործերուն մէջ: Լիբանանի մէջ կայացած ցուցահանդէսէն գտակալ՝ էլլիբեկեանը հետաքրքրական գտալ:

— Էլլիբեկեանի մէջ շեշտուած միտում մը չնկատեցի՞ք արդի ԸԼԼԱՅԱ:

ՆՈՐԻԿԵԱՆ.— Այո, սակայն գործերը հետաքրքրական էին:

— Վերջին տարիներուն ի՞նչ ըրիք:

ՆՈՐԻԿԵԱՆ.— 74ին Լիբանանի մէջ արուած ցուցահանդէսէն ետք, շրջապատայ մը կատարելի գէպի Պոսթըն եւ Մանրէալ եւ հան ցուցադրեցի գործերս: Ինչպէս բի, կրաֆիքներու մասին հատոր մը կը կազմեմ այժմ եւ կը մտածեմ կրաֆիքներէս մէկական օրինակ գրկել Հայաստան եւ, ինչպէս կը տեսնէք՝ կ'աշխատիմ:

Հարցազրոյցը վարեցին՝

ԱՆՊՐԱՆԻԿ ԱԶՆԱԻՈՒՐԵԱՆ
ԵՒ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԼՐՊԷՐԵԱՆ

Ա. Տ Է Ր Յ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ա Ն

Հ Ի Ն Տ Ո Ի Ն Մ Ը

Թերեւս գիշերուայ ընթացքին էր, երբ կրակը սփռուեցաւ Բաղափ
տանիքներէն

Եւ մարդիկ ցրուեցան փողոցներէն, յուսարեկ մրջիւններու պէս:

Այն ստեն հաւանաբար, հեծանները ցաւի մէջ պարփակուած
իրենց հետ առին ծերունին եւ անոր ծխամորեկը սեւ:

Ծխնելոյզին մօտ մեծ մայրը քնացաւ, ան չտեսաւ բնաւ

Հրշէջները, ոչ ալ արշալոյսը հասնող,

Երբ սահագանգները լած էին միագոյն:

Ասանց բոցի միացող ծուխ մը սրբեց հեփաթը երկու պետրներուն,

Եւ անոնց յիշատակը, գունատ տերեւներու պէս, էջեց նամբաներէն

Մինչեւ կոյուղիները, մինչեւ ծով:

Քայց տունը հին՝ դեռ կը մնայ կոյր նայուածքով,

Միայն երեք պատեր կը բարձրանան գետնէն,

Վարդատունկեր եւ մեղրածուծեր կը պատուպարեն գանոնք,

Այնտեղ կտուներ մսկոտ՝ կը գուգաւորուին:

Կղպուած է տակաւին դուռը խեղանցի,

Հեռուէն հուրը բրածուկի եւ ոլառի

Երեկոյեան նեւոզ գեփիւռին հետ հինկեկ դուռն այս կը քակեն:

Փոքր ննջարանը գոյնզգոյն պատեր ունի,

Կամ քերեւս արտացոլումն է յարկաւարերուն,

Որոնք յուսահատօրէն կառչած են գերաններուն բունի:

Մինչ ծեր ծխամանները տերեւներուն հետ կը շարժակին,

Ծառը կանգնած կը դիտէ լուացարանը, ինչպէս ծոյլ Յուլիսին,

Երբ անոր նիւզերը կը յօտէր այդ ծերունին ստոյգ:

Քաց է դուռը,

Թումանջան չկայ, միայն «Ճիւղ-Վալ» մը եւ

«Յ... արարիչը այս տիեզերքին»:

Քայլեր չեն ուղղուիր այլեւս դէպի սրահեռը մացառուտ,

Դէպի դարպասը անկուղայ, դէպի աշխարհը դատարկ

Եւ անկէ անդին:

Ուր յուշերը կարճատեւ են, երագները՝ անիրագործելի,

Կեանքը՝ անհեթեթ, ինչպէս պատերու ալիւսներ,

Որոնք կառչած իրար անհատուում սարսափով,

Կամ ալ գետին փռած՝ կը սպասեն դեռ

Արմատալիլ մեքենային իրենց մատուցելիք

արարողութեան վերջին:

Վ Ե Ր Զ Ի Ն Ա Ր Ա Ր Ո Ղ Ո Ւ Յ Ի Ի Ն

Կը քանդեն այս քաղամասը աղիւս առ աղիւս,
Տուն առ տուն, փողոց առ փողոց:
Հողաբարձ մեքենաները հոն են, եւ իրլանտացի բանուորներ
Ծիփկները շրքներուն մէջ, կուրծքերը բաց՝ անձրեւին տակ
Քաղաքս կը քայքայեն:
Կանգուն պատերը կը կքին, երակներ կը խարազանուին,
Կը մոռնան արցունքներու մէջ, օդին մէջ պտուտեղով կը փլին,
Կը դիզուին գետին, մեռնելու համար արտերու կանաչ նայուածքին դիմաց:
Նախապէս մէկու մը տունը ըլլալու էր ասիկա,
Մանուկ մը լուսինը գտաւ պատուհանին ձողերէն,
Ուր հիմա ասնէտներ կ'երթեւեկեն եւ կը խոկան նզնաւոր կատուներ:
Այս պատը շքափայլ ծաղկէ նախշերով
Էլ վիսին գունաւոր նկարը գրկած է, որ դեռատի աղջկայ մը
Երագներու սաղմն էր, հաւանաբար:

Իսկ այդտեղ՝ աւլուփի եւ այրող դէզերու ետին
Տակաւին կանգուն է դատարկ եկեղեցին, մութ, գլխիկար,
Տարտղնուած լուսամուտներով, ուրկէ պատգամը կը տարածուէր.
Ո՛չ փողոցներ կան հիմա, ա՛յ սրբաւէզներ. միայն աղիւս աղիւսի վրայ
Հստուկեմա, շնչասպառ,
Եւ անոնց ներքեւ՝ ծերացած շաղախ:

Կը քայքայեն քաղամասս՝ նորը շինելու,
Եւ իրլանտացի բանուորներ, գիշերային գինարբուքներէ հոտ
Կը հայրանան անոր,
Անէր,
Անհոգածու,
Առանց ամուսնանալու:

Եւ մեզի համար:

Ն Ե Ր Ք Ի Ն Թ Շ Ն Ա Մ Ի

Այդ օր կը մեմէի հին մատենադարանի մը մէջ.
Հանդիպեցայ գիրքի մը մաշած, կտոր-կտոր,
Պատահակնօրէն վերցուցի, դարձուցի քանի մը էջ, եւ յետոյ
Դիմանկար մըն էր, որուն ծանօթ էի, կամ ալ այդպէս կը կարծէի:
Ստուած նայուածքը նեղեց էջերը, ինկաւ անցեալին.
Վատ գգացի յանկարծ, սիրտս տարօրինակ կը բարախէր:

Գրագրականապարը սուգունցաւ մշուշի մէջ, եւ կամարներ
 Ձեռունցան նամբաներու եւ հոբիգուններու. դիմանկարի եզրէն անդին
 Անդունդ մը արարեցնելու, որոնք գծունցան
 Խառար գիշերներու մէջ, ետու հոդերու վրայ՝
 Մանուածապատ յիշատակարաններու կողքին:
 Շրքնեկուն վրայ այդ ժպիտն էր, որ չսիրեցի. Բամահրանք էր կարծես,
 Յօնք մը բարձրացած, ինքնավստահութիւն, արհամարհանք դիտողին հանդէպ,
 Կամ նկարիչին, կրնայ բլլայ՝ մարդկուրեան:
 Ձեխուրեան նշան մը դիմագիծիկ վրայ քայքայման հետքերով.
 Հաստամարմին, ստոյգ, անկիւնաւոր, այտերը կակուղ,
 Ապահատիչի գերգործածութիւն, չպարսկուող մեղկութիւն նկարագրի:
 Յէս մը ունէր գլխուն, մէկ կողմ հակած
 Գէպի ձախ՝ ուղիղ պէյս մը, սուր, շատ վայելուչ ու լայն:
 Գիմանկար մըն էր, որ կը ճանչնայի, կամ այդպէս կ'ենթադրէի,
 Բայց կարեւոր չէր: Կարեւորը այն էր, որ այդ չորցած մեղանին մէջ
 Կարծեցի կը տեսնեմ մանուկներ, որոնք կ'այրին,
 Կարծեցի որ սկսանքներս ինկած են ջուրերու մէջ
 Կը կրկնեն խոր, աւելի խոր բաներ, լուրթիւններ, որ լացի համ ունին.
 Լայսի աղեղներուն հետ մթութիւնը կը կիսուէր, եւ տեսայ,
 Որ այդ սարսափագրու աչքերը յառած էին ինձի...
 Անոնք դիտած էին ե՛ւ կողոպուտ, ե՛ւ սիչ, բռնաբարում, երեքհազար մարդեր,
 Որոնք կը հրկիզուէին եկեղեցիի մը մէջ, շուրջը՝ գիւղեր,
 Հին գերեզմանատուներ կը թալանուէին. ժողովուրդ մը լքուած,
 Սովահար, մահուան մէջ, տեսած էին: Ձիմք չէի ճանչնար, բայց
 Ճանչցայ ատելութիւնը իր աչքերուն մէջ: Ձէի հանդիպած իրեն,
 Սակայն գգացի, որ կը ճանչնանք իրար տարիներէ ի վեր:
 Այդ ստուերն էր դէմքին՝ որմէ դեռ մանուկ վախցած էի
 Եւ դիմադրած երկար: Այդ այն աչքերն էին, որ երբեմն
 Ջատանցանքիս մէջ կատաղութեամբ կուրցնել կ'ուզէի, ճեւղեղծել, քանդել,
 Մոլեցիմ քրտիմք մը կը սրբէր արիւնածոր շրթները,
 Որոնք կը բացուէին...
 Այդ օր դիմանկար մըն էր, որ ճանչցայ յանկարծ, կամ կարծեցի ճանչնայ,
 Ջգուշութեամբ էջին վարը կապուացի, գրուած էր «Հ. Պէշ,
 Ջանգուածային ջարդարարը հայ ցեղին, 1915»:
 Եւ չեմ գիտեր ինչո՛ւ գտանցանքս իջաւ մատնեյաւս մէջ
 Եւ այդ հատույիս էջերէն ես ալ,
 Ե՛ս ալ փեստեցի

Հ Ա Ր ՈՒ Ա Շ Մ Ը Կ Ա Մ Ե Ր Կ ՈՒ

Շալկեցին այդ մարդը բլուրէն, հարկադրեցին, որ դանդաղի երբեմն,
 Հարուած մը կամ երկու:
 Շարունակեցին մազցումը ցեխէն, ժայռերէն վեր, աւելի վեր,
 Բարձրացուցին խաչովայտին: Ան ժպտեցաւ ցաւով.
 Հարուած մը կամ երկու:

Տեսաւ արիւնք ծորող, շիջող աչքերը, գլուխը, որ կը դազար
 Անշարժ արցունքներով: Ուշացած ներումի նիշեր.
 Հարուած մը կամ երկու:
 Վարը բազմույթինը սկսաւ սուլել, եւ քոնալոյսեր
 Ձեւաւորեցին մտապատասխներ: Լուսինը մթնեց, մթնեց ան մինչեւ
 Տկար շող մը դադրեցուց սիրտը խաչեալին:
 Հարուած մը կամ...

Անճրեխին սակ շարունակեցին իրենց համբան եւ յանկարծ սկսան հարցնել
 իրար,

Թէ ինչե՛ր անցան-դարձան, եւ այդ բոլորը ինչո՞ւ համար էին:

Թէ ինչ եւ ինչո՞ւ համար էր այդ բոլորը:

Տ Ե Ս Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Երկարօրէն սիրեր եմ հայելիները պատկերածոր,
 Մոսցեր եմ շուքերը գոց դռներու ետին,
 Մտածումի մթուրեան մէջ վառած եմ մումեր,
 Որ ունեւամ յայտը:
 Արեւը՝ որ աչքերուս լոյսով կը փալփէր,
 Լուսինը՝ դալուկ մատակարարը երազներուս,
 Իրենց հետեւորդներով ընծայած են ինձի
 Խորհուրդներու ակնոց:
 Եթէ միայն բանայի աչքերս՝
 Տեսնելու կանաչութիւնը խոտին, որ պիտի դալկանար,
 Փալփլուն ծփազիծերը կեանքի, որոնք պիտի սառկանային.
 Ահաւասիկ դատարկ, ծագրածու բերանը օրերուս
 Անփակ պիտի մնայ:
 Իսկ գոնեաւ ետին շուքեր հիմուագին կը պարեն,
 Հայելիներ կը հալին, ու կ'անհետանան
 Պատկերները:
 Բայց ցերեկ է դեռ. կ'ըսեն արեւ կայ, աստղեր:
 Ակնոցներուս խորութեան մէջ աչքերս ինկան, կ'ըսէի:

Գ Լ Խ Ո Ւ Ս Մ Է Ջ Մ Ր Ջ Ի Ի Ն Ն Ե Ր Կ Ա Ն

Մրջիւններ կան գլխուս մէջ. ուղեղս կը ծամծմեն ինչպէս կ'ուզեն
 (մրջիւնները կը ծամծմեն):
 Այդպէս պէտք է որ ըլլայ, այլապէս ինչպէ՞ս պիտի գլտնայի,
 կը վախնամ. այտոնդ եմ մշտապէս: Դեռ երէկ
 Մեղուներու պարս մը փութաց սսնճելու գանձի:
 Այս յետմիջօրէին արագաշարժ փայտիսեր կ'աշխատին աչքերուս վրայ:

Իսկ մա՞գս,
 Խենթ եմ, որ չըզգացի, նաններ, սջիլներ, դուք գիտե՞ք բույրը:
 Ինչպէս որ կ'ըսէի, հիամալի ընթրիք մըն էր, սր ունեցանք այդ գիշեր:
 Կրտսիս բացառաբար բովիչ էր,
 Հերբլտ յօրանջեց ամբողջ տեւողութեան,
 Շփոք, ցնարարեր, անպայման տպաւորելու մարմնօրով:
 Եւ յաջորդ առաւօտ, դժբախտաբար, մրջիւններ ուղեղիս մէջ:
 Զարմանալի, բնաւ չէի գիտեր, թէ մրջիւնները կրնան երգել.
 Ծիծեռնակները՝ այս, սոխակները՝ այս, բայց մրջիւննե՞րը, սարսուռնե՞րը,
 Սարդե՞րը միտածայն, երբ կը ժողովուրդին թեզ փառաբանելու.
 Այս մէկը, բարեկամ, պէտք է ընդունիլ, որ բաւական նոր է:


Ոչ, այլեւս ցերեկը այնքան փայլուն չէ ինձի համար,
 Ոչ ալ ստուերները՝ յստակ: Տես, սիրելիս, ահա կ'երբայ
 Գումէշը, սպասնալով կակորդս ի վար,
 Կակորդ

(Լէկ՝ երիւզովի ոսկի նեղերը, եռչակե՛ մահը բջիջներու,
 կորսաւ՝, բշուտական շողո՞ւրթ, կակորդ պատռոզ դիրտ,
 պիտի փոխարինուիս ժամանակի ընթացքին):

Այսօր Կիրակի է: Մրջիւնները ճնացած են
 (Կը տարակուսի՞ք):

Ըսէ՛ք կրտսիսին, որ չմտահոգուի, դողս բարեկամութեամբ է,
 Կռնակի ցաւ, գլխացաւ կամ սրտի բնահանոյք չմնաց:
 Պէտք է ընդունիլ, որ այս անիծեալ ապուհները դեռ չեն աւարտած
 Կտակս, բայց այլեւս պէտք է մեկնին կարծեմ: Հմայիչ կոսքանջար մը
 Կը տեսնեմ, որ կ'անի ձախ թեզանիքէս:
 Իսկ ա՞ջը,
 Օ, վատահ եմ ձեր ժամանակի դէգերը պիտի չտարողնէ,
 Որովհետեւ այլեւս, բարեկամներ, որոշած եմ չըլլալ:

Անդրէրէնէ Թարգմանեց
 Վ. ԶԱՆՈՅՇ Թ. Բ. Ե. ԱՆ



Բ. Ա. Գ. Ի. Ն.

ԳՐՈՂՆ ԱՐԱՐԻՉ Է

Հայրենի մամուլը այժմ անցրնող մտքերը հաւանաբար կարեւոր կրկնապատկելի քիւր նետազայ էջերուն խմբում Ռաֆայէլ Արամեանի մտածողական գրութիւններուն, բայց դժուար քէ կարելի ըլլայ իրենց յիշել աւելին: Յոբելեաններու առիթով շարք մը սրտարույն անդրադարձներ, քանի մը գրութեան հետեւ: Ո՛չ գրախօս էր Արամեան, ո՛չ քննադատ եւ ոչ ալ տեսարան: Սյնուամենայնիւ, պիտի տեսնէ՛ք, իր քիչ էջերը աւելի բան ըսած են ու կ'ըսեն, քան ուրիշներու կեղեկային յօդուածները: Գլխիցի քաղումներ ըլլալու անպատեհութիւնը յաղթանարած եւ սեփական փորձառութեանց ու ապրումներուն բովէն անցած խտիճի են Արամեանի գրական անդրադարձները եւ ունին գրուիչ համոզականութիւն մը, զգաստացնող եւ ուղեմիջ բազում դիտողութիւններ՝ բազում հասցէներու...

Քսաներորդ դար եւ նոր արագութիւններ: Այս նոր արագութիւնները ոմանց հին շիտթութիւնների մէջ են ձգել: Միշտ էլ տեխնիկական յեղաշրջումների գիտական մեծ յայտնագործութիւնների ժամանակաշրջանում ոմանք շատում են յայտարարել, թէ դրականութիւնը եւ է մնում: Նրանք մտածում են, որ դրականութիւնը մարդու մտին է, եւ քանի դեռ չի կորուել մարդուց, չի կորուց առաջ կամ եւ ընկնել: Առաջնորդուելով երկուցիկների արտաքին յատկանիշներով, նրանք շարունակ են ալիքի բարձրութիւնը, բայց ոչ երբեք ալիքի սեւը, հզորութիւնը, խորութիւնը:

Ի դէպ, հայ դրականութեան մէջ համարեա՛ թէ նոյն մէջն է բոլորքուել: Բայց դա նոր արագութիւններից ծնուած շիտթութիւնը չէ, այլ ինքնամատուցման, տեղ բռնելու, արժուէկներով հրապարակ բացելու, ունկնդիրներ ունենալու տենդ: Տեղին է յիշել հանրայայտ ասացուածքը... Խեղդուող փրկութեան դորձը իր իսկ ձեռքերի մէջ է: Մեր դրական կազմակերպու-

Թիւնները վաղուց արդէն անտարբեր հանդստութեամբ են վերաբերուած լաւին եւ վատին, արժէքաւոր եւ անարժէք երկին, թողնելով, որ փրկուողն ինքն իրեն փրկի, վատարանուողն ինքն իրեն փառարանի: Կարող ես ապրել քաղաքի ծայրում, առենք թէ կամերիս միութեան արդու մօտ, կամ Կիլիկիայում ու լաւ գրքեր գրել, բայց եթէ համբերատար ես, համեստ, ոչ ոք քեզ չի յիշի, ոչ ոք քո մասին չի գրի: Դաւալիր անտարբերութիւնն ու ազմրկայար ինքնամատուցումը ապրում են կողք կողքի եւ, թերեւս, սա էլ պատճառներից մէկն է, որ այսօր մենք ակամատես ենք, թէ ինչպէս գրողները խօսով լեռնալեռների նման, բարձունքներ նուաճելու փոխարէն, գրողւած են իրար միջեւ ձյուռը կապերը կարելով: Առջեւից գնացողը կարում է կապը, մտանալով, որ անկման ժամանակ ետից եկողը կարող էր փրկել իրեն, իսկ ետեւից եկողը կարում է, մտանալով, որ առջեւից գնացողը կարող էր օճեւել: Ի հարկէ, հայ գրականութեան բնահանուր շարժումները չի խաթարուած, բայց չէ՞ որ անհասակունութիւն անկողից գրողների մի մեծ խմբի այս վարքագիծը ոչնչով չի օճուած գրականութեան պարզացմանը: Կարելի էր լսել, չխօսել այս մասին, կարելի էր ուրիշների նման չարախնդութեամբ սպասել բարձունքներ մտղայողների անկմանը: Ծառերը այնքան լուրջ տեսք են տալիս անձնական ու շահագրգռական իրենց ձգտումներին, որ թոււմ է, թէ խկապէս հայ գրականութիւնն այս քաղաքակիրթ, հաշուող, սրացող մեքենաների դարում հին պապենական սալլակով է ատջանում, եւ կամ ընդհակառակը, Ժողովրդից, կեանքից պոկուած թուշում է տխրեցրական անհասունութեան մէջ: Մի մասն իրեն բարձունքներում է գլուած, եւ պահանջում է, որ հասարակութիւնը իրենով շարի, թէ որքան ես է մնացել գրողից, իսկ միւսը՝ թառել է հասարակութեան ուսին, պայմանով, որ իրեն հասարակութեան մէջ համարեն: Այս ամէնը ակամայ յիշեցնում է Հեմինգուէյի «Բարի առիւծը» պատմութեամբը: Բարի առիւծը թռչել գիւհէր ու արհամարհում էր միւս առիւծներին, որոնք թռչել չգիտէին ու սնում էին հնդիկ վաճառականների մտով: Բարի առիւծը բուսակեր էր եւ իր արհամարհումը նախնիներին այցելելուց յետոյ, երբ վերադառնում է սուն, սիրած սրճարանում նախ սրճահատանքով պատմում է միւս առիւծների մասին, իսկ յետոյ, օ՛, գարմանք, բարբեթին պատուիրում է հնդիկ վաճառականի մտով սենտուրչներ...: Ո՛չ, մենք չպէտք է նմանուենք բարի առիւծին եւ ոչ էլ այն դաճածներին, որոնք դաճաճութիւնը հողին մօտ լինելու նախապայման են համարում:

Մեզ պէտք չէ քաներորդ դարի արաղութիւնների մտրուցում տարուել, երբ արուեստագէտը զրկուած է տեսածը, գլուցածը անշտաղ վերապրելու, աւելի խորը ըմբռնելու հնարատրութիւնից, եւ կամ ընդհակառակը՝ տխրեցրեք ձգտելը երկիր չվերապատնայու սարսափով շագախել:

Ժամանակակից փառատախիճ գրականութիւնը գրան յաճախ է անգրադանում: Պատմութեան մէկի հերոսուհին տաղնապով է նայում երկրներին, որը վերեզմանոցի է փոխուած: Նա էլ չի կարողանում նայել սատղերին, իսկ սատղապնայ ամուսնու կործանումից յետոյ նաեւ արեւին եւ վարադուրում է արեւի լոյսը: Մի ուրիշ պատմութեամբում հերոսը յանկարծ սարսափով կտակածում է, որ ինքը նոյնպէս կարող է ապրատ լինել ու ստուգելու համար բացում է երակը:

Մեզ՝ գրողներին, պակասում է սեփական երակը բացելու ինքնաճանաչման այս քաջութիւնը: Եւ որպէսզի տեսածն ու գլուցածը մատուենու, խորը քննութեան չենթարկենք, գաղաղները բացատրող արաղութիւններով

ենք տարւում, իսկ միւս դէպքում՝ արդարանում ենք արագութիւնները ժրխատող անշարժութեամբ: Բայց չէ՞ որ մեր դարը նոր արագութիւնների, այլ անցած ժամանակների շարժման արտապայտման ունի, եւ այս արտապայման ընթացքում մեզ ուղեկցում է վաղուայ տարածութիւնների նուաճման հետ կապուած գանդաղումի նոյն ծանօթ ու հին դրացումը, իսկ այսօրուայ դանդաղումների մէջ տղայայ անծանօթ արագութիւնների սանձահարումը: Էլ ինչո՞ւ ենք այս ամէնն իրար դէմ հանել. մի՞թէ արագացման հետ մեր սիրտը փոխել է իր գարկերի թիւը...

Ամէնից առաւել աղակտղմնորոշուել են այսօրուայ մեր երիտասարդական զբաղանութեան որոշ ներկայացուցիչներ: Նրանք այնքան համոզուած են հայ գրականութեան ետ մնալու մէջ, որ կարուել են հայրենի գրականութեան ավերից եւ հեշտութեամբ շփոթուած են այլազգի գրողների հետ: Նրանք անափ սփիւրհանոտներում նաւարկելու տենդով բռնուած՝ մոռացել են ինքնութիւնը պարզուց վրօշ բարձրացնել կոյճին, մոռացել են, որ լուսին թուշող հրթիռներն անգամ արդային եւ պետական պատկանելիութիւն ունեն, եւ ամէն արդային գաղափար համամարդկային գտնուելու հենց առաջին պահից սպաշտուցում է: Ի հարկէ, այս դէպքում մենք չենք խօսում միջին սերնդի «բարի տախտիկներ» մասին, որոնք ըննադատում են իւրայիններին, բայց հնդիկի մտով սենտուիչներ են ոչնչացնում, այլ երիտասարդների, որոնք կտրող են սխալուել, սեղմ գրելը ծաւալի հասկացութեան հետ շփոթել, ու պատմուածքներն ատատորէն վերջակէտերով համեմել, չգլտնալով, որ ամենածաւալուն կլաակի վէպերը սեղմ եւ կարճ են ամենախոքրիկ, շատախօս եւ երկարարան պատմուածքներից: Նրանց չի կարելի մեղադրել, բայց կարելի է մեղադրել այն գրաքննադատներին, որոնք զեկավարուած են զործի արատքին նշաններով եւ մէկին կարճ, միւսին երկար գրող են համարում, արագութեան եւ գանդաղումի իրարամերժ տեսութիւն են յարկնում ու գրականութիւնը տեղաւորում կաղապարների, սահմանաղծումների շրջանակներում: Այս սահմանաղծումները յաճախ մեր քննադատներին ախպիսի՛ սըխախների են հասցնում, որ քաղաքների ժխտի մէջ գլուզական անդորրը երազելը համատարած ամֆալտապատման տենդում ամֆալտը ճեղքող խոտի քաշութիւնը գովերդելը համուց, ժամանակայրէջ բաներ են համարում: Բայց չէ՞ որ գրանք մարդկային են, մէկը միւսով պայմանաւորուած: Աւտոմեքանանների գոյութիւնը ճիւղերին ոչնչացնելու իրաւունք չի աալիս: Տեխնիցիզմի սիրահարները, ինեն գրանք գրողներ թէ քննադատներ, պէտք է որ դիտենան գիտութեան բանաստեղծական արարչական ակունքները: Գիտութեան արուեստը, բանաստեղծականը մարդու համար է: Լքել մարդուն, մարդուն արժէքատրել միայն շրջապատող իրերի, երեւոյթների միջոցով, կործանարար է ե՛ւ գրականութեան, ե՛ւ գիտութեան համար:

Գրականութիւնը, որ մարդու համար է եւ մարդու մասին, առաւել եւս պէտք է կապուած լինի մարդու ներքին արագացումների ու գանդաղումների հետ: Չէ՞ որ մարդը ատոմային ատակտրի նման իր մէջ մեծ արագութիւններ ու գանդաղումներ ունի:

Ինչո՞ւ այնքան երկար ու յամաորէն խօսեցի նոր արագութիւնների ու գանդաղումների մասին: Թերեւս կարելի էր կարճ կապել եւ կամ բոլորովին չխօսել: Բայց ինձ թւում է, որ մեր գրականութեան որոշ ներկայացուցիչներ տառապում են երկրից կարուելու եւ անկշռելիութեան հիւանդութեամբ, իսկ մի մասն էլ իրենց փոքրիկ հոգակտրին կառչած, չեն ուզում նայել շուրջը, չեն ուզում հասկանալ աշխարհը, մի բան, որ կ'օգնէր աւելի խոր, աւելի ճիշդ ըմբռնել կեանքը:

Քսաններորդ դարը ո՛չ միայն արադուլթիւնների, այլեւ՝ չափերի, մասշտապների փոփոխման շրջանն է: Այն, ինչ մեզ համար մի ժամանակ հեռու էր, հիմա մօտեցել է, ինչ մեծ էր՝ փոքրացել է: Մեր օրերում նաև հաճախ երեւոյթն է կատարում՝ փոքրը մեծանում է, մօտիկը հեռանում եւ դրա հետ կապում, փոխում է մասշտապների, չափերի մարդկային բնկալումը: Ահա ձգտում ենք դէպի լուսին, ձգտում ենք տեսնել նրա քարերը, ժայռերը, հողածածկը, դնում ենք հետու, որ մօտիկից տեսնենք հետուն, դնում ենք լուսին, որ հետուից հասկանանք մօտիկը՝ երկիրը: Մանրադիտակն ու հետադիտակը կարծես նոյն բանն են անում: Նրանցից մէկը մօտիկ դանուսդ անտեսանելին է մօտեցնում, անտեսելի դարձնում, միւրը՝ հեռուներում գտնուողը: Աւրեմն խօսել «փոքր» թեմայի ու «մեծ» թեմայի մասին, սասջնորդուելով միայն երեւոյթի միակողմանի ընկալումով՝ սխալ կը լինի: Հարցը նրանումն է, թէ՛ դրողը ամենափոքր թեման խաչարացոյցի տակ դրել է, թէ՛ ոչ, եւ ամենամեծ թեման մօտեցրել է աչքի համար բնկալի ատրածութեան: Այս երկու չափումների մէջ նորից մարդկային աչքի բնկալման սահմանադիժն է չափանիշը, մարդն է որոշիչը: Ահա այս չափանիշով է, որ մենք պէտք է արժէքաորենք արտեսալի գործը, եւ ոչ թէ սպաննող, պատի նման խուլ սահմանումներով: Մեր ժամանակներում յաճախ ենք սխալման արտեսալի, գրականութեան ինդիքը ինքնաճանաչումն է, թէ՛ ոչ: Ինքնաճանաչում, ինքնալիքլուծում ասելով մենք յաճախ հասկանում ենք ինքնադարձիտում, բայց ինչո՞ւ չըջտպատով հետաքրքրուելը չենք հաշուում ինքնառչնչացում, ինքնամոռացում, չզիտակ: Այստեղ էլ չպէտք է սասջնորդուենք ամէն ինչ սպասող երթայնուումներով: Եթէ ինքնաճանաչումը, ինքնաքննումը օգնում է մէկ ուրիշին իրեն ճանաչելու, ուրեմն դրողը չի սահմանափակուել իրենով, եթէ ուրիշներին քննելով դրողը գտել է իրեն, ուրեմն չի կորցրել մարդուն: Ռեմբրանդեան ինքնանկարներն ու վերաքեզեան գլխանկարները նոյն բնդհանրացումներն ունին եւ վճուում են մարդուն մարդ պահելու ինդիքը: Ուրեմն կարող ես ինքդ քո մասին այնպէս գրել, որ քո ստեղծագործութիւններն աւելի խիտ բնակեցուած լինեն, քան հիւրանոցային երւումուտի անուանացանկ յիշեցնող վէպերը:

Գրողը արարել է, նա աշխարհ է գալիս, որ տաի՝ թող լոյս լինի ու մարդը ճանաչի եւ սիրի իր նմանին:

ՌԱՅԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆ

ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ ԻԹԱՔԱ

Ոչիտեւը Իքաճա՛ կայրեկի՛ էր վերադառնում: Ճամայարիկն քագմաքի՛ գայրակցութիւններ, վտանգներ էին գարանել նրան: Հոմերոսի հետար սխալ յայրանարէր ե՛ւ ինքն իրեն, ե՛ւ իրենից դուրս գտնուող աշխար-

նը: Այսպէս տագնապալից էր նաեւ մեծ Նարեկացու բանաստեղծական հե-
րասի՝ աստուածայինն ձգտելու ուղին: Մեղքի գիտակցման ու այն յազրա-
հարելու, քանելու մի անհաւատաբ կախի էր դա, որն ի վերջոյ պիտի պակ-
ւէր ինքնուրուիւնան, ինքնուրուիւնան ուղիով արարչին հաստարուելու
փոքարածութեամբ: Գրական կերպարի այս ընթացքը մարդուն մարդ պա-
հելու դժուարին եւ ծանր մեղանարան է, որը գրականութեան ու արուեստի
հիմնական խնդիրն է: Գրականութեան մէջ չի կարելի այս կամ այն հերոսի
անընդունելի արարքը, վարձագիծը արդարացնել ստեղծուած վիճակով:
Մարդուն չի կարելի ազատել պատասխանատուութեան եւ պարտքի խորը գի-
տակցումից՝ պայմաններն ու վիճակը վկայակոչելով: Աւելի՛ն. մարդ պիտի
է գիտե՞նայ, որ այս աշխարհում ինչ կատարուել է ու կատարոււմ է, լաւ կամ
վատ, իր ձեռքով է լինում: Գրականութիւնը մարդուն երբեք չպիտի է քոյլ
սայ պարտագանց լինել, այլայէս նա մեր կողմից յորինած շատ ու շատ
«արդարացնող» պատճառաբանութիւններ ու պայմաններ կը գտնի: Երբ աշ-
խարհում մարդը կարող է շեղուել սեփական քանակարկից, եւ այդ միջոց-
ները նայողներ եւ կիկլոպներ չեն, այլ՝ իրական գոչքակողութիւններ, մար-
դուն արարիչ պահելը, ինքն իրենով ձեռնելը մնում է գրականութեան հարցե-
րն հարցը, ինչպէս Հովերոսի եւ Նարեկացու օրերում:

Ի զուր չէ, որ Հովերոսն իր հերոսներին աստուածացնելու հետ միա-
սին գարշապար է բնծաշում, եւ կամ Նարեկացին դէպի Բարձրեալը ձգտող
մարդու ուսերի վրայ դնում է մեղքի բեռը: Նրանք լաւ գիտէին, քէ որքան
վտանգաւոր է, երբ մարդը գաղարում է մարդ լինելուց ու փոխակերպուում
է Ասածոյ:

Մի երկու տասնամեակ աստուածայ գրականութեան հերոսների մեծ մա-
սը ասանց գարշապարի աստուածներ, կամ աստուածայինն, արարչականին
չձգտող, մեղքի մէջ համոյժով տապալուող ստոր էակներ էին: Ահա այս
մտացածին պարգեցու՛ր անխուտափելի սխեմաներ ծնեց, որոնց կաղապա-
րիկների մէջ միանման վէպեր, վիպակներ, պատմութեան ու բանաստեղ-
ծութիւններ կաղապարուեցին: Այն, ինչ կատարուեց մեր գրականութեան ու
արուեստի հետ (ի հոսկէ, կային ուժեղ անհասականութիւններ, որ կարո-
ղացան ընդդիմանալ այս միաձեւութեանը), քարդ ու խնկուած անհասկա-
նալի դարձնելու ճիգեր չէին, այլ պարզապէս երեւոյթների տեսանելի, ար-
տաքին, *անաստիկ* ընկալում, եւ գաղափարների անյայտ ու կարագարդում,
ուր ասանց սրտի, երկրնորանքի, բացասական ու դրական հերոսները անում
էին իրենց լաւ ու վատ գործերն ու մի քիչ էլ կենցաղային յարաբերութիւն-
ների մէջ էին մտնում միմեանց հետ: Այսպիսի հերոսները հեշտութեամբ կամ
դժուարութեամբ յազրահարում էին արտաքին խոչընդոտները, բայց ոչ եր-
բեք ներքին: Նրանք պարտուում, յաղթում էին, բայց ոչ երբեք իրենցից կամ
իրենց:

Մարդը դադարել էր իրեն նախաշելուց եւ դրա հետ չէր նախաշում իր
նմանին, իսկ «գրողը» սուանց ցաւի, դժուարութիւնների երկեր ստեղծելու
անսահման իրաւունք էր ձեռք բերել: Մի խօսքով, այսպիսի գրքերի հերոս-
ները դարձել էին արտաքին դժուարութիւնները, խանգակներն ու արգելա-
փակողները յազրահարող ձեւեր: Իսկ ընթերցողները՝ դէպքերին, հոգեվի-
ճակներին անմաս ձեւաբան դիտողներ: Ի հարկէ, աւելի հեշտ էր այսպիսի
գրքեր գրել: Այնինչ իսկական գրողի համար հերոսի ամէն մի հոգեվիճակն
ու արարքը պիտի լինի իր իսկ հոգեվիճակն ու արարքը: Եթէ մեղնում է հե-

րուսը, սպա այդ մտեր պէտք է լինի հեղինակի մտեւան բաժինը: Միայն այսպիսի ստեղծագործական ինքնամոռացումը, սեղի նիշդ՝ աշխարհի հոգսերի ինքնաստիականացումն է ստեղծում իսկական գրականութիւն:

Ժամանակակից մեր գրականութիւնը, ի հարկէ, շատ է փոխուել, նա փորձում է նանաչել մարդուն եւ տա է քերեսս պատմաոր, որ յաճախ խնկուում, մքսգնում ու կորցնում է պարզութիւնը: Սա հեղեղումի պլստորում է: Պէտք է այդ բոլորի պատմաոր փնտռել համաշխարհային գրականութեամբ տալուելով եւ մայրենի գրականութիւնը աչքարող անելով: Հիմա չկան այնպիսի գրողներ, որ կարդացած չլինեն Պոօշեանին, Շիրվանգաղէին եւ միւսներին: Աւելի՛ն. հիմա հիանալի գիտեն միջնադարեան հայ գրականութիւնը, եւ գրողները ոչ թէ օգտուում են վերջին հարիւրամեակի գրական արժէքներից, այլեւ փորձում են տէր դատնալ հագարամեակների գրականութեան ժառանգութեանը: Ուրիշ բան է, երբ խօսում ենք յաջող եւ անյաջող ուսումնասութեան մասին: Ուսումնասութիւնը յաճախ կարող է միշտ լինել նաեւ, երբ օգտուում ենք մեր դասական գրողներից: Զգիտես ինչու մենք չենք խօսում այս վերջին երեւոյթի մասին:

Հասկանալ ժամանակի ոգին, չի նշանակում կտրուել հողից, մարդուց եւ սաւառնել տիեզերական տարածութիւնների մէջ: Տեսնիկան եւ գրողութիւնը չեն կարող գրականութեան համար չափանիշներ լինել: Պատկերացրէք, որ անցեալի գրականութիւնը յանկարծ կոչուէր շոգեհարշային գրականութիւն, եւ կամ մի ուրիշ գիտական յայտնագործութեան անունով: Բոլոր դէպքերում գրականութեան առարկան մնում է մարդը եւ մարդու ներաշխարհի փոփոխութիւնները: Ուրեմն, երբ գրողներից մամեք տարում են ժամանակի տեսնիկական մտքի առաջընթացով եւ արտաքին երեւոյթներով՝ ինչ-որ ձեւով կրկնում են անցեալ գրականութեան վտանգաւոր ընթացքը, երբ մարդը գրականութեան մէջ հասարակական կեանքի ոլորտներում դարձել էր կառուցող, գիւղացի, բանուոր, բայց ոչ երբեք մարդ:

Մեր գրականութեան առաջնահերթ խնդիրներից է նաեւ ազգային գրականութեան հարցը:

Երկար ժամանակ, եւ հիմա էլ, հայրենի հողին անդաւանան գրականութիւն է համարում ազգային տարազով գրականութիւնը: Ասում եմ տարազով, որովհետեւ դեռ մօտիկ անցեալից մեզ ժառանգութիւն է մնացել այն սխալ մտայնութիւնը, թէ ազգայինը ձեւ է եւ ոչ բովանդակութիւն: Նախ եւ առաջ ազգայինը աշխարհընկալում է, իւրատիպ աշխարհագրագոյութիւն, որը կարող է գուրկ լինել արտաքին, տարազային ընդգծումած յատկութիւններից: Ազգայինը միշտ էլ համամարդկային է, եթէ նա տարագ չէ, որովհետեւ հենց այն, որ գրականութիւնը պատկերում է հոգեվիճակ, աշխարհընկալում, դրանով էլ դատնում է բոլորի կողմից ընդունելի: Իսկ երբ տարագի է փոխակերպւում, վերածում է *էկզոտիկ* կեցնադագրութեան, որը կարող է միայն հետաքրքրել, բայց ոչ երբեք յուզել: Ուրեմն՝ մենք չպէտք է երկի մասին դատնեմ նրանով, թէ որքան բարբառային բառեր, կամ որքան *ամիրներ* ու *պոպեր* են գործածում: Այդ ամէնը կարող են լինել, դրանք արտաքին միջոցներ են եւ իսկական ստեղծագործութեան համար չեն կարող ազգայինը ընկալելու բանալիներ դառնալ:

Ազգայինը ընկալելու, հասկանալու համար քերեսս մեզ՝ գրողներին, նորից ու նորից հարկաւոր է ուսումնասիրել մեր հին նարտարայետութիւնը, մանրամկարչութիւնը, միջնադարեան գրականութիւնը, երաժշտութիւնը

նր: Դրանք բիրտեղացուած, մաքուր վիճակով հասել են մեզ եւ կարող են շատ բան սովորեցնել, կարող են պարզաբանել ու հեռու պահել կեղծ, նախ- շագարդ ազգայինից, սրն այժմ յառաջ երեւում է մեր գրականութեան եւ արուեստի մէջ: Մեր հին տաճարների գույք ձեռքը, որմնաբանականների պարգուքները, երաժշտութեան բիրտեղեայ մաքուրքները, ուր այսօրուայ հասկացողութեամբ արեւելեան ելեւէջումներ չկան, կ'օգնեն մեզ՝ աւելի լաւ հասկանալ ազգայինը: Ուրեմն, եկէք վիճենք, ոչոքեմք ազգայինի մասին մեր քննումները, պարզենք հայկական այն պարտոր մթնոլորտը, որ ուղեկ- ցում է մեզ եւ ուղեկցելու է դարեր շարունակ եւ ինչպէս Ոգիսեսը, իմենքս մեզ ու արտաքին դիմադրութիւնները յաղթանարելով վերադառնանք իրաւա:

ՌԱՅԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆ

Մ Տ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Մենք եղել ենք եւ կանք Արեւելքի Արեւմուտքը եւ Արեւմուտքի Արեւ- ւելքը: Սա աշխարհադրական հասկացութիւնն է, եւ այս բանի ազդեցությամբ մեր ճարտարապետութիւնն է, երաժշտութիւնը, մանրանկարչութիւնը, Նարեկա- ցին, հայրենները:

Մի առիթով Չուխաջեանը դժգոհել է, որ իրեն քննադատում են եւրո- պական երաժշտութիւնից ազդուած լինելու համար: Չորմանալի է, ասում է նա, երբ եւրոպական կուլտուրայի տարրերը արեւելեան մտախնայ են օգտագոր- ծում, նրանց ոչ ոք չի քննադատում. աւելի՛ն. լաւ առումով նրանց անուա- նում են օրինակաւորներ, իսկ երբ իմ երաժշտութեան մէջ «եւրոպական» նուազներ են լսում, քննադատում են: Դեռ հարց է, այն, ինչ դուռ արեւել- ւեան է համարում, մի՞թէ մերն է եւ այն, ինչ եւրոպական է համարում, մի՞թէ մերը է:

Ինչո՞ւ եւ յիշեցի Չուխաջեանի խօսքերը, որովհետեւ արեւելքցի կամ եւրոպացի դասնալու սրտակի ճգտումը յաճախ է մեզ խանգարել, բմբանել բուն հայկականը, բմբանել, որ մենք ոչ այս ենք, ոչ այն, որ մենք Արեւելքի Արեւմուտքն ենք եւ Արեւմուտքի Արեւելքը, ու դրանով իսկ ինքնատիպ, ան- կրկնելի երանդներով հարուստ մշակոյթի տէր ենք, մշակոյթ, որն առիթից առիթ թթխում է եղել է՛ւ Արեւելքի, է՛ւ Արեւմուտքի համար: Հիմա, երբ խտրացի ճարտարապետները հայ ճարտարապետութեան տարածուն եւ խո- բունկ ազդեցութիւնների սյուրախ մասին են խօսում, իմ խօսքը չի հնչի որ- պէս անապարծութիւն, եւ ընդհանրապէս անապարծութիւնը, որից մենք ան- հիմն ու անփամանակ ասպնայեցինք եւ զգուշացանք նախորդ համադրում- բում, ոչ մի կապ չունի ինքնաճանաչման, ինքնաարժէքաւորման այս առողջ միջոցորտի հետ, որ արդիւնք է մեր ժողովրդի աննախընթաց վերելքի, նրա կէսդարեայ խաղաղ ու շինարար կեանքի:

Այլ կերպ չէր էլ կոչող լինել. աւելի՛ն. եւ կ'ասէի, որ մենք դեռ ա-

ուաջին քայլերն ենք անում մեր իսկ արժէքները ինքներս գնահատելու պորձում: Եւ թերեւս սա է պատճառը, որ հին ամօթխածութեամբ յաճախ վկայակոչում ենք օտարներին՝ մեր իսկ զխտեցածը հաստատելու համար: Ես ինքս էլ հենց այդպէս վարուեցի, երբ հայ ճարտարագետութեան սպառնալիցաների մասին խօսելիս վկայակոչեցի խաւրացի ճարտարագետներին:

Ես կ'ուզէի յիշատակել մեծ Կամխատի յորեկանը, այն պատճառով, որ այն բոլորից աւելի է հաստատում վերը տառածը: Յորեկանի օրերին ասուել ցայտուն երեւոյց, թէ դեռ արքան քիչ բան ենք արել մեր մեծ երգահանի կեանքը եւ ստեղծագործութիւնը ուսումնասիրելու գործում, եւ թէ՛ սրբան «զարուպ» ենք գնահատողները մէջ, երբ յորեկանի եկած հիւրերը, պարտաւորեցնող շատ աւելի բաներ ասացին (յիշենք Կարալեւակու էլոյթը):

Կամխատի անմահ ժառանգութիւնը նաև մեծ վկայութիւն է վերը ասուածի, այսինքն՝ մեր ինքնաարկութեան եւ Արեւելքի Արեւմուտքն ու Արեւմուտքի Արեւելքը լինելու մասին: Այս ոչ աշխարհապահան տեղահատաւածը մեր գրականութեան կտրեւոր հարցերից է, քանի որ դրա ճիշդ բնութեանը հարստացնելու է մեզ, ինչպէս հարստացրել է գարեք շարունակ, եւ հետո է պահել մեկուսացումից, առանձնացումից ու սահմանափակումից:

Ազգային ստրուգ գարձնելու եւ ձեւի նեղ շրջանակի մէջ տեղաւորելու սխալ մտեցումը մերթ շատ խայտալար եւ մերթ էլ Փրանկաւոր գործեր է ծրնել, իսկ երբ այն ընկալուել է սրպէս ոճ, ոգի, ստեղծուել է բուն սղապանը, եւ դրանով իսկ գարձել է համամարդկային:

Ի միջի այլոց, մենք վերջերս յաճախ ենք սժ ու սճաւորման մասին խօսում որպէս մի պահօրակելի բանի, սրի տակալութիւնը, իբր, վասնզ է գարձել հայ ժամանակից գրականութեան համար: Մենք այդպէս, կիտակրգիծական անով մի ժամանակ խօսում էինք համաշխարհային գրականութեան մեր լուստեղեակութեան մասին, որա մէջ գաւաճանութիւն տեսնելով «սղապանի» հանդէպ:

Ոճի հարցը այսօր շատ տաքնային է: Հիմա է, որ շատ արձակազերներ որոնում, աշխատում են դանիլ իրենց սճը: այսինքն՝ իրենց գանիլ (սճը՝ ինք մարդն է, ստեղծագործը), եւ այսօր խօսել սճաւորման մասին սրպէս բացասական երեւոյթի, նոյնքան անտեղի ու անժամանակ է, որքան անպարծութեան մասին խօսելը: Չցանկանալով երկարացնել իմ միտքը, ես կ'ուզէի մէջբերել Վերթոր Հիւկոյի խօսքերը.

«...Դեռ լաւ չի հասկացուած, քէ ի՞նչ է ոնը: Առանց մեծ մտածուց մի բարձր ոն չկայ: Ոնն իր մէջ պարունակում է մտածում, այնքան հարկաւոր, որքան աւշը՝ պտուղի համար: Ուրեմն ի՞նչ է ոնը. այն գաղափարն է՝ իբ բացարձակ արտայայտութեան մէջ, պատկերն է՝ իր կատարեալ դիմագծերի մէջ: Մտածումը ոն է, ոնը բան է, որ սգի է դառնում, ոնը բարբան է, ար Բանի է վերածում: Վերացրէ՛ ոնը, վերգիլիոսը կը ջնջուի, Ովիտոսը կը ցնդի, Տակիտոսը կ'անկայտանայ: Մեր օրով հմարել են հետաքրքրաշարժ յաժարանաւքիւն՝ «ոնասպաշտներ»: Սրանից երեսուն տարի առաջ Բնագրասների մի տիւմար դպրոց կար, որը մտացաւած է այսօր եւ որը ամէն ճիգ քափում էր նախատելու համար ոնը, այն անուանելով «ձի»: Ի՞նչ անարգանք, գեղեցկաւքիւնը կոչել ձի: Հոտեմտաների Աստղիկը ասում է մի Միլէյի Աստղիկին. «Դու միայն ձի ես»:

Վերթոր Հիւկոյի այս խօսքերը շատ բան են թերադրում մեզ: Թերեւս, «ձեւ» եւ կամ, աւելի ճիշդ՝ «սղապան ձեւ» հասկացութիւնը շատ է նեղա-

ցընում հարցը, ու ասնում է մեզ գէշի ազգային տարազուտումը եւ ոչ թէ ազգային սպու, մտածողութեան, աշխարհընկարման այն մեծ ոլորտը, որը եւ համամարդկային տարբէզ է հանել ու հանում է խօսքը, դոյնը, ճարտարայեւտական յօրինումքը:

ՌԱՅԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆ

ՄԱՐԴՈՒՆ ՄԱՐԴ ՊԱՅԵԼ

Մեր գրականութեան հիմնական տեղաշարժերից մէկը եւ համարում եմ այն, որ երէ ասաց, աւելի նիշդ՝ մի երկար ժամանակահատուածի ընթացքում հայ գրականութիւնը աւիտից աւիտ է գրագուել ազգային արժէքների եւ պատմութեան գեղարուեստական մարմնաւորման հարցերով, ապա այս վերջին շրջանում դա եղել է նրա մտահոգութիւններից մէկը:

Վերջին տասնամեակում են ստեղծուել «Անյուշի դանդակատուն», «Միտիթար Սպարապետ», «Երկար, երկար մի ճանապարհ», «Եղէզները չխոնարհուեցին», «Հայոց ճակատադիրը», «Ռուսա որդի Արդիշալի», «Գիրք լինելութեան», «Ռսկոն Երևանցի», «Արժիւ Վասպուրականի», «Շիրակ», «Պատմութեանը Մնայանիկի մասին» շարքը եւ շատ ուրիշ գործեր:

Բարի գալուստ մաղբեղով նոր սկստուղին, եկողին, մենք հրաժեշտ չտուեցինք մեր անցեալին, մենք ընդատաց զնացինք անցեալին եւ գալիքին, քանզի մէկն՝ արգէն մերը չէր, իսկ միւսը՝ զեռ մերը չէր գարձել: Ի հարկէ, սա չի նշանակում, որ հայ գրականութիւնը քողած այսօրուայ հարցերը՝ սպարտեց պատմութեամբ, աւելի նիշդ՝ սա նշանակում է տեղ դարձանք մեր անցեալ հուշարարային, եղանք նրա արժէքաւորողը, իմաստաւորողը, օգտագործեցինք այն այսօրուայ համար: Իմ բուսած այս գործերի մեծ մասը պրպական հնչեղութեամբ են ստեղծուած եւ հենց դրանով էլ գործօն մասնակցութիւն ունեն մեր կեանքին:

Միւս էական տեղաշարժը — բանաստեղծական կուլտուրայի ու վարպետութեան համահնչեղութիւնն է, երբեմն էլ առաջատար լինելն է, նկատի ունենալով ողջ սովետական պոեզիայի մակարդակը: Ձեռական ու թեմատիկ շատ հարցեր այսօր ոչ թէ որպէս արձագանգ, այլ՝ ծնունդ եւ սկիզբ են մեր պոեզիայի դարաւոր ծաւալմանից: Եւս մի առանձնայատկութիւն. միջին եւ երիտասարդ սերնդի արձակն այսօր հոգեբանական, հասարակական եւ անական շատ աւելի բարձր նաւառմաներ ունի, քան երբեւիցէ: Տեղաշարժերից մէկը, որն ինձ համար շատ բանկ է, այն է, որ սովետահայ արձակը ակնառու փորձեր է կատարում կանգնել սովետահայ բանաստեղծութեան նոյն մակարդակին, աշխատում է վիճել նրա հետ:

Մի խօսքով՝ այսօր գրական մակարդակի աւելի պրոֆեսիոնալ, աւելի

բարձր մթնոլորտ կայ, քան մի քանի տասնամեակ առաջ : Յանկանք, որ նույն-
 քան խոշոր անհատականություններ ծնունդ են առնում ժամանակներում :

Ի՞նչն է յատկանշական այդ տեղաշարժերին :

Նախ եւ առաջ Հայաստան երկիրը այն չէ, ինչ եղել է : Նա վստահ է
 իր ապագային, արժանապատուութեամբ է ցուցադրում իր ունեցածը, հա-
 յրատացնում է իր ժառանգութիւնը : Եւ հենց այս ամէնը արտացոլում է
 գրականութեան մէջ : Ինքնահաստատումն նիզերը նուազել են, աւելի ճիշդ՝
 ինքնահաստատման կարիքը վերացել է, եւ արժանապատուութեամբ ենք իս-
 տում մեր նուազումները եւ դարաւոր հարստութիւնները մասին :

Հայաստան երկրի նորոգ վիճակը, կառուցման թափը, քաղաքաշինու-
 թեան աննախընթաց վերելքը, գիտական մտքի առաջատար դերը *կամերանի*
 նման ազդում են արուեստի եւ յատկապէս գրականութեան վրայ, եւ մեր
 գրականութիւնը իր ընկալման սահմանները լայնացնում է, տարածում : 1000
 քուսակների մեծ բանաստեղծը՝ Դարեկացին, դառնում է ժամանակակից,
 Կամիսասի եւ Եկմալեանի երաժշտութիւնը հնչում է նոր ուժով, անցեալն ու
 այսօրը միասնաբար մասնակցում են մեծ ու լուսաւոր ապագայի ստեղծմա-
 նը : Ահա սա է յատկանշականը, սա է պատճառը վերը քուսած տեղաշարժե-
 րի : Հարցնում էք, թէ ի՞նչ գործեր են համարում այս ամէնի արտացոլու-
 մը . կ'ասէի՝ վիճելի գործերից մինչեւ անվիճելի արժանիքները : Այս լայնա-
 հուն ընթացքի ժամանակ դժուարանում են առանձնացնել, աւելի ճիշդ՝ չեմ
 ուզում առանձնացնել որեւէ գործ . սա ընթացք է, ուր գիտութիւնը նույնքան մեծ
 գործ է կատարում, որքան *Մարշալը*, ուր նույնիսկ չաջողուածը ինչ-որ դեր
 է խաղում : Ինձ քուսում է, որ հիմա մեր գրականութիւնը սպրում է ընդհա-
 նուր տեղաշարժ, եւ սա է միայն, որ ինձ թոյլ չի տալիս քուսարկել իմ նա-
 խասիրութիւնները :

Գրականութեան արդիականութեան խնդիրը այսօր, ինձ համար մի շրջ-
 քայ է, որ չի անջատում անցեալից : Ծովի խորքում ծնունդ մի ալիք մեծ
 ալիքախութիւն է ծնում ծովափին, եւ մեմք տեսնում ենք լողափին ծառս
 լինող ալիքի անեղութիւնը, ուժը, բարձրութիւնը, տեսած չլինելով այն մէ-
 կին, որ ծովի բացերում ծնունդ, ու այս ալիքախութեան պատճառը եղաւ :

Արդիականութիւնը ինձ համար չընդհատուած երէկն է այսօրուայ մէջ
 եւ շարունակուող վաղն է այսօրի : Արդիականութիւնը ինձ համար մեր դա-
 րաւոր երազների իրականացումներն են, լինի դա մարտաբարտութեան, ար-
 ւեստի, թէ գիտութեան մէջ : Եւ կարծում եմ, որ արդիական լինել չի նշա-
 նակում ժամանակի տեսանելի, շօշաղիլի հատուածի առանձնացման մէջ սպ-
 քել . վերջինս աւելի շուտ եւ համարում եմ հեռուներից չեկող եւ հեռուները
 չձգտող մեզ իրապաշտութիւն : Գրողին տրուած են բոլոր ժամանակները՝ ինչ
 եղել է, ինչ լինելու է եւ ինչ կայ, եւ այս շաղախից պէտք է նա ստեղծի ար-
 դիական արուեստը :

Հարցնում էք, թէ գրական, ստեղծագործական ինչ հարցեր են ինձ
 յուզում : Կ'ասէի, որ բոլորից առաւել մարդու բարոյական հարցի գեղար-
 վեստական մարմնացումը : Բարոյական բարձր *կասեգորիայի* մարդը ընդու-
 նակ է մարդ մնալ բոլոր պայմաններում : Ինձ քուսում է, գրականութեան եւ
 ստեղծագործութեան խնդիրն է արուեստի միջոցներով մարդուն մարդ պա-
 նել :

Լ. Մ Կ Ր Տ Ջ Ե Ա Ն

Սփենազոր իշխանութիւնը այսօր անզոր է մինչև վերջ եւ նախապէս յղացուած ձեւով նոյնիսկ մի շնչին բարեփոխում անցկացնել երկրի մակարդակով, եթէ այդ բարեփոխումը կոչուած է բարձրացնելու հասարակութեան կազմակերպման մտարդակը, այսինքն՝ դրօշմարտէն: Նա ձեռքի մի շարժումով քնդունակ է խորատկելու գիտութեան ու արուեստի ամբողջ աշխարհիններ, տնտեսութեան ճիւղեր, դարուսը հիմքեր ու նոյնիսկ ամբողջ ժողովուրդներ: Բայց նա ընդունակ չէ պաշտպանելու նոյնիսկ մի փոքրիկ սակզմադրձական դորձ՝ միջավայրի հարուածներին, եթէ վերջինս մատուցուել է այդ գործը փաշտացնել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՉԻՆՈՎԵԻ



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՉԻՆՈՎԵԻ «ԽՈՐԱԲԱՅ» ԲԱՐՁՈՒՆԲՆԵՐԻ ԳԻՐԲԸ

1976 թ. Օգոստոսի 7ին Բելգիայի Լուվէն քաղաքի սպորտմեներից մէկուժ ուսարանեց 560 մեծագիր ու մանրատառ էջերից կազմուած մի արտատուր բովանդակութեամբ ուսանելի դրքի սպազութիւնը: Հրատարակութիւնը նախաձեռնուել էր Շվեյցարիայի Լոզան քաղաքի «Լ'Աժ մ'Օմ» հրատարակչութեան կողմից, որը գրանից ասաջ երբեք որեւէ ուսանելի դիրք չէր հրատարակել: Բայց ձեռքի տակ ունենալով Խորհրդային երկրից դժուարութեամբ արտասահման հասցրուած ինքնաւարկ ձեռագիրը, հրատարակչութիւնը սրտեց նոր էջ բացել իր պատմութեան մէջ ու համաշխարհային հասարակայնութեանը ներկայացնել մի որոշ իմաստով նորայայտ հեղինակի՝ նրա նորայայտ երկով:

Գրքի հեղինակն է Ալեքսանդր Ալեք-

սանդրովիչ Չինովեւր, իսկ վերնագիրը՝ «Խորաբայ բարձուկները»: Չինովեւին «նորայայտ հեղինակ» համարելի սոսկ «որոշ իմաստով»: Իրականում նա շատ յայտնի անձնաւորութիւն ու հեղինակ է իր՝ փիլիսոփայութեան ստղարէցում, իրբեւ արտմարանութեան ու գիտութեան մեթատարանութեան մասնագէտ: Նրա հեղինակութեամբ Խորհրդային Միութեան մէջ եւ այլուր լսյս են տեսել մօտ ասար գրքեր ու բազմաթիւ յօդուածներ: Նա ժամանակին համարուել է մտաւոր հեղինակութիւն ու վկայակոչուել համապատասխան փիլիսոփայական աշխատութիւններում: Բայց այժմ առաջին անգամն է, որ նա ներկայանում է «զանգւածային»՝ շարքային ընթերցողներին իր «Խորաբայ բարձուկներ»ով, նախկինից սարչեր պայմաններում:

«Խորաբաց բարձունքները» անկարելի է տեղափոխել զբաղման սրելի սեռի շքեղանակում: Դրական հանրաճանաչ կանոնների խախտման դեմ է կերտուել, ակնյայտորէն, երկր: Այն փաստորէն միմեանց յաջորդող ու միմեանցից անկախ ալլազան վկայութիւնների ու խորհրդածութիւնների շարք է, որոնց ներքին կապը հաստատելու համար բաւական ջանքեր են պէտք: Ալլազան տարբերը միաւորող օղակը զբքի ընդհանուր միտքորտն է, հեղինակային ուրոյն ոճն ու նպատակաւարացութիւնը, մտքի ուղղութիւնն ու լիցքը: Գիրքը, առաջին հերթին, յարմարութեան համար, կարելի է համարել ընկերարանական հետազօտութիւն: Բայց նոյն իրաւունքով կարելի է կոչել եւ փիլիսոփայական, արուեստաբանական, պատմագիտական, կենցաղագիտական հետազօտութիւն, եւ այլն: Եւ այդ ամէնը ներկայացուած է «երեւակայական աշխարհի» մակարդակով ու իրստորէն երզիծական դիրքերից:

Այլ կերպ ասած՝ «Խորաբաց բարձունքները» խորհրդային իրականութեան ալլեւալլ կողմերի ու նաեւ ամբողջութեան բացայայտումն է՝ դրական իրատեսակ եզանակով: Թէեւ պէտք է անմիջապէս շեշտել, որ զբքում ամէն ինչ ասուում է «ստանց անունները տայու»: Զբքայ ժամանակակից ոչ մի անուն, թուականն ու գէպը, որ ձեւականորէն համընկնի հանրաճանաչ ստամական աոււանքներին: Ուտախ՝ զուտ իրաւական տեսակէտից, ոչ ոք չի կարող զիրքը համարել որոշակի՝ աոււալլ դէպքում խորհրդային իրականութեան անմիջական արտայայտութիւն ու հեղինակին ներկայացնել որոշակի մեղադրանքներ՝ այն կամայականորէն պատկերելու համար: Միււնոյն ժամանակ, ոչ մի խելահաս բնթերցող Ձինովելի զբքում չի կարող խորհրդային իրականութիւնից տարբեր մի ալլ իրականութիւն կուտհել ու տեսնել: Եւ խորհրդային իշխանաւորները, զբքի արտասահմանեան հրատարակութեանը տեղեկանարուց յետոյ, անմիջապէս զործի

անցան ու հարածանքը աւելի սաստկացրին Ձինովելի զէմ:

1977ի Յունուարի սկզբին Մոսկուայում Ձինովելը զրկուեց Գիտութիւնների Ակադեմիայի փիլիսոփայութեան ինստիտուտում աշխատելու հնարաւորութիւնից, դիտական բոլոր տատիճաններից ու կոչումներից եւ նոյնիակ արտակաղմի ընթացքում ստացած պինտորական շքանշաններից: Նա արդէն, բնականաբար, հետացուել էր կուսակցութիւնից եւ Մոսկուայի համալսարանից, սրտեղ պրոֆեսոր էր, ու ալլպիտով անզօրմ մնացել: Արեւմտագերմանական Միւնխէնի համալսարանի սեկտոր նիկորատու կորկովիցը Յունիսին իր մօտ հրատիւրեց Ձինովելին՝ իրբու ժամանակաւոր դասախօս, բայց խորհրդային իշխանութիւնները մերժեցին ելքի թույլտուութիւն աւլ փիլիսոփային:

Միււնոյն ժամանակ Ձինովելին շքանշանեց Ելէյցարիայում հաստատուած այն դրական մրցանակը, որը ամէն տարի տրուում է եւրպական երկրներում յայ տեսնուլ լուաղոյն ակնարկի կամ վիպակի համար: Ալլպիտով, Ձինովելի երկր ակնարկ համարուեց, քանի որ այն վիպակ չէ: «Խորաբաց բարձունքները», սուտեքէնից բացի, յայ է տեսել նաեւ Ֆրանսերէն, թարգմանուել անդլերէնի ու զերմաներէնի, եւ կասկած չկայ, որ հետագայում աւելի պիտի տարածուի: Թէեւ հեշա է պատկերացնել, որ թարգմանիչները շատ պիտի շարչարուեն ու հնարագիտութիւնների զիմեն՝ այդ ինքնատիւ երկր ամենայն հարագտութեամբ օտար բնթերցողներին փոխանցելու ճանապարհին:

Ալլերանդր Ձինովելը ծնուել է 1922 թուին՝ բանուարի եւ հաւատացեայ դեղլիւհոււ ընտանիքում: 1939ին բնդունուել է բարձրագոյն ուսումնական հաստատութիւններից մէկում, բայց շուտով հետացուել՝ ոչ-ստայինապաշտական արտայայտութիւնների համար: Պատերազմի բնթացքում ծառայել է բանակում՝ իրբու օղաշու, վերջում վիրուտորուել:

46 թուին վերադառնալու մտեղ է համարաբան, իսկ 54ին պաշտպանել «Տրամաբանութիւնը Կարլ Մարքսի աշխատութիւններում» թեկնածուական աւարտածառը, 66ին դարձել Մոսկուայի պետական համալսարանի պրոֆեսոր, նաեւ՝ փիլիսոփայութեան դոկտոր: Ֆինլանդիայի Գիտութիւնների ակադեմիայի անդամ է: Պաշտօնակիցները կողմից առաջադրուել է «Պետական մրցանակի», բայց իշխանութիւնները նոյնիսկ չեն թոյլատրել հասնելու «մրցութի» վերջին ընտրափուլին: Առաջադրուել է իրրեւ Գիտութիւնների ակադեմիայի թղթակից-անդամ, բայց չի ընտրուել: Արտասահմանից բազմիցս հրաւիրուել է միջազգային այլապէս գիտատեղումների, բայց ոչ մի անգամ երկրից դուրս զալու իրաւունք չեն տուել: Եղել է «Վոլյարսի ֆիլոսոֆիի» ամսագրի խմբագրական կազմի անդամ, բայց կամովին հեռացել է, որովհետեւ անհնարին է եղել ընտրած հեղինակների յօդուածները տպել: Մի ժամանակ վարել է մոսկովեան համալսարանի արամարանութեան տնօրէնը, բայց իշխանութիւններն «ազատել են»՝ տնօրէնի դեկավարութիւնը «ամբողջապէս» պատճառարանութեամբ: Եւայլն:

Ձինովեի փիլիսոփայական աշխատութիւնները, չնայած խորհրդային իշխանութիւնների ուղղակի թէ անուղղակի խափանարարական միջոցառումներին, պատշաճ գրական արձագանգ են գտել թէ՛ խորհրդային երկրում ապրող վաւերական փիլիսոփաների մօտ եւ թէ՛ արտասահմանում: Նրա առաւել ճանաչումը երկերն են.— «Բազմանշանակ տրամաբանութեան փիլիսոփայական խնդիրները», Մոսկուա, 1960 թ. (անդրերէն՝ 1963 թ., Հորանդիա), «Գիտական գիտելիքների տրամաբանական տեսութեան նիւտրալիզմը», Մոսկուա, 1967 թ. (դերմաներէն՝ 1970 թ., Բեռլին-Բրաունշուայգ-Բադեյ, անդրերէն՝ 1973 թ., Հորանդիա), «Բազմանշանակ տրամաբանութեան ակնարկ», Մոսկուա, 1968 թ. (դերմաներէն՝ 1968 թ., Բեռլին-Բրաուն-

շուայգ-Բադեյ), «Կոմպլեքսային տրամաբանութիւն», Մոսկուա, 1970 թ.:

Վերջին տարիներս խորհրդային երկրից դուրս ելած եւ այժմ ԱՄՆում ապրող փիլիսոփայ Բօրիս Երազինը — որը ժամանակին ուսանել է Մոսկուայի համալսարանի նոյն փիլիսոփայական ֆակուլտետում, սրտեղ որ ուսանող էր նաեւ Ձինովեյը — վկայում է, որ երկաստարդ Ձինովեյը — վկայում է, որ երկաստարդ Ձինովեյը ո՛չ միայն մեծ ազդեցություն ունի փայլուն գրողներից ու սրամիտ ծաղրանկարիչ: Երազինի ասելով, դեռեւս այն ժամանակ Ձինովեյը բաւական քննադատորէն էր վերաբերում մարքսիզմին ու մարքսիստական փիլիսոփայութեանը եւ սուտի, համեմատաբար անկասկածելի համար, բնորոշ «մտթեմատիկական տրամաբանութիւն» մասնադիտութիւնը, թէեւ նրա ներսում վառ էին մնում հասարակական հեռաքրքրութիւնները: Երազինը պատմում է, որ 50ական թուականներին արդէն Ձինովեյը հրապարակորէն ծաղրում էր խորհրդային պաշտօնական պատկերացումները փիլիսոփայութեան վերաբերեալ: Յետապիսեան շրջանում, 1954-55 թուերին, Մոսկուայի համալսարանում կազմակերպուած բանավեճերից մէկի ժամանակ, Ձինովեյը յիշելով Մարքսի նշանաւոր 11րդ գրոյթը Ֆոյերբախի մասին, թէ «փիլիսոփաները միմեյեւ հիմա բացատրել են աշխարհը, իսկ այժմ խնդիրը կայանում է այն փոխելու մէջ», ասել է. «Միմեյեւ հիմա փիլիսոփաները միայն բացատրում էին աշխարհը, իսկ հիմա նրանք այդ է՛լ չեն անում»:

Մա նշանակում է, որ «ժողովուրդը բարձունքները իր տեսակի յարստութիւն է ընթերցողների, բայց ոչ հեղինակի ու նրա մերձաւորների համար: Գրքում արձարծուող ու ձեւակերպող զազափարները հեղինակի ներսում խմորուել ու վերախմորուել են երկար տարիների ընթացքում, հաստատուել ու կրկին հաստատուել կեանքի տրեւումները հիման վրայ ու դարձել վերջ-

նախան համոզմունք, անբեկանելի ճշմարտութիւն հեղինակի համար: Այդ պարտոյան աւելի է բարձրացնում դրքի խնայական կշիռը եւ միայնարանական նըշանակութիւնը:

1977 թուի տարեկազմին Լնդոնում կայացած մամուլի ասուլիսում՝ խորհրդային երկրից նոր դուրս ելած քանդակագործ ու նկարիչ (չրաֆիկ) էրնստ Նելզվիստանին պատմեց իր բարեկամ Զինովիեի դրքի յղացման ու պատրաստման հանդամանքների մասին: Նա միայնց, որ գլխաւոր պատրաստելու զտարտարը ծագել ու ձեւաւորուել է իր արուեստանոցում եւ պարբերաբար քննարկուել բարեկամական շրջանակում: Եւ դա ակնյայտ է ու երեւում է հենց դրքի բովանդակութիւնից, որտեղ Նելզվիստանին ներկայացնում է իրբեւ Մադիրա եւ իրադարձութիւնների մեծագոյն մասը տեղի է ունենում նրա արուեստանոցում կամ այդ արուեստանոցի շուրջ:

Առաջին հերթին հարց է ծագում, թէ ինչու է գլխաւոր կրում «խորաբաց բարձունքներ» վերնագիրը: Եւ պատասխանը շատ կարեւոր է, որովհետեւ հենց վերնագրից է սկսում հեղինակի ծագրական գրեթեմբ, իրտիանութիւնը ոչլրաանութիւնների, բառախաղերի ու տառախաղերի միջոցով պատկերելու եւ ներկայացնելու անխտիտ ջանքը:

Արդ՝ խորհրդային երկրում շատ է տարածուած գալիք «կոմունիզմի լուսաշող բարձունքների» մասին ճառերը: Մինչդեռ Զինովիւր սրտել է ներկայացրել խորհրդային բուն իրականութեան առկայ եւ ներքին, «գրականացուած» պատկերը: Բուսերէն «սիյալուչիէ վիստի» նշանակում է «լուսաշող բարձունքներ», «խակ «գիյալուչիէ վիստի»՝ «խորաբաց բարձունքներ»: Տարբերութիւնը ընդամէնը մէկ տառ է, — ս եւ գ, — բայց իմաստը՝ 180 աստիճանի հակադրութիւն: Հեղինակը գրաւում է ոչ թէ երեւակայական ու անոյց «լուսաշող բարձունքներով», այլ, նոյնիսկ տարբական տրամաբանութեան կանոնները արտաքուստ խախտելու գնով, իրա-

կոնութեան էութեամբ ու խորքերով, դէպի ներքեւ տանող «բարձունքներով», անդունդներով, վէրքերով ու խոցերով, եւ այլն:

Գրքի ընթերցողը տալիս իսկ պահից կարող է նկատել, որ կան անհամար «պերտնամներ», իրենց մարդկային արտայայտութիւններով, բայց չկան բուն մարդկային անուններ: «Պերտնամներն» օժտուած են պայմանական ու այլաբանական անուններով, որոնք թելադրական իմաստ ունեն այս կամ այն ասումով: Եթէ մնանք անջրջափի սահմաններում եւ կանդ առնենք միայն հիմնական անունակազմի վրայ, — կարսզ ենք նկատել հետեւեալը: Որոշ պերտնամներ օժտուած են բառացիորէն բացասական պիտակով, բայց իրականում ճիշդ հակառակն են գրտեւորում իրենց խօսքերի ու գործերի մէջ, այսինքն՝ դրական յատկութիւններ են կրում: Այդպիսիք են, օրինակ, — Շիգոֆրեմիկ, Նելալատեմիկ (Նելարգագար), Կլեւեմիկ (Զրպարտիչ), Մագիրա (Անշորհք նկարիչ), Բալտուն (Շաղակրատ), Կրիկուն (Ճըշան), Դուլալչիկ (Երկերեօանի), Կարիերիտ (Պաշտօնամոլ): Այլ պերտնամներ, ընդհակառակն, բառացիորէն գրական պիտակ են կրում, բայց իրականում անհրապոյր են ու ծիծաղելի, — Միլիխել (Մամոյ), Սոցիալոգ (Ընկերարան): Կան չէպօք անունով պերտնամներ, առանց ներքին հակադրութեան, թէ՛ գրական եւ թէ՛ բացասական մակարդակով, այսինքն՝ անունը չի հակադրում էութեանը: Դրանցից են. — Սատրալցեմիկ (Աշխատակից), Սալուսիլից (Պաշտօնակից), Պրետեքեմտ (Յուակնորդ), Պատտիտել (Այցելու), Պրալեց (Ճշմարտական), Պեւց (Երգիչ), Ուլիտել (Ուսուցիչ): Կան եւ բացայայտորէն հեղնական ու նոյնիսկ անարգական պիտակներ. — Խրեակ (Արու խոյ), Ռապալչունկա (Անկոճակ շապիկ): Ստալինը յիշում է իրբեւ Խագեալին (Տէր ու տիրական), Լենինը՝ նոյնպէս Ուշիակել (Ուսուցիչ):

Դուտելով ամէն ինչից, իւրաքանչիւր անուն ու իրադարձութիւն ներկայացնե-

լիս՝ հեղինակին իբր մաքրում նկատի է առնել որոշակի անձանց ու իրադարձութիւններ: Շարքային ընթերցողը, բնականաբար, երբեք չի կորուզ այդքան խորանալ ու հաստատ որոշել, թէ որ դէպքում յատկապէս ո՛վ է ներկայացուած, նոյնիակ եթէ ինչ-ինչ հանրայայտ նմանութիւններ կուանի: Բայց հրատարակւած այլևայլ ուղղակի կամ անուղղակի վկայութիւններէ համաձայն, կամաց-կամաց պարզւում է, որ դրբի հեղինակը «Շիրոֆրենիկ» ասելիս իրեն է նկատի առնել, «Մաղիք» ասելիս՝ Էրնաս Նելիզ-վեանուն, «Երկերեսանի» ասելիս՝ Սնգրէյ Սինեաւսկուն, «Ճշմարտական»՝ Սուրենիյինին, «Երպիչ»՝ Ալեքսանդր Գալիչին, «Մեկոճակ շապիկ»՝ Նուկնի Նատուշենիոյին չեւային: Ի հարկէ, ճիշդ չի լինի ամէն ինչ բառացիօրէն բնութենել: «Խորաբաց բարձուկներ»ը հրատարակ է հանուել զբախան ու, մա՛նասնո՛ղ՝ երգիծական կրկի իրաւունքով եւ հեղինակը պատասխանատու չէ իրեն արուող փաստական վերադրումներէ համար: Նա ոչ մի որոշակի անուն չի նշել, հետեւապէս իւրաքանչիւր ընթերցող ինքն է պատասխանատու իր ենթադրութիւնների համար, ինչպիսիք էլ լինեն այդ ենթադրութիւնները՝ պայծառ կամ մռայլ:

«Խորաբաց բարձուկներ»ում ստակրայէս ներկայացուած է մոսկովեան մատարական միջավայրը, այդ միջավայրին յատուկ գէպերով ու մտածումներով: Բայց, մէջ ընդ մէջ ու զուգահե-սարար, արտացոլւում են եւ հասարակութեան կեանքի միւս բնագաւառները, թէ՛ անմիջական գիտարկումների եւ թէ՛ յուշերի մակարդակով: Այդ ճանապարհով է, որ ընթերցողը ծանօթանում է հեղինակի շարագրած մտածումներին՝ նախապատերազմեան, պատերազմական ու յետպատերազմեան տարիների անցու-գարձի վերաբերեալ: Պէտք է ասել, որ զրքում անպակաս են եւ կոպիտ ու գոհ-հիլ պատկերները, նաեւ արտայայտու-թիւնները: Թերեւս հեղինակն այդ միջոցին է գիմել հասարակութեան կեանքի պատկերը անպայման «ամբողջու-

թեամբ տարու» նկատառումով: Թերեւս էլ այն պատճառով, որ բուսաստանեան իրազանութեան մէջ դոհեհուլութիւններն այնքան պայտան են, որ անկարելի է անտեսել, մա՛նասնո՛ղ այդպիսի մի գրական իրադատուկ կրկում:

Ինչպէս որ արդէն ասուածներից կարելի է հասկնալ, Ջինովիէի դերքը ո՛չ իր ձեւով եւ ոչ էլ իր բովանդակութեամբ մրակոււ հեապոտութիւն չէ, արդէսդի հեարուար լինի նրա նիւթն ամփոփել հանրամատչելի կզանախով: Պարզապէս անկարելի է որոշել զրբի աիերն ու սահմանները: Նրանում ամէն ինչ կարելի է գտնել՝ արասքուստ անկարպակից դասուարութեամբ, նոյնիակ խառնիխուռն, ինչ որ բասական գժուարացնում է ընթերցումը, մա՛նասնո՛ղ խորհրդային իրականութեան խորտարորտութիւններին անձանթ եւ, տասել եւ, մասուր անբարարար տեսողաշտ ունեցող մարդկանց մոտ: Բայց սասջին գժուարութիւնը յագթահարելու գէպրում՝ սկուում է գրուութիւնը եւ իրար յեաեից բացում են նարանոր հորիզոններ, որոնք մասլին ընդգրկելու ճանարարհին ոչ մի ճիւղ աեխրդ չի թւում: Ճիւղըր լիուլի հասուցում են թանկաղին գիւտերով:

«Խորաբաց բարձուկներ»ը ձեաականորէն կարմուած է հեղինակային փոքրիկ ներածութիւնից եւ կրեք անհաւասար բաժիններից, հեաեեալ վերնադրերով.— «Խորաբաց բարձուկներ» (էջ՝ 9-287), «Որոշումը» (էջ՝ 289-468) եւ «Պոեմ ճանճարչի մասին» (էջ՝ 469-561): Իսկ սասջին բաժինն իր հերթին, եթէ աչքաթուղ անենք մի շարք անորոշ ստորարածանումներն ու անընթեռնելի տասաշար — «Վերնադրերը», պարմնակում է այսպիսի ենթարածային ոլորաներ, — «Շարպարակ անկարագրի, ազատուրեան, ճշմարտութեան, բարոյականութեան, եւայլնի մասին», «Շիրմաբարը», «Աւ Մաղիլայի մասին»:

Ամբողջ դերքը, սկզբից մինչեւ վերջ եւ յիշեալ ստորարածանումներից անկալս, բաժանուած է նոյնպէս անհաւասար հասուածների, բուրն էլ վերնա-

գրուած, միևնույն է՝ հաստատօք կէս տողից է կազմուած թէ 4-5 ու աւելի էջերից: Դա գիրացնում է թէ՛ գրքի եւ թէ՛ բնթերցողի շնչատու թիւերը, նպատաւոր դեր խաղում գրքի կազմախօսութիւնն ու ներքին տրամաբանութիւնը բմբռնելու ճանապարհին: Վերնադրերը անպայման եզակի ու մէկը միտից անկախ վերնադրեր չեն, այլ նաեւ պարբերական կրկնուութիւններ, յիշեցումներ, մատնանշումներ, գուրգուրութիւններ, եւայլն: Այս ամէնին պէտք է աւերացնել, որ շարադրանքը ճկուն է, լսկանական արտայայտութիւնների գերակշռութեամբ, այլազան, պատկերաւոր ու հրաշքերիչ, — ամենալուրջ կարգի խորհրդածութիւններին յաջորդում են երգիծական ու կրկնածափան պարբերութիւնները, ջնարական բնութ կրօն գեղամները, արձակին լրացնում է չափածոն, ինչ որ վկայում է հեզկնակի ս'չ միայն իմացական, այլև՝ գեղարտական ու ստեղծարարական ցայտուն անակոթիւնները մասին:

Մինչայժմեան բացատրութիւնները նպատակ ունէին միայն բնթերցողին ընդհանուր կարգով բնութեացնել Ալեքսանդր Զինովևի գրքի կառուցուածքային յատկանիշները: Բայց, բնականաբար, ամէնից էականը գրքի բովանդակութիւնն է, այն, թէ ինչ է ստում եւ ինչ է ուզում ստել հեղինակը: Իսկ 560 ծայրայեղօրէն իրա էջերի բովանդակութիւնը, անկասկած, անկարելի է պատմել որեւէ յօդուածում: Մնում է միայն մատնանշել հանդուցային գրուողները:

Զինովևի գիրքն սկսում է 1974 թրւակիր հետեւեալ ներածականով.

«Այս գիրքը կազմուած է վերջերս բացուած եւ շուտով լեռնած աղբակոյտում պատահաբար գտնուած ձեռագրի բեկորներից, այսինքն՝ առանց պետերի գիտութեան: Աղբակոյտի հանդիսաւոր բացմանը ներկայ էր վարիչը՝ այբբեական կարգով դասաւորուած տեղակայներով: Վարիչը կարդաց մի պատմական փաստ, որի մէջ յայտարարեց, թէ մարդկութեան դարաւոր երազը շուտով կը կատարուի, քանի որ հորիզոնի վրայ ար-

դէն տեսանելի են սոցիզմի խորաբաց բարձունքները: Սոցիզմը հասարակութեան մի երեւակայական կարգ է, որը կը հաստատուէր, եթէ հասարակութեան մէջ անհատները միմեանց նկատուամբ կատարէին արարմանը՝ բացառապէս ըստ ընկերային օրէնքների, բայց որը իրականում անկարելի է, երակտային ենքրադարձութիւնների կեղծութեան քերոււմով: Ինչպէս որեւէ արտապատմական անհերքելուքիւն, սոցիզմն ունի իր սրբալ տեսութիւնը եւ ամենիչ պրակտիկան, բայց թէ ինչն է այստեղ տեսութիւն եւ ինչը պրակտիկա՝ անկարելի է որոշել թէ՛ տեսականօրէն եւ թէ գործնականում: Իրանկը ոչ մէկի կողմից բնակեցուած բնակելի կէտ է, որը չկայ իրականում: Իսկ եթէ այն պատահաբար լինէր՝ գուտ յերիւրամբ կը լինէր: Յամեմայնդէպս, եթէ այն որեւէ տեղ հնարաւոր է, սպա միայն ոչ մեզ մօտ՝ Իրանում: Թէեւ ձեռագրում նկարագրուող իրադարձութիւնները եւ գաղափարները, դատելով ամէն ինչից, երեւակայական են, նրանք հետաքրքրութիւն են ներկայացնում՝ իբրեւ իրանցիների հին մայրնիների մարդու եւ մարդկային հասարակութեան մասին ունեցած սխալ պատկերացումների վկայութիւն»:

Այս է ամբողջ ներածութիւնը՝ իբրեւ գրքի բանայի:

Դրա իմաստը բացատրելու համար արժէ բացատրել, որ Զինովևի պատկերած երեւակայական աշխարհը կոչուած է «Իրանակ», թէ՛ քաղաքի եւ թէ լայնածուալ երկրի իմաստով, բնակիչները՝ «իրանցիներ», միակ հանրապրտագիր ուսմունքը՝ «իզմ», կառուցուող հասարակարգը՝ «սոցիզմ», որի կատարեալ ձեւը կոչուած է «պիզմ», իբրեւ երանելի ապագայի հուստ:

Ուշագրաւ են նաեւ ներածութեանը անմիջապէս յաջորդող տպերը. «Ինչպէս պնդում են բոլոր մեր եւ քնդունում բազմաթիւ ոչ-մեր գիտնականները, Իրանակի բնակիչները մի գլուխ բարձր են մնացածներից, բացառութեամբ նրանց, ովքեր որ հետեւել են նրանց օրինակին»:

Բարձր են ոչ թէ յետադիմական կենսաբանական բնութեանը (այդ տեսակէտից նրանք հաւասար են), այլ՝ յառաջդիմական պատմական պայմանների, հիշդ տեսութեան շնորհիւ, որը ստագում է հենց նրանց մոլորութեան վրայ, եւ իմաստուն դեկլարատութեան շնորհիւ, որը վարպետ է այդ գործում: Այդ իսկ պատմատու, Իրանսկի բնակիչները չեն ապրում այն հին տափակ իմաստով, որի մէջ վերջին օրերն են ապրում այնտեղ՝ նրանց մօտ, այլ իրագործում են պատմական միջոցառումներ: Նրանք իրագործում են այդ միջոցառումները նոյնիսկ այն ժամանակ, երբ նրանց մասին ոչինչ չգիտեն եւ նրանց չեն մասնակցում: Եւ նոյնիսկ այն ժամանակ, երբ միջոցառումներն անհասարակ չեն անցկացում: Այդպիսի մի միջոցառման հետագոտութեանն էլ հենց նուիրում է սոյն աշխատութիւնը:

«Հետագոտուող միջոցառումը կոչւում է ԵկեթՁԼՄՊ: Այս անունը կազմւած է նրա ականառը մասնակիցների անունների սկզբնատառերից: Անունը կազմել է Աշխատակիցը, իսկ գիտութեան մէջ առաջին անգամ մտքել Մրածողը, որն այդ ստիւի հրապարակել է յօդուածներով մի շարք՝ մի ուրիշ, աւելի հրասապ նիւթի շուրջ: Յօդուածները գրուել են բարձր գաղափարական-տեսական մակարդակով, այնպէս որ՝ դրանք ոչ ոք չի կարգացել, բայց բոլորն էլ հասնութիւն են տուել: Դրանից յետոյ ԵկեթՁԼՄՊ տերմինը դարձել է հանրահանաչ եւ դուրս եկել գործածութիւնից»:

Սա Զինովիւի ոճն է եւ ուղեցոյց է ծառայում ամբողջ դրքում: Ասել ամէն ինչ՝ «ստանդ անունները տալու»:

Եւ ահա իրանսկեան պայմաններում, — «Հարկադրական անգործութիւնից ազատ ժամանակ, Եիգոֆրենիկը գրեց մի ընկերաբանական շարադրանք: Նա այդ՝ յայտնի հետեւանքներով յղի գործն արեց հին բարեկամ Մագիլայի խնդրանքով: Դրել նա չէր սիրում ու չէր ուզում: Նրան վիճակուում էր անհետաւաչի ջանքեր գործադրել՝ կայծակնային արագու-

րեամբ անհետացող անկարգ մտքերը բռնելու եւ քղբին փակցնելու համար: Բացի այդ, նա համոզուած էր, որ այդ մասին վաղ թէ ուշ կ'իմանան բոլորը եւ իրեն դարձեալ կը վիճակուի գնալ Լարոյատորիա: Եւ դրանից տխրութիւն էր զայն: Բայց նա չէր էլ կարող չգրել: Նրան համակել էր մի գաղտնիքի շփոթեցում, որ յայտնի է միայն իրեն կամ յանկնայնդէպ շատ էջերի եւ նա չէր կարող իր անպատու կեանքն աւարտել՝ առանց այդ գաղտնիքը մարդկանց հարդրելու վերջին փորձն անելու: Նա զիտէր, որ մարդկանց համար իր գաղտնիքը խորասպէս անհետաքրքրական է: Բայց դա արդէն այլեւս գեր չէր իրագում: Նա բարոյական պարտք էր գգում ոչ թէ մարդկանց տօջել, մարդկանց նա պարտական չէր բացարձակապէս ոչինչ, այլ իր իսկ աօջել: Մարդկութիւնը պարտականում էր իր իսկ մէջ»:

Յաջորդ էջերում եւ սլորաններում շարադրում են սարբեր կեղտ մտածող անձանց տեսակէտները «Եիգոֆրենիկի շարադրանքի» վերաբերեալ, պաշտօնական ու անկախ մակարդակներով: Այդ շարադրանքում կենտրոնական տեղ են բռնում գատուութիւնները «ընկերային օրէնքներին», այլեւայլ «չեղումներին», «ընկերայինի եւ պաշտօնականին» փոխարարութեան, «ընկերային արարքներին», «ընկերային խմբերին», «ընկերային անհատին» եւ յարակից նիւթերի շուրջ: Տեղին է ասել, որ Եիգոֆրենիկի գրքի թերթը լիովին հակասում են Իրանի պաշտօնական ու ընկալեալ պատկերացումներին եւ կազմում մի բոլորովին ինքնուրոյն համակարգ՝ բոլոր բազկադասիչ ստորոգելիներով: Բայց գրքանց շնորհիւ հնարար է գտնում խորանալ իրականութեան մէջ ու մէկ առ մէկ բացայայտել ասկայ հակասութիւնները, տիրոյ բարբերի ներքին անհամաչափութիւնները:

«Եիգոֆրենիկը» ենթարածում պատկերում է այն կացութիւնը, երբ քանդակագործ Մագիլան պատուէր է ստանում ձեռաւորել մահացած վարիչի շիր-

մաքորր: Վարիչը պաշտօնական ցուցահանդէսներէջ մէկում ժամանակին բարկացել ու անարգել է Մազիլային՝ նրա արուեստի անընդունելի ուղղութեան պատճառով: Այժմ՝ շորհարկուած ու մեռած Վարիչի հարազատները յատկապէս Մազիլային են յիշում եւ պատուէր տալու: Այս պատմութիւնը իրական է եւ վերաբերում է Քրուշչովի շիրմաքարին: Գրքում զա կտահուած է հեշտութեամբ: Եւ Զինովեար այդ սուրհույթեամբ քննութեան է տանում արուեստի հետ կապուած հարցեր, խորհրդային իրականութեան արամապրած տուեալները հիման վրայ: Մասջին զծի վրայ են դնուած, բնականաբար, հասարակական հարցերը: Այդ ատումով ուշադրաւ են Բալտուսի պատողութիւնները, ուսումնասիրութիւնը «տոնէաների» վերաբերեալ: Իրենց տեղն ունեն եւ Կլուեանիկի «գրքի հասուածները»: Յաջորդ՝ «Ասք Մազիլայի մասին» ենթարածնում աւելի են խորացուած սկսուած խօսակցութիւնները արուեստի, նրա բնոյթի, սեղծագործական հարցերի վերաբերեալ:

«Որոշումը» բաժնի առանցքն է կազմում «Իրանսկեան պատմութեան մի ժամանակաշրջանի տրամաբանական ակնարկը»: Դա ստալինեան եւ յետստալինեան ժամանակաշրջանն է: Ծարազբանքին կենդանութիւն տալու համար հեղինակը մեծ տեղ է յատկացրել մանաւանդ Կրիկանին, ներկայացրել նրա կեանքի յատկանշական գրուողները, զրանք խտացրելով «ժամ առաջին», «ժամ երկրորդ» եւ այլն վերնագրերով հասուածներում: Այդ չբժանակում էլ բնթերցողը ծանօթանում է Իրանսկեան (այսինքն՝ խորհրդային) դիւզին, ճամբարային իրականութեանը, պատերազմական տարիները բնթացքին եւ այլնին, որոնք բոլորովին տարբեր են պաշտօնապէս հրամցրուող շինծու պատկերացումներէջ:

Այստեղ տեղին է մէջբերել բաժնի «Պարբերացում» հասուածը. — «Իրանսկի պատմութիւնը բաժանում է երեք անհատար կէտերի: Առաջին կէտը կազմում է Կոլաժուրեան (Պոսերեաննոս)

ժամանակաշրջանը: Դա ամենամեծ կէտն է: Այդ ժամանակ իրանցիների մի մասը նստած էր համբարներում, միւսը հրակում էր նրանց, երրորդը կապեր էր կափում ստալինի ու երկրորդի համար: Իսկ նրանք բոլորը միասին յաջողութեամբ իզմ էին կատարում: Այդ ժամանակաշրջանը մանրամասնօրէն նկարագրուած է Պրաւդեցի գրքերում: Այդ գրքերն իրանսկում ոչ ոք չի կարդացել, քանի որ նրանցում ամէն ինչ աննիշդ է: Պրաւդեցին, օրինակ, պնդում է, թէ այդ ժամանակաշրջանում իրաւացիօրէն տուածի են 50 միլիոն իրանցիներ, մինչդեռ ըստ Օրգանների տուեալների՝ դրանք եղել են ընդամենը 49 միլիոն 999 հազար 999 մարդ:

«Երկրորդ կէտը կազմում է Եփոստանուքեան (Ռաստերեաննոս) ժամանակաշրջանը, որը արեւմտեան պատմական գրականութեան մէջ կոչում է Պատմական Ռաստերեան: (Զինովեար այստեղ բազախոց է տնում «Ռեհեանա» — «Վերածնութիւն» բառի նմանողութեամբ. — Լ. Մ.): Դա ամենափոքր կէտն է: Այդ ժամանակաշրջանը մասամբ նկարագրուած է Դուրուշնիկի գրքում, որը իրանսկում նոյնպէս ոչ ոք չի կարդացել:

«Երրորդ կէտը՝ Ծաղկման ժամանակաշրջանն է: Նրա չափերի մասին առայժմը դժուար է դատել, քանի որ այն նոր է սկսուել: Բայց, դատելով ամէն ինչից, նա կարող է գերազանցել առաջին երկուսին բոլոր ատումներով: Այդ ժամանակաշրջանը այլեւս նկարագրող չըկայ, քանի որ Պրաւդեցին արտաքին էր, Դուրուշնիկն ինքն է փախել, Սրամիգրատի (սկնարկում է «Մամիկոսարը»՝ Լ. Մ.) գործիչներին նստեցրել են: Ուրեք Դուրուշնիկը մարգարէաբար յայտարարում էր, թէ սուրբ տեղը դատարկ չի լինում, այդ մարգարէութիւնը արդարանում է առայժմ սուկ ոչ այնքան հեռու տեղերի նկատմամբ:

«Իրանսկեան պատմութիւնը պարբերացնելու բարդութիւնը կապուած է այն հանգամանքին, որ երրորդ ժամանակա-

շրջանը սկսուել է մէկ կողմից եւ չի սկսուել միւս կողմից, աւելի նիշդ ասած՝ այն սկսուել է ներքեւից եւ դեռ չի սկսուել վերեւից: Իբանեան ժողովուրդը, ամենաբարձր պետերից բացի, արդէն երրորդ ժամանակաշրջանն է մտել: Նա պատրաստ է ամէն ինչի եւ գարմանում է, որ վերեւից սկսելու հրաման չկայ: Խնկ բարձրագոյն պետերը չեն հրամայում: Նրանք սպրում են երկրորդ ժամանակաշրջանի պատրանքներով եւ փորձում են գործել խաղաղութեամբ: Բայց մի՞թէ մեր ժողովրդի հետ խաղաղութեամբ գործ կարելի է անել: Չէ՞ որ պետերը համբերում-համբերում են, ու նաեւ գայբանում, որ իրենց ուզածի պէս չի լինում: Ունանց շա՛տ են ազատութիւն տուել: Աւելի ներքեւի պետերը կը համբերեն-կը համբերեն ու կ'ասեն իրենց վնասկան խօսքը»:

Ի հարկէ, այս բոլորը ուշադիր կարգաւորյ յետոյ՝ պէտք է նաեւ վերձանել, մասովին սեղադիտակելով «կոմունիզմ կատուցողները» երկիրը:

Հետաքրքրական են Կլեւեանիկի մտքերը Իբանեակի պետութեան մասին. «Իբանեակի իշխանութիւնը ամենագոր է եւ միաժամանակ անգոր: Այն ամենագոր է բացառաբար, այսինքն՝ անպատիժ կերպով չարիք գործելու հնարաւորութիւններով: Այն անգոր է դրակնօրէն, այսինքն՝ անհատոյց կերպով բարիք գործելու հնարաւորութիւններով: Նա ունի հսկայական կարծանարար եւ չնչին ըստեղծարար ուժ: Երկրի տնտեսական եւ առհասարակ գործարար կեանքի յաջողութիւնները իշխանութեան վաստակը չեն, իբրեւ այդպիսին: Այդ յաջողութիւններն, իբրեւ կանոն, անխուսափելի չարիք են իշխանութեան տեսակէտից: Ատաւել եւս՝ մշակոյթի յաջողութիւնները: Դա առհասարակ իշխանութեան փռնկցիան չէ: Այն պատրանք, թէ դա իշխանութեան գործունէութեան արդիւնք է, ստեղծուել է, որովհետեւ այստեղ անախանօրէն ամէն ինչի մասին որոշումներ են ընդունուում, ծրագրեր կազմուում, կարգադրութիւններ հրատարակուում,

հաշուետուութիւններ արւում: Իբանեանում այստեղ տեղի է ունենում սոսկ անախան փառարում, այլ ոչ թէ պատմաութի ու հետեւանքի աղբնչութիւն: Ինքնաբար իշխանութեան գոյութիւնը այստեղ ընդունում է ամէն ինչի դեկավարման ձեւ: Նոյնիսկ եղանակի: Նոյնիսկ մարդու կենսարանական բնութեան:

«Ամենագոր իշխանութիւնը այստեղ անգոր է մինչեւ վերջ եւ նախապէս յղացւած ձեւով նոյնիսկ մի չնչին բարեփոխում անցկացնել երկրի մակարդակով, եթէ այդ բարեփոխումը կոչուած է բարձրացնելու հասարակութեան կազմակերպման մակարդակը, այսինքն՝ դրակնօրէն: Նա անքի մի շարժումով ընդունակ է խորտակելու գիտութեան ու սրուեստի ամբողջ ուղղութիւններ, տրնտեսութեան միւլդեր, դարաւոր հիւմքեր ու նոյնիսկ ամբողջ ժողովուրդներ: Բայց նա ընդունակ չէ պաշտպանելու նոյնիսկ մի փոքրիկ ստեղծագործական գործ՝ միջավայրի հարուածներից, եթէ վերջինս մտադրուել է այդ գործը փոշխացրնել:

«Իբանեան տեսակի իշխանութիւնը սկզբունքօրէն անյուսալի է: Նա ընդունակ չէ բաւական երկար ժամանակ ու հետեւողականօրէն կատարել իր խոստումները»:

«Պոեմ ձանձրոյթի մասին» բաժնում կարծես թէ արձագանդ է դոնում հանրայայտ «Լիցքաթափման» ժամանակաշրջանը: Ներկայացուում է Իբանեակի իշխանութեան կազմախօսութիւնը, որը ստանց թշնամիների չի կարող ապրել: Մի պահ պատկերացւում է, թէ ամէնուրեք յայթանակ շահելուց յետոյ ինչով կը դրսոյրել այդ իշխանութիւնը: Յայտնարելուում է ստորերկրեայ քաղաքակրթութիւնը՝ «ենթա-Իբանեակը»: Հաստատուում են փոխադարձ յարաբերութիւններ, եւ այն: Ինքնին հասկանալի է, որ բոլոր գէպրերում արտայայտուում են ժամանակակից աշխարհի յատկանշական կողմերը, ներկայացուելով երդիծական դիրքերից:

«Խորաբաց բարձունքներ»ի մասին

գրախօսականով կամ այլ միջոցներով սրտառայաբանող մարդիկ հեղինակին համեմատում են, օրինակ, անգլիական գրականութեան հին ու նոր յայտնի գէմքերից Ջոնսթան Սվիֆտի եւ Ջորջ Օրուելլի հետ, ինչպէս եւ Աճրգ դարի սուս գրականութեան նոյնպէս յայտնի գէմքերից Գոլալի ու Մարտիկով-Շչեպրինի հետ, նկատի առնելով նրանց ստեղծարարութեան մէջ բարձր մակարդակի հասցուած հասարակական-քաղաքական երգիծանքը, այսինքն՝ նրանց կողմից իրենց ապրած ժամանակը երգիծական անողոք զնդահոծման ենթարկելու իրողութիւնը։ Յատուկ շեշտ է դրում Մվիֆտի վրայ, որը այնքան կարեւորութիւն տուեց այլ գործին, որ հրաժարուեց հիմնական գրող-մտնջից՝ ստուշածարանութիւնից ու նրկիցուեց քաղաքական երգիծագրութեան։ Ճիշդ այդպէս էլ Ալեքսանդր Ջինովեւը մի կողմ գրեց հիմնական գրադիտները՝ փելլոտիայութիւնը, արամարանութիւնը ու, ամէն վասնոյ աչքի առջեւ բերելով՝ նախուեց իր ծանօթ հասարակութեան «խորարաց բարձունքներ»ի հետա-

դատութեանը։ Ջինովեւին համեմատում են եւ նոյն կարգի այլ անձանց հետ։ Ի հարկէ, ամենայնոց համեմատութիւնն իսկ սովորաբար պայմանական է, յղի սպակտղմարտչիչ անպատեհութիւններով։ Իսոյ այն իրողութիւնը, որ նա համեմատուում է յատկապէս նրանց, այլ ոչ թէ՛ ուրիշների հետ, վերջին հաշուով որոշ բան է նշանակում։ Յիրաւի, Ռուստատանից բխած — միւս երկրների մասին սուեալ գէպքում հարկ չկայ իտեւ — մերօրեայ գրականութեան շրջանակում Ալեքսանդր Ջինովեւի «խորարաց բարձունքներ» երկը յատուկ եւ եզակի տեղ է բռնում։ Ինչպէս էլ այն պնահատելու լինեն ապագայում, այժմ իսկ պարզ է, որ անկիւնադարձային երկ է ստեղծուել իր ընտղուատում։ Ինչքան եւ ինչպէս էլ որ ներկայացուի «խրանեան իրականութիւնը» ուրիշների կողմից, Ջինովեւի գերքը չի կորցնի իր պատմական արժեքը, կշիտը, թարմութիւնը եւ տեղարանական ու վկայարանական գիմայիծը։

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

ՕՏԵԱՆ – ՍԻՐՈՒՆԻ

ՓԱՆՋՈՒՆԻ – ԿՈՒՐՏԻԿԵԱՆ

Իրենց հանդիպումներուն ընթացքին, Սիրունի խօսած է նաև Երուանդ Օտեանի մասին ու իր գրուածքներն վտանգած՝ Երզնկայանին ինքն իր գործերուն մասին ունեցած կարծիքները, որոնք ձեռք ձգուած են սու պայմաններուն մէջ:

«Ուրիշ կրկին խոստովիլ իմ կարգումէս, բայց յամառ խնդրանքիս տեղի ունաւ եւ պատասխանեց:

«Վեպերուս, վիպակներուս ահագին դէպքն մէջ յաջողուածներ ալ կան, ինչպէս «Յեզոսիստեթեան մակարոյժները», որի մէջ պատկերած եմ ժամանակի ազգային կեանքն իր տեսանելի տիպերով: Յաջողած է «Ընկեր Փանջունի»ն: Երբ, նախքան առանձին գրեով լոյս ընծայելս, 1911ին Փանջունին ապագրեցի «Բիզանդիստ»ի մէջ որպէս քերթօն, ընթերցողներէն շատ շատերը հաւատացած էին, թէ Փանջունին անհատի մը իրական տիպարն է: Ընթերցող երկու վանեցիներ նայնիսկ լիկած էին եւ գրաւ բնած Փանջունիի իրական, թէ պայմանական տիպ ըլլալու մասին: Ի հարկէ, երկրորդը շահեց գրաւը: Խնդիրն այն էր, որ ինձի յաջողած էր տիպարի մը մէջ խտացնել դաշնակցութեան արեւելահայ ղեկավար գործչի կերպարը: Գիտես, ես քան տարի ուսումնասիրած եմ այդ կուսակցութեան որոշ ղեկավարներու պատուախօս գործունէութիւնը, ընկերավարական սկզբունքներով բողոքականութեան անընկրգումայնութիւնը: Իմ կարծիքով, «Առաքելութիւն մը ի Մատլլար» համակարգին գրական աւելի յաջող իրականացում է, քան «Ընկեր Փանջունի Վաստիքականի մէջ» հատորակը, որին կցեր եմ նաև Փանջունիի ունայնաւիտ դասախօսութիւնները»:

Նոս կը վերջանան «Փանջունի»ի մասին Օտեանի յայտնած, Սիրունիի վերապատմած ու Կուրտիկեանի գրի առած կարծիքները:

«Եւ ինչպէս մէջ առելի միջոցներէ առաջ, հարկ կ'ըլլայ վերստին յիշել վերջինին հատուածները, թէ՛ «Յ. Ն. Սիրունու պատմածները գրի եմ առել 1971ի Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներին արեւմտահայերէն եւ քողնում եմ անփոփոխ»:

«Ձեռք խորհիր, որ գոննոյն մտղեր, որոնք արեւմտահայերէն համարեն վերի հատուածին մէջ տեղ գտած «որի մէջ», «շահեց գրաւը», «ինձի յաջողած էր», «գործչի կերպարը», «հատորակը», «որին կցեր եմ» բառերն ու բառաձևերը: Ձեռք խորհիր նոյնպէս, որ Օտեան այս բառաձևերով խօ-

սած ըլլայ Սիրունիի հետ եւ Սիրունի այս ընդամով վերագրամամ: Ըլլայ իր լսածը: Հակառակ դրույթակիցին խօսքը «անփոփոխ» ձգած ըլլալու Կուրախիկանի պնդումին՝ խոխուս բան մը կայ նաև այս հասարածին մէջ, ուր քիչ մը Սիրունին այլասերելով եւ շատ մը Օտեանը գիմափոխելով՝ նորէն տեղաւորուած է... Ի՛նք:

Կիրքը, սակայն, գէշ խորհրդատու է զբիշ շարժողներուն համար, իսկ հաշիւները անպայման թակարդով մը կը պատժեն հաշուախնդիրը, ինչպէս եղած է Սիրունին ու Օտեանը միանդամայն տպուչցուցած Կուրախիկանի պարագային:

Որքան մենք հասկցանք, Երուանդ Օտեան, իր «Փանջուռնի»ն գրելէ առաջ, «այդ կաւակցութեան որոշ զեկավարներու պառտալիսու գործունէութիւնը» ուսումնասիրած ստան, ամբողջ քսան տարի ուսումնասիրած է նաև անոր «ընկերվարական սկզբունքներով» քաղարկուած անսկզբունքայնութիւնը:

Յոյժ կասկածելի է, որ Օտեան նման բաներ զույս տուած ըլլայ, նախ՝ անոր համար, որ կը ճանչնար մեր իրականութիւնը ու քաջ գիտէր, որ «Փանջուռնի»ի հրատարակութիւնը (1911) կանխող քանամեակին Դաշնակցութիւնը պոռոտախօսութեան ժամանակ չունէր, եւ երկրորդ՝ կարելի չկար քսան տարի յտեկողներու Դաշնակցութեան «ընկերվարական սկզբունքներով» քաղարկուած անսկզբունքայնութեան, քանի որ ընկերվարական բաները այդքան երկար կեանք չունէին Դաշնակցութեան մէջ, սկսան ունենալ 1907ին Վիեննայի մէջ կայացած ընդհանուր ժողովէն ետք միայն:

Կան եւ ուրիշ պատճառներ, որոնք նոյնպէս կը հերքեն յաճախ «Փանջուռնի»ի Դաշնակցական գործիչի մը կերպորը պատկերացուցած ըլլալու օտեանական «խոտոտվանութիւնը» եւ կը զօրացնեն մեր կասկածը, թէ Կուրախիկան ի՛նք հիւսած է ինչոյսյ տարկայ տասաղելը:

Մեր պարբերական մամուլին քաջատեղեակ ընթերցողները դիտեն, որ Սիրունի նոր չէ, որ կը խօսի Օտեանի հետ ունեցած իր մտերիմ կապերուն եւ անոր մտերիմ խոտոտվանութիւններուն մասին: Ստեփան Կուրախիկանի հետ իր ունեցած զրոյցէն աւելի քան քառասուն տարի առաջ, «Հայրենիք» ամսագրին (1927, Յուլիս) մէջ, ու աւելի ընդարձակ ծուռալի մը վրայ՝ ան ներկայացուցած է Օտեանը, իրենց միջեւ հաստատուած սերտ կապերէն (1922) մինչեւ վերջինին վախճանը (1926), ներառեալ զբոսկանութիւնը ու սեփական ստեղծագործութեանց տիպարներուն ու տեսակարար կշիռին մասին նշանաւոր երգիծարանին կատարած հաստատումները, ուր կայ նաև Կուրախիկանի գրիչին սակ վերը լղբնուած հասարածին քառասունամեայ տարբերակը, հետեւեալը, Օտեանի բերնով, Սիրունիի գրիչով՝

«Անշուշտ պէտք է յիշել նաև Փանջուռնիին նուիրուած զոյգ հասարակներս, «Առաքելութիւն մը ի Մայրքար» եւ «Ընկեր Փանջուռնի Վասպուրականի մէջ», որոնք «Բիւզանդիոն»ի մէջ լոյս տեսան: Ասոնք ալ կիսակէն քաղուած են, մանաւանդ առաջին հասարը: Աւտիկ քերես անոնց գտած յաջողութիւնը: Երբ առաջին անգամ լոյս ընծայեցի «Բիւզանդիոն»ի մէջ՝ շատեր կարծեցին, թէ Փանջուռնի տիպարն ալ իրական դէմք մըն է: Նայնիս կրկու վանեցիներ գրաւ էին բոներ Փանջուռնիին իրական թէ երեսակայական տիպար մը ըլլալուն մասին, եւ նոյնիսկ դրամ գրեր՝ ազգային հաստատութեան մը

տրուելու համար : Անշուշտ որ երկրորդը շահեցաւ գրաւը , որովհետեւ իրա-
կան դէմք մը չէ Փանջուռինն , այլ տեսակ մը ընդհանուր տիպար է , խտացու-
մը յեղափոխական քիփերուն : Նոր էր հասարակ լոյս տեսեր առաջին գիրքը ,
երբ օր մը Զաւարեան կամուրջին վրայ բռնեց գիւ .

«— Եթէ հարուստ ըլլայի , — ըսաւ , — այս գիրքէն հազարաւոր օրի-
նակ կը գնէի ու կը բաժնէի մեր բոլոր ընկերներուն :

«Արդարեւ , շատ ժողովրդականութիւն գտաւ այս գարծը . ամէն մարդ
ինքզինք կը տեսներ ինն , կամ իր բարեկամը , կամ իր դրացին : (Արամին հա-
մար ալ կը պատուեն , որ մինչեւ մեռած օրը գրպանին մէջ ունէր Փանջուռնիի
այս նամակները , ու յամախակի կը կարգար) :

«Բայց պէտք է բռնմ , որ առաջին գիրքը աւելի յաջողած է , քան երկ-
րորդը : Ու բնական է , այդպէս ալ պիտի ըլլար : «Առաջերութիւն մը է Մա-
պըլլար»ին տիպարները քաղած եմ անձամբ նանչցած մարդոցս դիմագծու-
թեմէն , այսինքն՝ զանազան ռուսաւարձ եմ քան սարի մը : «Ընկեր Փան-
ջուռնի Վասպուրականի մէջ»ը , ընդհակառակն , ինձի պատմուած քիփերն են ,
իմ լսածներս :

Հանրայայտ է , որ Օտեանի կերտած կերպարը մարքտեան սլոմուռնիէն
չըսած եւ դադարտարական նոյն շատախօսութեամբ ժանջուռնիացած մարդ
էր , խօսքի լիակատար արկածախնդիր մը , սրուն նմանակները մեր իրակա-
նութեան մէջ բողբոջան յատկապէս սահմանագրութեան օրօք : Պիտի ընդու-
նինք , որ նման շատախօսներու թափանցումէն զերծ չմնաց նաեւ Գաշակ-
ցութիւնը , որուն իարթամ գէմքերը , հիմնադիրներն ու ներկայացուցչական
գէմքերը , Զաւարեան , Արամ եւ սրբիչներ , անշուշտ մոլորածները բուժե-
լու բուն ցանկութեամբ մը , հիացումով կը կարգային մարքտեան մարգանք-
ներով արբշխ Փանջուռնիի կրօնները ու կը պարտոյնէին հատորը իրենց հետ ,
կ'ուղէին անոր զբոստացնող հարսուածները տարածել ամէնուրեք , ինչ որ
նոյն օրերուն զործող միւս կուսակցութեանց գեկավարներէն սեւէ մէկը չը-
բաւ , իսկ աւելի ուշ հանդէս եկած կուսակցութիւնը երբեք պիտի չարտօնէր
ինքն իրեն , ամբողջ յիսնամեակի մը երկայնքին , իր ընթերցողներէն շարու-
նակ հետու պահելով Փանջուռնիի սիրապարծութիւնները :

Փաստ է , որ Հայաստանի մէջ ցայսօր ոչ մէկ հրատարակութեան ար-
ժանացած է «Ընկեր Փանջուռնի»ն :

Ու երեսօյթը անխոստափելի կը դարձնէ հարցումը .

Եթէ ի դէմս Փանջուռնիի Գաշակցութեան տիպար մը պատկերացու-
ցած ըլլար Օտեան՝ մինչեւ հիմա ըլլոյն չէլ'ն հաներ Փանջուռնին :

Եթէ Փանջուռնիի մէջ իրենց մտայնութեան ու գործունէութեան հա-
րադատ պատկերը չաւանդէին , մութին մէջ կը պահէլ'ն Փանջուռնին :

Հայաստանի մէջ «Փանջուռնի»ի ենթարկուած տպագրական գրկանքը
պերճախօս է եւ բոլորովին աւելորդ կը դարձնէ հարցումներուն արամա-
բանական պատասխաններ որոնելու ամէն փորձ :

Կայ նաեւ ուրիշ պատճառ մը :

Բայց պատճառէն տաջ՝ աղբիւրը :

Ու աղբիւրէն տաջ՝ աղբիւրին մատնանշումը :

Ու դարձեալ Ստեփան Կարաբիկեանի զբոլով , այլ տարբեր յօդուածի մը

մէջ, նորէն «Սովետական գրականութիւն» տմտագրի (1977, թիւ 11) էջերուն, «Հովտեմբերը եւ արաստահմանի հայ գրողները» անուն խորագրերի մը տակ :

Յիշեալ յօդուածին մէջ՝ Կուրտիկեան կատարած է մարդահամարը վաղօրօք հոգմնորոշուած կամ իր կնքահայրութեամբ հսկանմբերականայած արաստահմանի գրողներուն, որոնց կարգին չէ մուչած նաեւ հսկանմբերեան պատուանշան մը շտայիլ Երուսնդ Օտեանի, աւելցնելով, որ՝

«Ընկեր Փանջուրու անուանալի կերպարը կերտող մեծատաղանդ երգիծարանք Բուխարեասում Յ. Միրունու հրատարակած «Նաւասարդ» ամսագրում շարունակեց նկարագրել իր թեթեւալիկ հերոսի կեանքն ու արկածները բանագարքի նախադրեաներին՝ վկայելով, որ հայ իրականութեան մէջ ընկեր Փանջուրուի կեանքանի է ու եռանդագին գործում է: Ապա հայն ոգով մերկացնող յօդուած գրեց «Յասարք»ի խմբագիր Կաւասարգեանի դէմ՝ պաշտպանելով Սովետական Հայաստանի նուաճումները»:

Տարադրութեան ճամբաներուն վրայ Փանջուրուի դարձունէութեան երգած ակնարկութեան հետ, սարքերութեան վերջին մասին մէջ կը յիշուի Օտեանի կատարած երկրորդ «մերկացումը», որուն վայրը շատ յտակ չէ սակայն: Երուսնդ Օտեան «ապա հայն ոգով մերկացնող յօդուած գրեց» ո՞ւր: Նորէն «Նաւասարդ»ի՞ մէջ արդեօք: «Նաւասարդ»ի մէջ գուր պիտի բլլար փնտսել Նատասարգեանի դէմ խօսող օտանական սրեւէ ստորագրութիւն: 1926ին մեկտեղ երգիծարանը կրնայ, անշուշտ, Նաւասարգեանի դէմ յօդուած մը գրած ըլլալ, բայց խիստ կասկածելի է նման դրութեան մը վերադրուած շարժապիթը: Օտեան այնքան կը չէր, որ քօանական թուականներու կիսուն դրիչ ասեկը ձեռքը՝ պաշտպանելու համար բնգամէնը հինգ տարիներու անցեալ ունեցող «Սովետական Հայաստանի նուաճումները»: Օտեան նուաճումներ չսեռու ու խորտակումներու տկանջալուր եղած պահուն դոցեց աչքերը, թուական՝ 1926...

Գտանաք միւս լուրին, Միրունի տմտագրին մէջ ստորագրած Օտեանի էջերուն, ուր երգիծարանը նկարագրած է տարադրութեան ճամբաներուն վրայ ապրած իր հերոսին նոր արկածները՝

«Վկայելով, որ հայ իրականութեան մէջ ընկեր Փանջուրուի կեանքանի է եւ եռանդագին գործում է»:

Օտեան թարթուսի մէջ կը հանդիպի Փանջուրուին, միտին կը քաշըըըւին հոս ու հոն, թարթուսէն Օտեանիէ, Հալէպ, Համա, Համայէն կրկին Հալէպ, Տէր Զօր եւ էլ Պուսերա: «Նաւասարդ»ի մէջ պատմուածը մէկ մտն է միայն, թարթուսէն մինչեւ Հալէպ ապրուած արկածախնդրութիւնները, չորս դրութիւններու տակ, հազիւ 10-12 էջ հաշուող ծաւալի մը վրայ: Ամբողջին մասին գազափար մը կու տայ սակայն «Նաւասարդ»ի առաջին տարուան առաջին թիւին մէջ ապուած յոսանքանքը, ուրիչ կ'իմացուի, որ հերոսը էլ Պուսերայի գետի կամուրջին վրայ կը բաժնուի հեղինակէն, բոնելով Սինճեր տաղ-Պարսկաստան-Վալիսա ուղղութիւնը: Բաժանուածէն առաջ, Փանջուրուի կը խնդրէ Օտեանէն, որ իր տարադրութեան մասին բան չգրէ: Օտեան կը խոս-

սանոց կոտորել սնոր կամբը: Շարունակութիւնը հեղինակին բռտերով,
«Յառաջարան»էն.

— Պուէրէշ հասնելէս էանի մը ամիս վերջը, իրագեկ, գրեթէ պաշտօնական ազբիւրներէ իմացայ, որ մեր սիրելի հերոս ընկեր Բ. Փանջունի երեսան կը գտնուի, թէ՛ հսկ ընդարձակ հազի վրայ ետանդուն՝ գրեթէ խելայեղ՝ գործունէութիւն մը ցոյց կու տայ իբրեւ փրօվականոսի գործավար, թէ՛ իր անունը արդէն իսկ տարածուած է Պարսից ծոցէն մինչեւ Մոսկուա ու էնկիսիւրէն մինչեւ Աֆրասիա-տանի տեղեկները . . .

Այն ատեն զազափար մը յղացայ. նամակ մը գրել իրեն եւ խնդրել, որ գիս արձակէ էլ Պուսերայի գաշտին մէջ տուած պատույ խոստումէս, քոյլատրէ իր տարագրութեան շրջանի գործունէութիւնը գրի առնել, գոհացում տալու համար այն հազարաւոր համակիրներուն եւ հիացողներուն, որանք, տարիներէ ի վեր, ետեւէս ինկած են, բսելով՝

— Ընկեր Փանջունիէն բա՛ն մը պատմէ՛ մեզի:

Նամակը գրեցի եւ երջանիկ եմ տեսելու, թէ էանի մը օր սուսաջ պատասխանը ստացայ:

Կուգէի այդ պատասխանին բնագիրը ներկայացնել այստեղ, բայց ընկեր Փանջունիի նամակը գրուած էր հայկական նոր սնով, նոր մտածելակերպով, նոր ուղղագրութեամբ, այնպէս որ՝ ընթերցողներէն ո՛չ մէկը պիտի կրնար բան մը հասկնալ: Ես «քարշմանելու» համար այդ հայերէն նամակը, ստիպուեցայ գիմու՛մ ընել մէկ էանի մասնագէտներու, որանք երեք օր երեք զիշեր աշխատելէ ետքը, այդ գրութեան իմաստը հաղորդեցին ինձի, ես ալ ուրեմն ընթերցողներս ուղեգոյլին տալնուպի մը չեմք-արկելու համար, կը բաւականանամ այդ իմաստը հաղորդելով իշենց:

Ընկեր Փանջունի իր նամակը կը սկսի զիս որակելով «նեղատու քուրժուաների, կապիտալիստների հոցկաստակ, պնակալէզ», ետայլն: Յետայ, կը գումէ մահը եին Փանջունիին, «Նա մեռած է, նեխած է, — կը գրէ, — իբրեւ գիշտաիչ ազատ կամ անգը, կրնաս գայն ծամել, ծամծմել ու կալ տալ, կրնաս այդ գիակը շահագործել ինչպէս որ ուզես, ծաղրիւր, հեզմիր քա կասագութեան չափով, ես այդ մասին շնորհակալ կը լինեմ Քեզ: Իսկ գալով նոր Փանջունիին՝ նա շատ ու շատ հեռացած է հեզմանէի, ծաղրանէի, երգիծանէի օտեմաններէն. նա այլեւս անբռնաբարելի, անխոցելի է. նա տակալի է, բայց ոչ՝ ծաղրելի: Նքան կարող ես ատել, կարող ես նրանից վախենալ, բայց ոչ ոչնչացնել»:

Յետոյ՝ մեր հերոսը կ'աւելցնէ.

«Իմ ժամերը սուղ են, չեմ կարող աւելի երկար գրել, որովհետեւ յճուած եմ մի փրկարար աշխատանքի. ես պէտք է բանդեմ հնուրիւնը, հին լեզուն, հին կրօնքը, հին քարէնքը, հին օրէնքը, հին քարոյականը, հին միտքը, հին ըմբռնումները, հին կարգուսարքը, հին ընկերութիւնը, հին նախապաշարութենքը, վերջապէս քուրքը հին աշխարհը, նրա աւերակների վրայ կանգնեցնելու համար նորը. դա հեշտ գործ չէ: Պիտի կարագանսու՞մ անել այդ ամէնը. չեմ կարծի: Թերեւս յաջողուեմ մի միայն բանդել, այդ արդէն բարարա-

բութիւն կու տայ ինձ : իմ յաջարդը քող լծուի վերաշինութեան գործին : Ես վայելում եմ քանդուաւի հեշտանքը, իմ յաջարդը քող կրի վերաշինութեան տաժանէք...» :

Այսպէս կը վերջացնէ իր նամակը :

Պետք է ընդունիլ, որ ընկեր Փանջունի իր հին կարավէճ ու պերնասոսութեան բան մը չէ կորսնցուցած, միակ հնութիւնը, որ իր մէջ անեղծ մնացած է :

Էականը այն է, որ զիս արձակած է իմ խոստումէս եւ ես այժմ պիտի կրնամ անկաշկանդ պատուել իր տարագրութեան կեանքը :

Իր տուած խոստումէն արձակուելէ ետք, Օտեան, ինչպէս նշեցինք վերջը, կը պատմէ Փանջունի տարագրութիւնը, մինչեւ Կովկասի ուղղութիւնը բռնելու անոր պահը :

Երգիծարանին եւ իր հերոսին յաջորդ կապը վերջինին նամակն է, ուր քիչ բառերու մէջ թէեւ, բայց յստակօրէն տեսանելի է մարքսիստ դադափարանութեամբ սնած երգիծեալ արկածախնդիրին ողջ էութիւնը, որ նաեւ ներկայացուցչական հանդամանքը՝ այդ օրերու երեւանեան դարձիչներու ամբօրին մէջ :

Մե՛ղք, որ Օտեան ընթերցողին խնայելու համար թարգմանել տուած է եւ չէ հրատարակած «Հայկական նոր սճով, նոր մտածելակերպով, նոր ուղղորդութեամբ» գրուած Փանջունի վերջին նամակին բնագիրը, Փանջունի նոր քանդումներուն շտապուն մէկ վաւերաթուղթը, ուր «Հին լեզուն, հին կրօնքը, հին բարբերքը, հին օրէնքը, հին բարոյականը, հին միտքը, հին ըմբռումները, հին կորուստաբքը, հին ընկերութիւնը, հին նախապաշարումները թիրախ դարձուցած եւաւախան հերոսին սխրագործութեանց ա՛նձնուղն տաջին դօ՛հը տեսանելի պիտի ըլլար տաջին վայրկեանէն, — փանջունիական քանդումը հայոց լեզուին, սկսեալ երգիծարանին անունէն՝

Յերվանդ Ուոյան

Լեզուն քանդողները ստե՛ն մը ետք կանգ առին, մինչեւ իսկ վերահաստատեցին քանդուած կարգ մը բռնեք, Յերվանդ Ուոյանը եղաւ Երվանդ Օւոյան, ա՛յրպէս, ատիճանարար պակսեցու լեզուն քանդելու փանջունիական ետանդը, բայց Փանջունի երեւանեան ազգակիցները երբեք կանգ չառին նոյն լեզուով կասուցուած մտածումները քանդելու իրենց մոլուցքին մէջ : Ծանօթ է Կոստան Չարեանի «Նաւ»ուն խորտակումը : Նոյնը՝ Ծահուրի «Նախանջ»ին առիթով : Տարբեր չէ պարագան նաեւ Օտեանի «Բասն տարի»ն բարեկարգած Կուրտիկեանի փորձը :

Աւերցնենք միայն, որ ամէն ինչ քանդելու մոլուցքով տարուած անկեկան ետուն փանջունիութիւնը պատկերացնող Փանջունի նամակը եթէ հին դարձիչին ու նորին վճատական հարապատութիւնը բնագծեց եւ վերջնականօրէն պայծառացուց զպարտաբան անոր պատկանելիութիւնը, միւս կողմէ սակայն դարձաւ իր կենսազրութեան գառակնիքը՝ արագրական մարդին մէջ :

Աւելի պարզ, եթէ Օտեան չհրատարակէր Երեւանէն ստացած իր հերոսին այդ նամակը, Երեւանը շտտոնց լոյս կ'ընծայէր «Փանջունի» եւ ցայսօր «Խնամքով չէք թարցնեք» դայն իր ընթերցողներէն...

Չուր է ի դէմս Փանջունիին տարբեր միջնայրամներէ եկած տարբեր մարդեր պատկերացնել: Փանջունիի երեւոնեան նամակը պատուելիք թուղթ չէ ի վերջոյ եւ մոռցուելիք բան չէ Փանջունիէն կարմրելու կարմիր անցեալ մը ծածկող Երեւանի պերճախօս լուսթիւնը:

Իր ուղած բառերը Սիրունիի բերնին դնելէ եւ խեղաթիւրեալ բազմաթիւ մտքեր անոր վերապրելէ առաջ, անգամ մը այս գրութեան մէջ յիշատակուած «Հովտեմբերը եւ արտասահմանի հայ գրողները» անուն իր յօդուածին մէջ՝ ուրիշներու կարգին, գայն եւս պատուած է «սովետական» գուշակութեամբ:

«Արեւմտահայ գրականութեան երախտաւոր գրական մշակներից Յակոբ Սիրունին եւս սովետական կարգերի մէջ տեսաւ հայ ժողովրդի միակ փրկարքիւնը, հրապարակագրի իր գրչով եւ մեզ հետ գրուցելիս բարձր գնահատեց Սովետական Հայաստանի կեդարեայ նուաճումները, մանկական ոգեւորութեամբ դիտեց իր երագումների կենսագործումը եւ հմայուած հոգով գրեց. «Հայոց արեւը կը ցնծայ վերէն՝ տեսնելով կեանքը, որ կ'ետայ իր շողերուն տակ»:

Սիրունի կրնայ բարձր գնահատած բոլոր Հայաստանի կէսպարեայ նըւաճումները, բարձր գնահատանքի արժանի քիչ բան կատարուած չէ ի վերջոյ Հայաստանի մէջ, կրնա՛յ, առեալ պահուն կրնայ նոյնիսկ անկատարին ու անկարելիին մասին բարձրածայն բարբառել մէկը, «մեզ հետ գրուցելիս» ամէն ինչ կրնան ըսել մարդիկ, խի չըսուածները, Ստեփան Կուրաթիկեանի օրինակով, կրնանք մեռի լսել, ու գրել, մտ'նաւանդ՝ երբ գրուցակիցը գարձած է ի հօդ: «Մեզ հետ գրուցելիս» այդպէս պէտք է դիտել Սիրունիի պարագան, բայց ինչ կը վերաբերի հրատարակագրի իր դրչին վերագրուած սովետական փրկութիւններուն, տանուազն մենք նման էջեր չենք կարգացած իրմէ: Կը թուի, թէ նման «բախտ» մը չէ ունեցած նաեւ Կուրաթիկեան, այդպէս, ինչպէս ըրած է միւս հովտեմբերիկներուն ու ի՛ր հովտեմբերացուցած գրողներուն առիթով, հո՛ս եւս սովետական տող մը կը վկայակոչէր եւ ոչ թէ կը բաւարարուէր Սիրունիի գուտ աղբային սգեւորութեամբ:

«Հայոց արեւը կը ցնծայ վերէն՝ տեսնելով կեանքը, որ կ'ետայ իր շողերուն տակ»:

Ի հարկէ, այս տողերը քով քովի չեն գրուիր Սիրունին այս կողմը տեսնելու ցանկութեամբ: Ո՛չ: Եթէ Սիրունին Սովետական փրկութիւն տեսած է տեղ մը՝ փրկութիւնը հե՛տը: Բայց կը կարծենք, թէ նման յայտարարութիւններ բովանդակող էջ չունի ան, ունենալու պատճառներ չպակտեցան իրեն, մինչեւ անգամ Հայաստանի խորհրդայնացման ԾՕամեակին նուիրուած «Սովետական գրականութիւն» ամսագրի բացառիկին մասնակցելու հրաւէր ուղղուեցաւ իրեն եւ ինք բերաւ իր մասնակցութիւնը, բայց հակադրարար միւս հրաւիրակներու հակեմբերեան, նոյեմբերեան, սովետական եւ նոյնանման զեղումներուն՝ այդ «բարեկիցներէն» եւ ո՛չ մէկուն տեղ տուաւ իր գրութեան մէջ: Սիրունի պարզապէս ամփոփեց իր սերունդին երազը, ղօղ-

դժբան, և ասո՛ւ յարտթիւնը, «Սովետական գրականութիւն» ամսագրի 1970 թուակիր Նոյեմբերի համարին մէջ, «Խարերուն նամբան բանելով»:

«Ապա՛ որպէսզի մարդիկ օր մը ամօթով չքղրատեն այդ սեւ էջերը, ան պիտի արձանագրէր փաստաւոր գլուխներ եւս, պատմելու համար վաղուան մարդոց, քէ հայ ժողովուրդը մաքառիլ, մարտնչիլ, զոհուիլ ալ գիտցաւ: Շասիկն-Գալստիսարն ու Եղեսիան, Մուսա լեռն ու Վասպուրականն էին, որ դիւցազնական դրուագներ պիտի կտակէին պատմութեան գրքին:

«Հպարտութեան մեծ պակը յաջողից յետոյ, ցասման, ընդզգման այն վեմբ րոպէն, երբ հայ ժողովուրդը պիտի ծտտանար անգամ մը եւս նակատագրին դէմ: Սարդարասլուտի եւ Բաշարբանի մէջ նոր փառք մը պիտի յանձնէր հայոց պատմութեան, յարբանակին լուսապանծ էջը:

«Այդ պատմութեան մէջ կը բացուէր ահա շքեղ գլուխ մը:

«Մոխիրներուն տակէն հայրենիք մը մարմին առեր էր, ու հայ ժողովուրդը սա՛փի կը կանգնէր աշխարհի շփոքած աչքերուն առջեւ, սարուկ սեպուած այն ժողովուրդը, զոր քշնամին չքացուցած ըլլալ կարծեր էր պակ մը:

«Պիտի հետեւէին իրնզ տասնեակ նոր տարիներ, տարիները մաքառումներու եւ դժնդակ նիգերու, անխոնջ տէնութեան եւ յարատեւ վերելքի:

«Կատարուած էր հրա՛շքը:

«Գտնուա՛ծ էր Սասունցի Գալիքը»:

Այսպէս:

Ո՛չ Հոկտեմբեր, ո՛չ Նոյեմբեր, ո՛չ սովետական:

Այլ՝ հայ ժողովուրդին վերջին դարու պատմութեան ուղեղէն ամփոփումը՝ հայրենական երազը, դահաբութիւնը, սիրտպարծութիւնները, անկիւնագարձոյին յազթանակը, ասո՛ւ՝ «տարիները մաքառումներու եւ դժընդակ նիգերու, անխոնջ տէնութեան եւ յարատեւ վերելքի»:

Ա՛յդ:

Ու երբ Հայաստանի խորհրդայնացման 50ամեակին նուիրուած բացառիկին մէ՛ջ անգամ այդ եղաւ Սիրունիի վարձուհը, քիչ մը վճուար է այլեւս հաւատալ, որ «հրտպարակողրի իր գրչով» տարրեր բաներ ըսած ըլլայ այլուր, սովետական բաներ խոսնած ըլլայ իր անխոսն հիացումներուն:

Իր անունով արձանագրուած եւ այլեւս իր կողմէ անձըղելի արտայայտութեանց մէջ բաւական չարչարուեցաւ Սիրունիի յիշատակը, եւ սրովհետեւ արզար պիտի չըլլար կամայական վերագրումներու այդ ծիրին մէջ՝ պահել իր անձը, կ'արասպրենք քանի մը հատուածներ՝ «Հայրենիք» ամսագրին մէջ յոյնոգարար 1924ին եւ 25ին յոյս ընծայած իր երկու գրութիւններէն, առաջինը՝ Է. Ակնունիի նուիրուած, երկրորդը՝ «Ազատամարտ»ի սերունդին:

Սիրունիի մտքին մէջ օտար շնորհի մը զինը չէր հայրենի աշխարհին ո՛չ գոյութիւնը եւ ոչ ալ ծագկումը, այլ՝ սերունդի մը տեսիլքին մարմնացումն էին անոնք ու շարունակութիւնը, ընծա՛ն՝ վեմացը պատկերացուած կիսաստուածներուն անհանգիստ ու շատյլ ուղիին, սրուն հանդէպ տածած իր հիացումին մէջ փակեց ան իր աչքերը...



Ես կը հիանայի մանուսնդ եղբայրական կապին համար մեր երէց ընկերներուն: Մանկական, անուշ բան մը կար անոնց փոխադարձ սիրոյն մէջ: Դուրսը չէիր դանկեր տատնել դուրգուրանք մը մարդոց մէջ: Ու այս օրերուն, երբ կեանքը յգրճեց մեր սրտի ու մաքր կազերը, երջանկութիւն է ինծի համար հին օրերը միաքս բերել, ու անոնց քաղցրութիւնը:

Քաղաքական կուսակցութեան մը եւ իր ծրագրին ուժովը չէ, որ միացեր էին անոնց հոգիները: Շատ փորուն պիտի ըլլար քաղաքական, անտեսական դուստնանքներու հիւսած կապը հոգիներու միջեւ: Չտեսնուող, չըշտափուող յուսութիւն մը կար, որ բոլորին կը հատարէր իր դիւթական ուժը: Այդ յուսութիւնը մեր ցեղին սրտէն, հայրենի հոգին ընդերքներէն կու դար:

Ան էր, որ Դաշնակցութեան ուժը կը կաղմէր: Ոչ մէկ ծրագրի վրայ դրուած էր անոր անունը. ս'չ միթիւններու, ոչ ալ կուսակցական ժողովներու մէջ անոր գովքը կ'ընէին, բայց սոն քանդակուած էր ամէնուն հոգիին խորը, որ գաղանի կ'անցնէր մէկէն միւսին:

Հայ ցեղին առհասարակ ընտրողն էր ան, ապրելու, տեսելու կամքը, եւ ս'էրար՝ հասնելու ազատութեան արշալոյսին: Ի գուր է գայն փնտռել ծրագրերնու, բանաձեւերու, շրջաբերականներու մէջ: Դաշնակցութեան անդիր նպատակն էր ան, հայ ժողովուրդին ազատագրութիւնը: Մեր երէց ընկերներէն բոլորը կը հաւատային անոր, կը ձգտէին անոր՝ առանց շարքերուն բան մը ըսելու:

Քաղաքական կուսակցութիւնները ծրագրի մը վրայ կը յենուն, եւ անոր կիրարկութեան մէջ է, որ համախոհներու միջեւ տարակարծութիւն կը մտնէ: Դաշնակցութեան մէջ ընդհակառակն է: Քաղաքական եւ ընկերային տարբեր դաւանանքի տէր մարդիկ՝ միացած էին դործի մէջ: Կեանքն էր, որ կը համախմբէր ճիւղերը: Ու հայ ժողովուրդի ճակատադիրը միակ ուղեցոյցն էր Դաշնակցութեան: Հայ ժողովուրդը, իր դարաւոր ցաւովն ու երազանքովը ինքն էր, որ կը քշէր Դաշնակցութիւնը:

Հայ ժողովուրդի բոլոր խաւերէն ու բոլոր դասերէն մարդիկ կային Դաշնակցութեան ծոցը, նոյնիսկ վարիչ շրջանակներուն մէջ: Հայ ժողովուրդին ճակատադիրը խալի չէր դնէր աշխատատեղին ու կղերին, քաղքենիին ու գիւղացիին միջեւ: Ու բոլորն ալ, բնադրով, Դաշնակցութեան մէջ կը փրկուէին իրենց զործելու աստարէզը:

Դաշնակցութիւնը սերունդ մըն էր, որ ծնաւ մէկէն ու հայ կեանքը փոթորիկեց: Ան իր ուժը հարկադրեց բոլորին: Ու երեսուն տարի ան հայ կեանքին իշխեց: Բայց ուրիշ՞ կու գայ այդ ուժը: Ծրագրիները թուղթի կը տարներ են. կը շինուին ու կը պատուեն, ոչ ալ մաքով հսկաներ էին, որ Դաշնակցութիւնը մեծցոյցին: Դաշնակցութիւնը մեծ եղաւ, սրտհեռու իրեն կեանք տուողները տեսիլքը տեսան ու հաւատացին անոր գալուստին: Տեսանողներու ու հաւատացողներու սերունդն էր Դաշնակցութիւնը:



ՍԻՐՈՅ ԵՒ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՆՈՒԱԳ

(Յ. Գ Ե Ղ Ա Ր Գ)

«Սիրոյ եւ մեղքի համամուագ»ը բանաստեղծ Յ. Գեղարքի վերջին հատորն է, որ լոյս տեսաւ անցեալ տարեշրջանին (1977): Հարիւր յիսուներկու էջերէ լողկացած այս դիրքը կը ներկայանայ հետեւեալ ութ ենթատարադիրներով. «Նախընթաց», «Խաչելու քիւն», «Խուճկ ու աղօթք», «Սէր (Ա. Եւայակամ. Բ. Ոսկի մատանին)», «Սանիկի կրօնախոր», «Հայացումներ», «Էլեոն ի վեր Մասիս» եւ «Վերքեր»:

«Սիրոյ եւ մեղքի համամուագ»ը համարում մըն է քնարաչառնէ ողբումներով գրուած չարք մը բանաստեղծութիւններու, որոնք իրրեւ թեմա կընդգրկեն սէրը, վիշտը, մահուան յաճախումը, «Անհունի խորտարգում» լիանուլու ծարուր, մարդ անհատի ինքնութիւնը որոնող աղաատարազձ ճրգատու մը եւ, վերջապէս, կարօտը անցեալին եւ անցելույնը մէջն մէկ պահ տրտման առօրեայի մը վերածելու իղձը:

Հատորին առաջին իսկ բանաստեղծութեամբ ակնկերու է այն իրողութիւնը, թէ առօրեայ կեանքէն ալ աշխարհ մը փոխադրուելու անդուտ կարօտը կ'աղբի Յ. Գեղարք: Ան կ'ուզէ լիանալ անվերձանելի խորհուրդովը աստղերուն, շինչի հեշտաւէտ բորժուիքը «ճիւղաւոր պարակ»ի մը, յանձնուիլ թաց ծովերու քմայքին՝ վերագրանելու համար կրօններու կրօնական կողմն: Բայց աստղաթափէ մէջն ձգտում ի դերու կ'անցնի իր մէջ, որովհետեւ «սէրը, քաղցը եւ ազատութիւնը» մեզ կը բերուին երգի յուրձանին հունով միայն, եւ թէ՛ երգի ընձեռած սահմանագոյնը հրահարուողութեամբ կը յայտնաբերուի դեղեցիկը, բացարձակը եւ «հոգեզմայլ խորհուրդը կեանքին»:

«Խաչելու քիւն» ենթատարադիրը կրող բաժինով՝ Յ. Գեղարք կը ցուցարբէ կեանքի յաւետեւ մեկնարանութիւն մը: Անցեալը իր կրօնական ճշմարտութեամբ ու երազային շնորհներով կը կողմէնէ այն զգացումն ենթահողը, որուն վրայ կը հիմնուողը մարդու եւ Ժամանակի հանդէպ բանաստեղծին ըմբռնումն ու հայեցակէտը: Ան կ'օգտակարէ ընթացեալ ծանօթ բոլոր երեսներէն — ծովը, հովը, անտառը, լուսինը, շողն ու շուրջ, ծիան ու ծղրիթը — դրսեւորելու համար «իմ օրերու կարօտ» մը կամ «մարդու սիրտը», լուսին ուղղուած «երազեր» մը կամ «փրշրբում պիտի» մը: Իւրաքանչիւր տող կամ պատկեր-

ըսուր արատաշարութիւն իր տկունքը կ'անէ անցեալի հանդէպ Յ. Գեղարքի սասած կարօտի այն զգացումն, որ կը յուշերգուի անկեղծ խառնափնտրութեամբ:

«Խուճկ ու աղօթք» բաժինը պարտադրական պայմաններու տակ յղացուած բանաստեղծութեանց շարք մըն է, ձօնուած՝ Երջանկայիշատակ Զարեհ Ա. Վահաբաբի, ինչպէս նաեւ Ագրայեանի, Կոնստանտինի, Ն. Սարգիսեանի, Եղ. Պոյաճեանի, Պ. Սեւակի, Է. Է. Կարմիրի եւ Սարգիս Աճեանի յիշատակին: Հեղինակը արագափնտրուած կը նշէ հողի, մտքի, երգի եւ գրչի վերադիւրեւ մշակներէն իւրաքանչիւրին անձին եւ նկարագրին բարեմասնութիւնները, յանդէպ այն կրօնականութեան, թէ մարդու հոգեմտուր աշխարհէն մեր գիտակցութեան փոխանցուած յիշատակն է, որ կը վերածէ կեանքը ըմբռնելի իմացումի մը:

«Սէր» ենթատարադիրը կրող բանաստեղծութիւնները կը յայտնաբերուին զոյգ ճիւղաւորումներով՝ «Լուսակամ» եւ «Ոսկի մատանին»:

«Եւայակամ»ը մեղաւոր զգացումներու թաղանթն է մը կը քաղաքի մը, որ բանաստեղծը կը քնարեկէ սիրոյ եւ կարօտի ապրումներ, որոնք որոշ անդրադարձումներով կը բացուին անվերապարձ ոչնչու. խաչմերուկին:

«Ոսկի մատանին» բանաստեղծութեան մը ութմ կը յիշատակուին մէկ արձագանքն է: Անոր իւրաքանչիւր տողը կը մասնէ գոտրթ արամադրութիւն մը, ինչպէս կը յայտնուի հետեւեալ տողերէն՝

Տալ ու պայծառ
Ձեռքդ, մանուկ,
Վերցուց վրջուի վիճէն խորանկ՝
Սի'րարս, դարձուց՝ աստեղատու:

Հատորին մէկ մասը արտաստուածն է կամ վերահրատարակութիւնը «Սանիկի կրօնախոր» խորտարգում համանուն այն դարձին, որ լոյս տեսաւ նախանցեալ տարեշրջանին: Յիշեալ բաժինը՝ («Սանիկի կրօնախոր» եւ «Հայացումներ») իր ստեղծարարական թէ թարգմանչական տուեալներով անմիջական բխումը կը հանդիսանայ լիւրանանեան արիւնտա իրադարձութեանց եւ ճղմտաժային այն օրերուն, որոնց բնթայքին երկիր մը ամբողջ իր Ժողովուրդով եւ մշակութեամբ մասնաւեցաւ մահուան սարսափին: Այս ստեղծութեամբ՝

Յ. Գեղարդ կատարած է կարգ մը հայացումներ օտար գրողներու այն դարձերէն, որոնք կեանքի եւ մահուան շուրջ իրենց յայտայտած բանաստեղծական խորհրդածութիւններով յանկեայ նըշանակութիւն մը կու տան արձաւիրքով յատկանշուած հասարի նիւթին եւ մթնոլորտին:

«Լեռն ի վեր Բասիս» բաժինը լեցնող բանաստեղծութիւնները ներշնչուած են ազգային արիննոտ եւ արեւոտ պայմաններէն, ուր Յ. Գեղարդ կը հակադրէ Սարգսրապօտի յայթոյսու սուգ-մերդը կը հակադրէ ապրիլեան եղերայոյզ գիշերին: Եւ հակասակ սփռութեան ներկայ անորոշ իրականութեան, ուր՝

Ձիգերու պէս պրկուած ծառեր
Հնվիրունց դէմ, գրիկը մութին
Կը զպարուին ցառով մ'անկուսն...

Տեղիներ կը հաւատարմացրէ այն վճռական որոշումը, թէ հասարական մեր կեանքին դոյաթեան պայքարը ընկերով պիտի չստեղծուի: Սոցիալ-նոստալի ներհուն «կոտակ»ին եւ մեարտական անշեղ ռոմանտիկ անմիջական թելադրականութեամբ դոտեպիկնոյ՝ ան կը հաստատուի յայթոյսակի հրաշունջ երգին, որ երգն է հասարակ պայմանուար եւ արիւնով նոսրացածուած մեծ իրագործումներու...:

«Սիրոյ եւ մեղքի համաձայնաց»ը հատորին մէջ նկատելի են կարգ մը ուշադրու առջեր, որոնք յատկանշական են մարդասիրական դիմ մը յայտնարեկըստ արժանիքով: Բողոքի է, որ բանաստեղծը զարգացնէ այդ պիծը, սրբակցի ստեղծագործական իր յառաջիկայ աշխատանքին նախարբերէ նիւթի եւ իմաստի նոր տուեաներով շեղարուած համաձայնացի մշակուսի խոր եւ խորեմաց տարագրութիւն...:


ՅԱԿՈՅ ՄԱՆՈՒԿԻԱՆ

THE URCHIN

John Murray Publishing House, 1978,
186 p. p.

Քերտը Պատրեանի «Լալուար» գործ մըն է, որ կը ստեղծէ ճանարկելի բազմութիւ երեւոյթներ, որոնք կրնան օգտակար ըլլալ թէ՛ օտար լեզուով հրատարակելի հետազոյզ գիրքերու եւ թէ՛ հայկական հարցի բարդալուծման համար:

Ընթերցողին հրամայուածը վիպակութիւն մըն է, որ իրեն զբաղուած սեռ իր նախընթացը ունի մինչեւ երկրորդ Համաշխարհային պատերազմ հրատարակուած, առաւել կամ նուազ չափով յաջողած հայերէն հրատարակութիւններով: Պատմութիւնը, բնականորաբար, դրեթէ նայն դժով կը զարգանայ միշտ, անձնական վարձատուութեան մը բնութիւնէն փորձելով հաւտարակմանութեան մը առաջանքը եւ անպատմելի սղբերգութիւնը պատ-



կերպանել: Ճիշդ է, որ Պատրեան մեծ յուսակնութիւններ չունի եւ իր փոքր ներածականին մէջ կը յայտնէ, թէ այս նիւթին կապակցութեամբ յարկելի պատմական եւ այլ ուսումնասիրութիւններ կատարուած են օտար լեզուներով, սակայն փաստը այն է, որ հատորը լոյս առած եւ հանրային սեփականութիւն դարձած է ոչ լիւս:

Այս անգամ ինը տարեկան տղա մը պատմութիւնը ունի, որ գերդաստանի անդամներուն հետ կ'ապրի տարագրութեան արձաւիրքները եւ իր մանկական հետաքրքրութեամբ ու հայկայնութիւնով սկստանաւ կ'ըլլայ անոր պոստային յատկանիշները կազմած բազմութիւ երեաներուն: Սերտտարայէն, սրբէ տեղահանուած են, մինչեւ Հալէպ կամ Պերէճիք, ուր գլխաւորաբար կեդրոնացած են իրենց պլիաւոր փորձառութիւնները (...), շուրջ մէկ շարքեր կը կազմէ միայն 182 էջոց պատմութեան: Ասկէ անցին զոյաւանելու եւ մինչեւ Քանաթա մեկնելու ընտանեկան ու անձնական պայքարն է, որ, հետաքրքրական ըլլալով հանդերձ, ընթերցողին ուշադրութիւնը այլ սեւեռակետի մը վրայ կը կեդրոնացնէ: Ճիշդ է, որ դոյաթեան ու վերականգնումի պայքարը ամբողջ սերունդի մը պատմութիւնը եղաւ եւ Քերտըի հոգեբանական գործադրումը իր տարբերային տեղին հետ, կեանքի դանդաղան հանդրասնները եւ դեպքումները մինչեւ Հալէպ, Պոլիս, Պալիպիա եւ Քանաթա, յաճախ մարդկային փրկուած պահեր կը ստեղծեն, սակայն անոնց տրուած համեմատ-

տական ծառայն է, որ կը կարծենք թէ արդար չէ:

Ստեփանն այս բոլոր հարցերը հիմնականորեն կը բխեն հեղինակին մտայնությունից: «Առաջ» դեպքում հարաբերական երկ մը չէ, մինչև իսկ յաշարական մտկայարարի վրայ: Միս կողմէ, դեպքում փաստարկում ու մտայնում չունենալով՝ նաև վկայութիւն չի կրնար նկատուիլ, հակառակ անոր, որ այս բոլորն զուրկ, որոշ արտաբնական կրնայ ստեղծել: Ստեփանն, ինչպէս իր նախախորհուրդը, զրուած է սեպ մը, որ աստուծոյն զուրկ կ'ստեղծուի, մինչ վերջին տարիներու այսօրվան հրատարակութիւնները՝ ինչպէս Մայր Աթոռ Սուրբ Երանայի «Ինչպիսիք Արարատ»-ը, որ անկախ իր արհեստագործ զրկէն, անձնական փորձաքննութիւն մը ըլլալով հանգեցած, արմատներու փնտառութիւն, ծանօթացման ու վերլուծողական համոզելի շնորհ մը սենի, կամ պատմական աստիճանականութեամբ զրուած Ռ. Յովհաննէսեանի եւ Լ. Նարայանեանի ստեղծագործութիւնները այլևս սոսիթ չեն տար զուրկ կամ խճողահարոնք շարժելու:

Գծուար է հարկաւ Պատեքեանի սերունդէն նման մտայնում պահանջել, ինչպէս զժուար է աստիճանականութիւն կամ սարքեր կեցուածք ակնկալել մեր անտեսով, որ այդ բոլորը չէ ճանչցած, ինչ որ մարդկայնորեն անընդունելի պիտի դարձնէ քննադատութիւնը, աստիճան Սփիւռք անջած է այդ հանդիսանքը եւ Պատեքեանի պարզ սուշացած վկայութեան մը աստիճանութիւնը կը ձգէ:

Յ. Գ.

«LAMENTATIONS OF NAREK»

Mashtots Press, 1977, 96 p. p.

Միշտ Գիւտեան լայն վաստակ սենի թարգմանական գրականութիւնէն ներս, հակառակ անոր, որ ցարգ ներկայացուցած դարձերը, իրենք իրենց մէջ անհաստար արժէքներ են, մանաւանդ՝ եթէ նկատի ունենանք անդլիական դրականութիւնը եւ անդլիակցի ընթերցողը, որ մշակութային հարուստ ենթաստիճանի տէր է եւ իսկուպէս ինքնուրուար կարծեր կը սպասէ:

Այս իմաստով՝ Իսահակեանի մը դարձերուն ներկայացումը կրնար շատ ու շահեկան ըլլալ:

Անկախութեամբ, որ «Ինչպիսիք» թարգմանութիւնը Գիւտեանի ցարգ կատարած աշխատանքներուն ամէնէն զժուարն ու յանգուզն է, հակառակ անոր, որ կը պարփակէ «Մատեան»-ի տառքին 25 գլուխները միայն:

Ազատ աղաչագրութեամբ կատարուած այս գործին համար կարծէք սէնչ ինչպէս լուծուած է: Ճէյմս Արքայի տարբերակին վրայ հիմնուած Աստուածաշունչի ակնարկութիւնները, ճշգրտութեան մասնագետութեամբ արդարած բժարանդիւր աշ-

GRIGOR NAREKATSI
LAMENTATIONS
OF
NAREK

Mystic Soliloquies with God

Edited and translated by Misses Kadian

խտանքը, ըստակերպերու ու սծային կարգ մը յատկանիշներու հարազատութիւնը պահելու ճիշտութեամբ, թարգմանիչին ղեկարուեցողական մտահոգութիւնները մասնազ վկայութիւններ են:


Անկախ ասանցմէ, գիրքին ներածականը ամփոփ տեղեկութիւններ կու տայ Գրեգոր Նարեկայի մասին եւ ընթերցողը կը գնէ ս'յն մթնալուսին մէջ, որուն ընդմէջէն «Մատեան ողբերգութեան» կ'ընկալուի հայ ժողովուրդին կողմէ: Իսկ հատորին վերջաբանութեան, իրաքանչիւր աստուածաշնչական ակնարկութիւն, գլուխ աս զլուսի տանձինն կը նշուի, ինչ որ յաւելեալ լուսարձակութեան սոսիթ կ'ընծայէ:

Բնականաբար, միջնադարեան կամ դասակարանացած սեւէ հեղինակ կարելի է երկու ձևով ներկայացնել: Կան ղիտական հրատարակութիւնները, սը սող ու սող հարազատութիւնը եւ զործին վերարեբեալ վաւերացողութիւնը ու սղբիւրներ կը յիշուին, եւ ղեկարուեցողական հրատարակութիւնները, սը աւելի լայն ազդուութիւններ կ'ունենայ թարգմանիչը:

Վաղէն Գէորգեանի նախընթացը խօսուն էր ինչքին: Որոշ բաժիններու յապաւումով եւ զործին ղեկարուեցողական վերատեսչումով ունեցանք աշխարհարար «Ինչպիսիք» մը, որ հարազատ ըլլալով հանդերձ բնագրին, շատ բան կ'ընար թերագրել քաներարգ զարու ընթերցողին:

Գիւտեան անդլիակցի սկսած է հիմնական գործին, մեղի կը մնայ ակնկալել ժամանակակից ղեկարուեցողական գործին վերարտադրութիւնը՝ Գէորգեանի օրինակով:

Յ. Գ.



SALVADOR DALI

ՍԱՆՎԱՏՈՐ ՏԱԼԻ

«Նիկիաբո մակալին»ի մէջ Մարի-Քրիսթին Լիւսինս աստղայրած է Մարլիտտա Տալիի գործերէն կազմուած հաւաքածոյի մը, առ այդ հրատարակուող զերբնն եւ յարակից խնդիրներու մասին յօդուած մը, որ կը պարզէ արուեստի ոչ խորհին մէջ խիստ հետաքրքրական երևույթ մը:

Զհաշուած հռչակաւոր արուեստագէտը, յօդուածին հերոսը կը հանդիսանայ Ա. Բէյնայտա Մարս, մէկը Տալիի երկրպագուներէն, որ 1942 թուականին Օհիո նահանգի Քլիվլենտ քաղաքին մէջ հիմը գրած է «Մարլիտտա Տալի» անունով թանգարանի մը, լեզուած՝ միմիայն անոր գործերէն, որոնք 70 միլիոն տոլար կ'արժեն այսօր եւ կը վալենն տարին 32 հազար այցելուներու հիացումը:

Ա. Բէյնայտա Մարսի կողմած աստղայրական այս հաւաքածոն կը հաշուէ 93 իրօնկար եւ համարեալ՝ ամբողջութիւնը սղանայի վարպետին կրօնիքական աշխատանքներուն, առաւել՝ 300 ջրաներկ եւ գծանարակներէ:

Մարսի հիմնած ապրիական թանգարանին մէջ կը գտնուին 1924էն առաջ կրօնարժուած 19 պատասաներ, 40 հաստ՝ 1925էն 1936 թուականներուն աստղայրուած, իսկ 1937էն սկսեալ մէկնազուող պատասաններուն թիւը սկսած է նուազիլ եւ ասրեկան հաշուով երբեք չէ անցած երեքէն անդին:

Այս ստիժով, «Ճիւղիփաշչի» հրատարակչութիւնը, ման Սօսէի խմբագրութեամբ ի մասոյ լայս պիտի բնծայէ հասար մը, Մարսին բնծայած իր յարգանքի տուրք, որուն արժանի կը համարուի հաւաքածոն կազմող իր անձնաւորութիւնը, անոր համար մանուանող, որ Տալիի հանդէպ ասծած անոր իսր համարումը շահախրնդրական ոչ մէկ նպատակ կը հետապնդէ:

Իր կարգին, արկին էլէննոր Մարս անդերէնի թորցմանած է Տալիի բոլոր գրութիւնները եւ բոլոր մանկրափիները:

Հրատարակչուան այս անխնջ աշխատանքը մեծ մասամբ կը բացայայտէ այն թափանքը, զոր ձգած է սղանայի վարպետը ամերիկեան բայն հատարակութեան վրայ:

ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԸ

Այս ստիժի Նոպէլեան Գրական Մրցանակը շնորհուեցաւ 74ամեայ հրեայ գրող Այցեկ Սինկլըրին:

Սինկլըր ծնած է Լեհաստան, ուր եւ անցուցած է իր կեանքին տառջին շրջանը, իսկ բուռասուն տարիներէ ի վեր կ'ապրի ու կը սանդատուործէ Միացեալ Նահանգներու մէջ: Ան իր բոլոր զերբերը գրած է Արեւելոն եւրոպայի հրեաներուն գործածած բարբառով (եռտիշ) եւ հերոսները բնորոծ է նայն շրջանակներէն, պատմեալ անոնց քաղաքային թէ գիւղական կեանքը՝ աղքատութեան, հարածանքներու, կոյր հաւատքի եւ նոխտաշարումներու միմայրութի մը մէջ:

Մեկնորանելով մրցանակը Այցեկ Սինկլըրին շնորհելու շահաւան ահազեմիտային սրտումը, պատակարարի անդամներէն Լարշ Քիւլենտէն կ'ըսէ:

«Ես կարգացած եմ Սինկլըրի բոլոր վէպերն ու պատմուածքները, արձմէ քարգամանուած եմ անգլիերէնի եւ կը նախամիմ անոնց, որոնք դեռ պիտի կարդան անոր սանդագարծութիւնները: Նոպէլեան Մրցանակի խնդիրներէն մէկը սանդագարծական վսեմ արժանիքներով օժտուած, այլ կամեմաւարար անշայտ մնացած կեղիականերու վրայ ուշադրութիւնը կ'կարծանցնելու պարտքն է: Ժամանակակից գրականութիւնը խոցելի է առեւտրականացմամբ եւ իրէ Նոպէլեան Մրցանակը կ'արեհայ կովալընդի առեւտրականացման այդ վտանգը, ոպա ուրեմն, անոր նպատակը իրագործուած պիտի է կամարել»:

Հակադրուելով այս անասիտային եւ ոչ դրական մշտմերով անշայտ դրոյններ պատկելու Նոպէլեան վերջին տարիներու մարտանքներուն, արեւմտեան մամուլին մեծ մասը կ'ատողի սպջար մը սկսաւ անոր գէմ, ընդգծելով մրցանակը համաշխարհային ճանաչում գտած գէմքերուն միայն յատկացելու տեսակէտը:



ԼԻՏԻԱ ՉՈՒՔՈՎՍԿԱՅԱ

«Փեն քլեպ»ը, որ ստեղծուեցաւ 1921 թն եւ ՄԱԿի կրթութեան, գիտութեան եւ մշակուցի հարցերով պարտադր ինտենսիտի կողմէ ճանչցրւած գրական միակ կողմակերպութիւնն է, Ֆրանսական բաժանմանքի իր անդամներուն վըրայ վերջերս աւելցուց նաեւ այս անունը, Լիտիա Չուքովսկայա :

«Լագիլն»ի բնթերցողներուն ըտրտոյին անձանօթ չէ Լիտիա Չուքովսկայա: Երեք տարի առաջ կողմուած պղտիկ էջի մը վրայ տրուած էին կարդ մը տեղեկութիւններ իր գրական անձին եւ խորհրդային գրողներու միութենէն արտաքսման պատճառներուն մասին:

Գրական քննադատ, բանաստեղծ ու գրող Լի-

տիա Չուքովսկայայի ամէնէն տարածուն գործը կը համարուի «Դատարկուած տունը», որ թարգմանուած է թագմօթիւ լեզուներու, իսկ իր վըրայ թնամութիւն հրաւիրող աստիճին հատորը հանդիտացաւ տրդարութեան սրտման նուիրուած «Ջրամոյցը», որուն յաջորդեց հարածեալ մտուարականներուն ի պաշտպանութիւն ստորադրուած «ժողովուրդի վայրայքը» խորտղրուած յօդուածը, վերջին պատճառը իր արտաքսման:

«Փեն քլեպ»ի անդամ բնարուերուն առիթով, վրտտիք Մաքսիմով կրտարած է հետեւեալ յայտարարութիւնը:

«Բաճի դեռ ողջ են Լիտիա Չուքովսկայայի մեան դէմքեր, Ռուսաստանի մէջ չի մարիք հոգեկան դիմադրութեան արտադրիցը»:



ԱՆՏՐԷ ՎՈԶՆԵՍԵՆՍԿԻ ՊՈՍԹՐԵՆԻ ՄԷՋ

Ռուս անուանի բանաստեղծ Անտրէ Վոզնեսենսկի Պոսթրեն պիտի գտնուի եւ կը յիշ պիտի ունենայ տեղւոյն համալարանի Հայտըն հանդիստարահին մէջ, նոյեմբեր 23 ի երեկոյեան:

Ռուս բանաստեղծը Պոսթրեն կ'երթայ մասնաւոր հրաւերովը Նիւ Ինկլընտի բանաստեղծներու ընկերակցութեան նախագահ Տիանա Տէր Յովհաննիսեանի:

Իրեն կ'ընկերանայ ամերիկացի բանաստեղծ Ալէն Կինդլուրի:

Իր կը յիշ ընթացքին՝ Վոզնեսենսկի պիտի կարդայ հայ ժողովուրդին նուիրուած երկու բանաստեղծութիւններ, որոնցմէ մէկը գրուած է վերջերս եւ անդլերէնի վերածուած Տիանա Տէր Յովհաննիսեանի կողմէ:

Երեկոյթի կը կարծուի բլլալ գրական բացատիկ դէպք մը՝ Պոսթրենի մէջ:

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՆԷ

Մեծանուն գրագէտին 70ամեակին առիքով միջազգային,
հայրենի եւ սփռաբնակ մամուլի էջերէն կազմուած

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒՒԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՀԵՏ

ԱՆՈՒՆ ՀԱՏՈՐԸ

300 էջ
13 հանդիպում
13 լուսանկար
13 վկայութիւն

Խմբագիր՝ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ԼԻՐԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 5 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

•
PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•
Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

•
ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հիտաձայն՝ 296898